Քննելով հանրային մտահոգությունների բազմազանությունը.

սոցիալականը
խաղաղությունը
տարածաշրջանը

Երևան, 2023

Գիրքն ամփոփում է եռափուլ խորքային սոցիոլոգիական հետազոտությունը, որ իրականացրել ենք 2022 թվականին: Այն քննում է հետպատերազմյան համատեքստում հասարակական մտահոգությունների ընդգրկույթը՝ սոցիալ-տնտեսական և ներքաղաքական ոլորտներից մինչև տարածաշրջան, տարածաշրջանում հարևանների հետ հարաբերություններ, խաղաղություն և ապագա, բացահայտում խաղաղության, տարածաշրջանի և Հայաստանի սուբյեկտության շուրջ գերիշխող քաղաքական դիսկուրսները և փորձագիտական մոտեցումները:

ՀՏԴ 316:32
ԳՄԴ 60.5+66.2
Խ 171

Հետազոտողներ՝
Շուշան Աբրահամյան, Մարիամ Խալաթյան, Արփի Մանուսյան, Սոնա Մանուսյան, Նվարդ Մարգարյան, Տաթևիկ Մարգարյան

Օգնականներ՝
Տաթև Բալդրյան, Ագապի Իվանյան, Շահանե Խաչատրյան, Հռիփսիմե Կիզոգյան, Լիլիթ Հակոբյան

Մեդիա նյութերի քարտեզագրումը՝
Շուշան Աբրահամյանի, Տաթև Բալդրյանի

Հետազոտող հեղինակներ՝
Մարիամ Խալաթյան, Արփի Մանուսյան, Նվարդ Մարգարյան

Համադրական վերլուծությունը և խմբագրումը՝
Արփի Մանուսյանի

Սրբագրումը՝
Ազնիվ Նասլյանի

Պատկերազարդումները՝
Հարություն Թումաղյանի

Գրքի շարվածքը և ձևավորումը՝
Նորա Գալֆայանի

Խ 171 Խալաթյան Մ., Մանուսյան Ա., Մարգարյան Ն.
Քննելով հանրային մտահոգությունների բազմազանությունը. սոցիալ-տնտեսականը | խաղաղությունը | տարածաշրջանը / Մ. Խալաթյան, Ա. Մանուսյան, Ն. Մարգարյան.- Եր.: «Սոցիոսկոպ» ՀԿ, 2023.- 168 էջ:

ՀՏԴ 316:32
ԳՄԴ 60.5+66.2

Հետազոտությունն իրականացվել է National Endowment for Democracy (NED)-ի ֆինանսական աջակցությամբ: Վերլուծության համար պատասխանատու է «Սոցիոսկոպ» ՀԿ-ն: Վերլուծության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել ուսումնասիրության աշխատանքներում ներգրավված այլ հետազոտողների, ինչպես նաև NED-ի տեսակետների հետ:

ISBN 978-9939-1-1646-4

© Սոցիոսկոպ ՀԿ, 2023

Բովանդակություն

Մուտք. հետազոտության գաղափարական և մեթոդաբանական շրջանակը 7

Ներածության փոխարեն. խաղաղության և տարածաշրջանային խաղաղ համակեցության տիրապետող դիսկուրսները հանրային-քաղաքական դաշտում 17

ՄԱՍ 1 33
Աղքատությունից մինչև համայնքների խոշորացում. հանրային մտահոգությունների ընդգրկույթը

1.1 Հանրության սոցիալ-տնտեսական մտահոգությունները և աղքատությունը 38

1.2 Կրթությունը և առողջապահությունը՝ շատ քննարկվող խնդիրներ 47

1.3 Համայնքների խոշորացումը և հանրային շահը 56

1.4 Բանակը՝ աշխատատեղ 59

ՄԱՍ 2 63
Իդեալականացված կարգուկանոնի հանրային ցանկությունը

2.1 Ստալինի նոստալգիան 65

2.2 Ներքին խաղաղության հարցը 73

2.3 Խաղաղության ներկա դրությունը և խաղաղության սահմանման փորձերը 81

2.4 Խաղաղության սահմանման տարբեր չափումները 88

ՄԱՍ 3 **95**
Տարածաշրջան և ապագա

3.1 Հայաստանը և տարածաշրջանը. սահմաններ և հարաբերություններ **97**

3.2 Հայաստանի դերը տարածաշրջանում **111**

3.3 Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հանրային ընկալումները **124**

3.4 Տարածաշրջանում հաղորդակցությունների ապաշրջափակումը և վերաբացումը **131**

3.5 Ապագան պատերազմից հետո **136**

Ամփոփման փոխարեն. անդրադառնալով փոփոխության սուբյեկտին **147**

Գրականություն **153**

Ծանոթագրություններ **159**

Մուտք.

հետազոտության գաղափարական և մեթոդա-բանական շրջանակը

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, ի թիվս այլ բարդ և կարևոր հարցադրումների, առաջ բերեց նաև տարածաշրջանին և խաղաղ համակեցությանը փոխառնչվող հարցեր, որոնք արդեն երկու տարի է, ինչ դարձել են հանրային, քաղաքական, մեդիա և փորձագիտական դաշտի քննարկման առարկան: Առայժմ մի կողմ թողնելով այդ քննարկումների բովանդակային կողմը՝ ընդգծենք, որ թերևս պատերազմի, դրան հետևած լարված ներքաղաքական իրավիճակի, այնուհետև արտահերթ խորհրդարանական ընտրությունների հետևանքով այս հարցերը հանրային-քաղաքական դիսկուրսի տարիների լուսանցքից եկան առաջնաբեմ՝ հայտնվելով քաղաքական և հասարակական հարաբերությունների և անցուդարձի առանցքում:

Խաղաղության և տարածաշրջանային խաղաղ համակեցության հարցերը մտածվում և ձևակերպվում են սոցիալ-քաղաքական համատեքստի հարափոփոխության պայմաններում. մի կողմից՝ կոնֆլիկտի շարունակական սրացումների, մյուս կողմից՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրմանը և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը ուղղված ընթացիկ գործընթացների, հանրային տագնապների և տարաբնույթ մտահոգությունների հետնախորքում:

Այստեղ տեղին է հղում անել Պիեռ Բուրդիոյի՝ «հիստերեզիս» (ֆիզիկայում՝ համակարգի վիճակի կախվածությունը իր պատմությունից) բազմակողմանի հասկացության սոցիոլոգիական օգտագործմանը, որով հեղինակը նկատի էր առնում անկայուն ժամանակներում ուսումնասիրվող դաշտի և հաբիտուսի միջև տեղաշարժերի և խզումների հետազոտման առանձնահատկությունները՝ «մասնավորապես, երբ դաշտը ենթարկվում է մեծ ճգնաժամի, և դրա օրինաչափությունները (նույնիսկ կանոնները) խորապես փոխվում են» (Bourdieu, 2000: 160): Հարափոփոխ համատեքստի, լարումների և վայրիվերումների հետնախորքում ողջախոհության համակարգերը, սոցիալական հարաբերման ձևերը և աշխարհի հետ հարաբերման պրակտիկաները, որոնցով մենք՝ իբրև հասարակություն, սովոր ենք առաջնորդվելու, քիչ տեղին են թվում՝ հաճախ ստեղծելով զգացում կամ տպավորություն, որ ժամանակն ու իրադարձությունները չափազանց արագընթաց են ու քաոսային, իսկ մենք այդ հորձա-

նուտում կորցնում ենք իրականության հետ գործ ունենալու հենարանները:

Բայց և այնպես, սոցիալական իրականության դժվարությունների առջև բաց լինելը, դրանց առերեսվելը, դրանց հետ գործ ունենալու նոր կամ վերամտածված եղանակների փնտրտուքը և ջանքը կարևոր են, ունեն ինչպես անհատական, այնպես էլ հանրային չափումներ:

Այդ ջանքը նաև հետազոտող-հասարակագետինն է. հետևողականորեն ուսումնասիրել շարունակաբար փոխակերպվող, անորոշ և անկայուն սոցիալական դրությունը, որում ինքդ ապրում ես՝ դուրս գալով ինտելեկտուալ հարմարավետության գոտուց, ընդարձակելով ինքնաճանաչման սահմանները, քննելով ինքնըստինքյան ենթադրելի թվացող գերիշխող հավաքական գիտելիքը, մարտահրավեր նետելով դրան և ինքդ քեզ:

Այս բազմաբարդ ժամանակներում հետազոտության օբյեկտը սուբյեկտ դարձնելու գործողությամբ հնարավոր է որսալ հանրային հրատապ խնդիրներն ու մտահոգությունները, ճանաչել դրանք և ինքդ քեզ դրանցում՝ նույն հնարավորություններով և մարտահրավերներով, ինչ ունեն հետազոտության մասնակից սուբյեկտները: Սոցիալական կյանքին և համատեքստին զգայուն և հետևողականորեն հաղորդակից լինելու միջոցով այսօր հետազոտող-հասարակագետը կարող է ինչպես ուսումնասիրել հանրային գիտելիքը, որ ծնվում, վերաիմաստավորվում և վերամտածվում է հասարակական ու քաղաքական վայրիվերումների ժամանակ, այնպես էլ նպաստել հանրային-քաղաքական փոփոխությանը՝ տեղ բացելով ինքնաքննադատությանը և ինքնանդրադարձին:

Ուստի հետազոտական հետևողականության այս սկզբունքը գործադրելով՝ շարունակում ենք 2018 թվականից մեկնարկած ռազմի քննադատության և խաղաղության հարցերի հանրային ընկալումներին ուղղված հետազոտությունների շարքը, որ հրատարակել ենք բազմաթիվ հոդվածների, ինչպես նաև *«Հետահայաց. ձայներ պատերազմի և խաղաղության մասին»* (Խալաթյան, Մանուսյան (խմբ.), 2021), *«Պատերազմը, ապագայի անորոշությունը և խաղաղ համակեցությունը»* (Աբրահամյան, Խալաթյան, Մանուսյան (խմբ.), 2022) երկու գրքի տեսքով:

2018 թ. հեղափոխությանը հետևած կարճ ժամանակաշրջանը կարող ենք ձևակերպել իբրև հանրության շրջանում սեփական քաղաքական և սոցիալական պահանջն արտահայտելու և նոր պահանջներ ձևակերպելու հնարավորության ու ազատության, անհատի և հանրության նշանակալիության գիտակցման շրջան (Խալաթյան, Ժամակոչյան (խմբ.), 2019)։ Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, դրան հաջորդած ներքաղաքական և արտաքին քաղաքական լարումները, անկայունություններն ու անորոշությունները, սակայն, թուլացրել են հանրության [ինքնա]վստահությունը հասարակական ու քաղաքական կյանքում փոփոխության սուբյեկտ լինելու հանդեպ։ Ավելին՝ անցնող երկու-երեք տարիների հայաստանյան քաղաքականությունը և մեդիան ողողված են գերազանցապես Ղարաբաղյան երկրորդ պատերազմի, տարածաշրջանի և անվտանգության «մասնագիտացած» դիսկուրսներով (Խալաթյան, Մանուսյան, Մարգարյան, 2023), որոնք սահմանափակում են մեր հնարավորությունը՝ նկատելու հասարակական բազմազան մտահոգությունների ընդգրկույթը. մի՞թե հանրային խնդիրները սահմանափակված են միայն վերոնշյալ հարցերով կամ դրանց այնպիսի ձևակերպումներով և շրջանակումներով, որոնք ներկայացնում են փորձագիտական և քաղաքական խմբերը։

Այսպիսով՝ սոցիալական իրականության առջև բաց լինելու մղումով 2022 թվականի ընթացքում մենք իրականացրինք երեք փուլից բաղկացած խորքային սոցիոլոգիական ուսումնասիրություն, որը հնարավորություն տվեց վերհանելու խաղաղության, տարածաշրջանի և Հայաստանի քաղաքական սուբյեկտության շուրջ գերիշխող քաղաքական դիսկուրսները և փորձագիտական մոտեցումները, ինչպես նաև խորապես քննելու հետպատերազմյան իրադրության պայմաններում հասարակական մտահոգությունների բազմազանությունը։ Վերջինս ընդգրկում է սոցիալ-տնտեսականի և ներքաղաքականի ոլորտները, ինչպես նաև հանրային պատկերացումները և դիրքորոշումները տարածաշրջանի, տարածաշրջանում հարևանների հետ հարաբերությունների, խաղաղության և ապագայի շուրջ։

Մեր հետազոտությունն, ուրեմն, հնարավորություն է տալիս նկատելու գերիշխող քաղաքական դիսկուրսների և խնդիրների շրջանակումների և հասարակական մտահոգությունների ներկապնակի

միջև եղած ինչպես խզումները, այնպես էլ փոխհատումները և միմյանցից սնվող ազդեցությունները:

Ուսումնասիրությունը սկսեցինք քաղաքական դաշտում տիրապետող նարատիվների հավաքումից ու վերլուծությունից՝ հասկանալու համար, թե հայաստանյան քաղաքական դաշտի գերակա ուժերն ինչպես են ձևակերպում և սահմանում խաղաղությանն առնչվող հարցերը, ինչպես են դրանք տեղայնացնում իրենց քաղաքական շահի համատեքստում: Կարևոր ենք համարում ընդգծել, որ սա հանրային-քաղաքական դաշտի գերիշխող, այսինքն՝ լայն իմաստով գիտելիքի ստեղծման և հանրայնացման իշխանություն ունեցողների նարատիվների քննություն է: Մենք գիտակցում ենք, որ գիտելիքի ստեղծման և վերարտադրության անհավասարության պայմաններում քաղաքական դաշտում ամենաբարձր հնչող ձայները ճնշում և լռեցնում են հանրային-քաղաքական նվազ ուժ ունեցող այլ սուբյեկտների՝ դիսկուրս արտադրելու հնարավորությունները: Այս գիտակցումն ունենալով հանդերձ՝ ուսումնասիրել ենք իշխանական և ընդդիմադիր գործիչների, ինչպես նաև որոշ նախարարությունների (օրինակ՝ ՊՆ, ԱԳՆ) ներկայացուցիչների՝ գլխավորապես հարցազրույցի ձևաչափով արտադրված քաղաքական տեքստերը: Հավաքվել և վերլուծվել են այն գործիչների ելույթները, հարցազրույցները և հայտարարությունները, որոնք գերիշխող դեր ունեն խաղաղության ու տարածաշրջանի հարցերի առնչությամբ հանրային-քաղաքական դիսկուրս և գիտելիք ստեղծելու առումով: Տեքստերի հավաքումն իրականացրել ենք 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններից մինչև 2022 թ. սեպտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում՝ քարտեզագրելով 237 քաղաքական տեքստ, որոնց միջոցով դուրս ենք բերել տարածաշրջանին, խաղաղությանն ու խաղաղ համակեցությանն առնչվող, ինչպես նաև դրանց հետ փոխկապված այնպիսի հարցեր, ինչպիսիք են Հայաստանի քաղաքական սուբյեկտության սահմանները և ժողովրդավարության հետ կապը:

Զուգահեռաբար իրականացրել ենք 14 փորձագիտական հարցազրույց անկախ և ակադեմիական ոլորտը ներկայացնող հետազոտողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, քաղաքագետների և կոնֆլիկտի մասնագետների հետ: Փորձագիտական հարցազրույցների միջոցով փորձել ենք տեղայնաց-

նել Ղարաբաղյան կոնֆլիկտը, դրա շուրջ գերիշխող դիսկուրսները քաղաքական ու պատմական համատեքստերում: Փորձագիտական հարցազրույցների միջոցով դիտարկել ենք Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ազդեցությունները փոխակերպվող տարածաշրջանային հարաբերությունների, խաղաղ համակեցության հեռանկարների և Հայաստանի ապագայի վրա: Փորձագետների ընտրության հիմքում նրանց՝ Ղարաբաղյան կոնֆլիկտի հետազոտման ու հետևողական վերլուծության տարիների փորձն էր[1]: Փորձագիտական հարցազրույցներն իրականացրել ենք 2022 թ. մարտ-մայիսի ընթացքում:

Հանրությանն ականջալուր լինելու հետազոտական հետաքրքրությամբ երրորդ փուլում եղանք Հայաստանի քաղաքներում և գյուղական համայնքներում՝ ֆոկուսխմբային քննարկումներ անելու հանրային տարբեր շերտերի հետ: Ֆոկուսխմբային քննարկումների նպատակն էր դուրս բերել ներքաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին առնչվող հանրային մտահոգությունների ներկապնակը, տարածաշրջանի մասին պատկերացումները և տարածաշրջանում հարաբերությունների կարգավորման, ապագայի և խաղաղ համակեցության հանրային ըմբռնումները:

Տարածաշրջանի հանրային ընկալումները այս հետազոտության առանցքային բաղադրիչներից էին: Մենք հաճախ ենք խոսում տարածաշրջանի, տարածաշրջանում Հայաստանի և հարևան պետությունների համագործակցային կամ կոնֆլիկտային հարաբերությունների մասին, բայց տարածաշրջանի՝ հանրային ըմբռնումներին և ձևակերպումներին քիչ տեղ ենք տալիս. լայն իմաստով ինչպե՞ս են հայաստանցիները տեսնում տարածաշրջանը ու Հայաստանը դրանում, պետությունների և ժողովուրդների միջև ինչպիսի՞ հարաբերություններ և սահմաններ են նկատում:

Այս և այլ հարցերին անդրադառնալու համար կիրառել ենք փորձարարական մեթոդ՝ խնդրելով հետազոտության մասնակիցներին թղթի վրա պատկերել Հայաստանը տարածաշրջանում և աշխարհում:

Մարդիկ ազատ էին Հայաստանը և տարածաշրջանը հարաբերություններով, սահմաններով և դերերով պատկերացնելու և պատկերելու իրենց երևակայության և այն մեզ ներկայացնելու մեջ:

Երբեմն իբրև գիտելիքի ստուգում կամ նկարչություն ըմբռնվող այս փոքրիկ հետազոտական միջամտությունը արժանանում էր դիմադրության, մասնավորապես՝ տղամարդկանց կողմից: Տարածաշրջանի և դրանում Հայաստանի դերի մասին գերակա հանրային պատկերացումների որոշ նշումներ կգտնեք գրքի երրորդ մասում:



Իրականացրել ենք 23 ֆոկուսխմբային քննարկում, որից 4-ը՝ Երևանում, 19-ը՝ մարզերում: Յուրաքանչյուր մարզում[2] իրականացվել է 2 ֆոկուսխմբային քննարկում. մեկը՝ մարզկենտրոնում կամ խոշոր քաղաքում, երկրորդը՝ գյուղական համայնքում: Քաղաքային և գյուղական համայնքներն ընտրելիս առաջնորդվել ենք մարզային առանձնահատկություններով, հաշվի ենք առել նաև համայնքների սոցիալ-ժողովրդագրական պատկերը, աշխարհագրական բնութագրիչները՝ որոշ համայնքների դեպքում նաև սահմանամերձ լինելու հանգամանքը: Ֆոկուս խմբերի ընտրանքը կազմելիս հաշվի ենք առել սեռատարիքային չափանիշը՝ պահպանելով տիպային բաշխվածությունը: Յուրաքանչյուր քննարկման մասնակցել է 8-12

մարդ, ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել է 220 մարդ: Ֆոկուսխմբային քննարկումներն անցկացվել են 2022 թվականի հուլիսի 3-ից հուլիսի 23-ն ընկած ժամանակահատվածում:

Աղյուսակ 1. Ֆոկուսխմբային քննարկումների ընտրանքը

Մարզ	Համայնք	Տարիք	Սեռ	Քանակ
Երևան		18-35	արական և իգական	2
		36-53	արական և իգական	2
Արագածոտն	Ապարան	36-53	իգական	1
	Արագած	54-71	արական	1
Արարատ	Արտաշատ	54-71	իգական	1
	Երասխ	36-53	արական	1
Արմավիր	Արմավիր	36-53	իգական	1
	Նալբանդյան	54-71	արական	1
Գեղարքունիք	Վարդենիս	54-71	իգական	1
	Լճաշեն	36-53	արական	1
Կոտայք	Չարենցավան	18-35	արական	1
	Մեղրաձոր	18-35	իգական	1
Լոռի	Վանաձոր	18-35	իգական	1
	Թումանյան	36-53	արական	1
Շիրակ	Գյումրի	18-35	արական	1
	Երազգավորս	54-71	իգական	1
Սյունիք	Կապան	54-71	իգական	1
	Ճինուհայր	18-35	արական	1
Տավուշ	Իջևան	36-53	իգական	1
	Պառավաքար	54-71	արական	1
Վայոց ձոր	Մալիշկա	36-53	իգական	1
Ընդամենը				***23***

Ֆոկուսխմբային քննարկումների մեթոդը ընդգրկուն ու բազմաշերտ գիտելիք է տալիս ուսումնասիրվող խնդրի առնչությամբ: Միաժամանակ այն սահմանափակ է հանրային լայն սոցիալական շերտեր ներառելու տեսանկյունից: Սովորաբար մարգինալացված և խտրականացված խմբերը, ծայրահեղ աղքատները կամ խիստ

հարուստները ներկայացված չեն լինում նման ուսումնասիրություններում, որքան էլ մեծ լինի հետազոտական ջանքը: Մյուս կողմից՝ հետազոտության մեջ ակտիվորեն ներգրավվում են քաղաքական և հանրային գործընթացներով հետաքրքրված, դիրքորոշված և դրանց մասնակից հանրային շերտերը: Մենք ձգտել ենք հարցերը ձևակերպելու հնարավորինս լայն՝ նվազագույնի հասցնելու ուղղորդված կամ շրջանակված պատասխաններ ստանալու հավանականությունը: Այդուհանդերձ, մենք չենք հերքում, որ ուսումնասիրության նախագծումը, հասկացությունների սահմանումը, ընտրված հետազոտական հարցերը և վերլուծական մոտեցումը մեծապես ազդված են մեր հետազոտական, քաղաքական և գաղափարական հայացքներից, ինչը մեզնից լրացուցիչ ջանք և ողջախոհություն է պահանջել՝ բաց լինելու համատեքստի (կամ ինչպես սոցիոլոգներն են ասում՝ դաշտի) և դրանից եկող գիտելիքի առաջ:

Ներածության փոխարեն.

խաղաղության և տարածաշրջանային խաղաղ համակեցության տիրապետող դիսկուրսները հանրային-քաղաքական դաշտում

«Խաղաղության դարաշրջանի» և «հայրենավաճառության» թակարդում

Պատերազմին հետևած արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի համատեքստում իշխանությունները խաղաղության օրակարգը ձևակերպեցին իբրև իրենց քաղաքականության հենասյուն և հանրային խոստում՝ հռչակելով տարածաշրջանում հարատև խաղաղություն հաստատելու նպատակադրումը: Հետագայում էլ՝ արդեն արտահերթ ընտրություններին հաջորդող շրջանում, ինչպես վարչապետը, այնպես էլ նրա թիմակիցները շարունակեցին «խաղաղության դարաշրջան բացելու մանդատի» նարատիվի ձևակերպումը՝ որպես Հայաստանի զարգացման, անվտանգության և անգամ գոյության միակ ճանապարհ.

> *«Ես անձամբ խորապես համոզված եմ, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը, Արցախի ժողովրդի անվտանգությունը պահելու մեզ համար նախընտրելի լավագույն ձևը տարածաշրջանային կայունություն և խաղաղություն հաստատելն է: Այո՛, դա միայն մեզնից կախված չէ, այո՛, մինչ այս պահը հայտարարությունները, որոնք մենք լսում ենք հարևան երկրներից, հուսադրող անվանել ոչ մի կերպ չի կարելի, բայց դա չի նշանակում, որ մենք պետք է շարունակաբար մնանք հետևողի դերում և շարունակաբար արձագանքողի դերում մնանք»[1]:*

Չնայած անհրաժեշտությանը՝ փորձագետները պնդում են, որ պետությունների հարաբերությունները ենթադրում են «փոխադարձ շահագործում», իսկ պետության քաղաքական գործորդությունը նվազ «շահագործված» լինելու կարողության մեջ է.

---

1. Ռուբինյան, Ռ. [Ռուբեն Ռուբինյան]. (2021, օգոստոս 25). *Այսօրվա ելույթս՝ կառավարության ծրագրի քննարկման ժամանակ.* [Կցված է տեսանյութ] [Հրապարակում]. Facebook. https://www.facebook.com/watch/?v=4525605394124400

> *«Խաղաղ համագործակցության շրջանակում էլ աշխարհն այնպես է կառուցված, որ մեկը մյուսին շահագործում է: Հիմա ով և ում ինչ չափով պետք է շահագործի: Հետևաբար պայմանների հարց է՝ ինչ պայմաններով համագործակցել: Ինչքան մենք մեր դիրքերը բարելավենք, այնքան քիչ կշահագործվենք»:*

Սոցիոլոգ, փիլիսոփա

Միաժամանակ որոշ փորձագետներ ձևակերպում և վերարտադրում են խաղաղ համակեցության և առհասարակ խաղաղության հաստատման համար «գին» վճարելու նարատիվը, որ տիրապետող մոտեցում է հետպատերազմյան Հայաստանի քաղաքական և մեդիա տիրույթներում: «Գնի» կամ «կարմիր գծերի» մասին դիսկուրսի շրջանակում Ղարաբաղի կորուստը ձևակերպվում է իբրև անթույլատրելի՝ խաղաղության հաստատման համար: Կա նաև ըմբռնում, որ առանձին մարդիկ կամ խմբեր, որոնք համաձայն են այդ մոտեցմանը, երբևէ չեն խոսի դրա մասին հանրորեն՝ ճնշումներից և հարձակումներից խուսափելու համար[3]:

«Խաղաղության դարաշրջան» բացելու անհրաժեշտության իշխանական պատկերացումները ևս տարամետ են: Մի դեպքում այն հիմնավորվում է իբրև պատերազմի հավանականությունը բացառելու կամ զսպելու քաղաքական մեխանիզմ վերահաս վտանգների և գլոբալ անորոշությունների համատեքստում, ինչպես նաև ստեղծված տարածաշրջանային դասավորությունների պայմաններում այլընտրանք չունեցող իրապաշտական քաղաքական հաշվարկ: Մեկ այլ՝ ոչ տեխնոկրատ մոտեցման շրջանակում խաղաղության և խաղաղ համակեցության հարցերը տեղայնացվում և հոդավորվում են տարածաշրջանի սոցիալ-պատմական, ինչպես նաև երկու հասարակությունների հանրային [մարդկային] և քաղաքական փոխհարաբերությունների համատեքստում: Այս առումով քաղաքական դիսկուրսում բացվում է պատերազմներով և թեժացումներով ընդմիջվող տասնամյակների կոնֆլիկտի մարդկային շերտը.

> *«Զինվորները իրենց մարմնով չէ, որ պետք է տասնամյակներ շարունակ ինչ-որ գիծ պահեն»*[2]*:*

Խաղաղությունը և տարածաշրջանային խաղաղ համակեցությունը մի կողմից՝ քննարկելով գաղափարական անկյան տակ, մյուս կողմից՝ դիտարկելով իբրև ուժային հարաբերությունների ներկա իրավիճակում այլընտրանք չունեցող «գործիք»՝ մտածվում է տարածաշրջանն իբրև քաղաքական միավոր, որում խմորվում են հարևան պետությունների հարաբերությունները: Խմորման ու պարբերական թեժացումների և ճնշումների հենց այդ գործընթացների մեջ էլ նշանակալի առարկա է դառնում խաղաղ գոյակցության հնարավորության հարցը.

> *«...Բոլոր պատերազմները ավարտվում են սովորաբար խաղաղության համաձայնագրերով, երբ կողմերը որոշում են, թե այլևս ինչպես են իրենք իրար հետ ապրելու: Մենք դեռ չենք որոշել՝ ինչպես ենք իրար հետ ապրելու: Ես կարծում եմ՝ մենք պետք է որոշենք, որովհետև իրարից փախչել չենք կարող. սա շատ կարևոր հանգամանք է, որ բոլորն անտեսում են: Մենք չենք կարող փախչել մեր հարևաններից՝ ո՛չ նրանց խնդրել տեղափոխվել, ո՛չ էլ մենք տեղափոխվենք մեր տարածաշրջանից»*[3]*:*

Զուգահեռաբար արտաքին քաղաքական սուբյեկտների համար նախատեսված, բայց նաև ներհասարակական դիսկուրս թափանցող տեքստերում, ինչպես, օրինակ՝ ԵԱՀԿ ԽՎ ժողովրդավարության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի ընդհանուր հանձնաժողովի նիստի ելույթում[4] կամ «Լը Ֆիգարո» օրաթերթին տրված

---

2. rusarm.info. (2021, հոկտեմբեր 26). Депутат ГД рассказала, подпишут ли Армения и Азербайджан новый документ. [Տեսանյութ]. YouTube. https://www.youtube.com/watch?v=Va_RY-1b910

3. Factor TV. (2022, սեպտեմբեր 7). *Արցախի անկախության ճանաչման շանս չկա և չի եղել. Արսեն Թորոսյան.* [Տեսանյութ]. YouTube. https://www.youtube.com/watch?v=3gYiFtA6c4A

4. Կարապետյան, Մ. [Մարիա Կարապետյան]. (2021, հունիս 30). *Այսօրվա ելույթս ԵԱՀԿ ԽՎ ժողովրդավարության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի ընդհանուր հանձնաժողովի նիստի ժամանակ.* [Կցված է տեսանյութ] [Հրապարակում]. Ֆեյսբուք. https://www.facebook.com/watch/?v=356729789157668

հարցազրույցում[5], տիրապետող հռետորաբանություն է Ադրբեջանի իշխանության ներքո Ղարաբաղի հայերի կյանքի վտանգվածության, էթնիկ զտման նպատակադրության շեշտադրումը՝ երբեմն անհարկի չարաշահելով ցեղասպանության կոնցեպտը և լեզուն:

Այսպիսով՝ միաժամանակ նկատում ենք ինչպես փոխհարաբերություններ և փոխվստահություն կառուցելու շուրջ քաղաքական տեքստեր, այնպես էլ ցեղասպանության վերքի և վախի պարբերական շահարկումներ:

Մեկուսացման փոխարեն խաղաղ գոյակցության պայմաններ ստեղծելու Փաշինյանի հռչակումներին հակադրվում է ընդդիմությունը, որը ոչ միայն խաղաղությունը, այլև դրան փոխկապակցված ապաշրջափակման և սահմանազատման գործընթացները ձևակերպում է իբրև ՀՀ շահերի ոտնահարում, «անարժանապատիվ խաղաղություն», «միակողմանի պարտադրանք»[6], իսկ ՀՀ իշխանությունների դիրքորոշումները՝ խուսափողական[7] և անհստակ: «Կարմիր գծերի»[8] տրամաբանության ներքո ընդդիմադիր թևը պնդում է, որ ոչ թե ժխտում է խաղաղության գաղափարը (արդյոք խաղաղության կարևորությունն առհասարակ հնարավոր է ժխտել), այլ պիտակում է իշխանությունների՝ խաղաղության օրակարգի քաղաքականությունն իբրև կեղծ և ոչ արժանապատիվ.

> *«Մենք կողմ ենք հարևանների հետ համակեցության կանոններ գտնելուն ու հարաբերություններ հաստատելուն, բայց դրանք չպետք է լինեն մեր անվտանգության ու արժանապատվության հաշվին: Դեմ ենք միջպետական կոմունիկացիաների գործարկումը միջանցքային տրամաբանությամբ իրականացնելուն: Իրական ու արժանապատիվ խաղաղությունը հնարավոր է ապահովել միայն պետության արդյունա-*

5. ՀՀ ԱԳՆ. (2021, նոյեմբեր 20). ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հարցազրույցը «Լը Ֆիգարո» օրաթերթին. *mfa.am*. https://bit.ly/ԱրարատՄիրզոյանիՀարցազրույցը

6. Ասլանյան, Կ. (2021, նոյեմբեր 29). Միջանցքի մասին իշխանությունների հավաստիացումներին չենք հավատում. Սեյրան Օհանյան. *azatutyun.am.* https://www.azatutyun.am/a/31585459.html

7. news.am. (2022, ապրիլ 4). Հայաստանում անվտանգային մարտահրավերները փոխվել են, իրավիճակը շատ ավելի վատթարացել է. Գեղամ Մանուկյան. *news.am.* https://news.am/arm/news/694962.html

8. Նույն տեղում

վետ ներքին ու արտաքին քաղաքականությամբ, պրոֆեսիոնալ թիմով, բանակի վերականգնմամբ, հանրային լայն համախմբում ու համերաշխություն ապահովելով, Հայաստանի կողմից նոր բանակցողով»[9]*:*

Քննելով խաղաղության և խաղաղ համակեցության գաղափարների վերաբերյալ ընդդիմադիր ուժերի լեզուն՝ նկատում ենք, որ այն գերազանցապես ներքաղաքական պայքարի և սեփական տնտեսական ու քաղաքական իշխանության պահպանման ու ամրապնդման տրամաբանությունից և շահից է բխում: Քննարկման առարկան, ըստ էության, ոչ այնքան ինքնին խաղաղության և տարածաշրջանային խաղաղ համակեցության հարցերն են, որքան հասարակական տագնապները և վախերը սրելու միջոցով իշխանությունների ներկայացումն իբրև «թշնամու առաջ տան դռները լայն ժպիտով բացող կեղծ խաղաղասերների»[10], որոնք «խաղաղություն մուրալու», «հայրենավաճառության»[11] գործարքների մեջ են:

Այսպես կոչված հայրենասիրության մրցավազքում դիմադարձվում է ներկա իշխանությունը. բանավեճի բովանդակությունը ոչ թե առանձին գաղափարների, այս դեպքում՝ խաղաղության և խաղաղ համակեցության շուրջ է, այլ ինքնին իշխանության ձեռքբերման՝ թե՛ նեղ, թե՛ լայն իմաստով: Առանձին գաղափարներ դառնում են հղման կետեր և գործիքայնացվում են ռազմահայրենասիրական պաթոսի և պոպուլիստական էթոսի շրջանակներում, որտեղ կոնցեպտների կիրառությունը բառախաղային է և չափազանցության նրբերանգներով, միտված է ազգայինի, հայրենիքի, բանակի, ռազմի շուրջ տիրապետող գիտելիքի վերարտադրությանը և զգացմունքայնացմանը:

---

9. mediamax.am. (2022, հոկտեմբեր 5). *«Հայաստան» խմբակցություն. «Նախապատրաստվում են մահացու զիջումներ»*. mediamax.am. https://mediamax.am/am/news/politics/48935/

10. ՀՀ 3-րդ նախագահի գրասենյակ. (2022 սեպտեմբեր 2). *ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը Արցախի Հանրապետության օրվա առթիվ* [Կցված է նկար] [Հրապարակում]. Facebook. https://bit.ly/ՍերժՍարգսյանիՈւղերձը_Արցախ

11. ՀՀ 3-րդ նախագահի գրասենյակ.(2022, ապրիլ 24). *ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ* [Կցված է նկար] [Հրապարակում]. Facebook. https://bit.ly/ՍերժՍարգսյանիՈւղերձը_Ցեղասպանություն

Այսպես՝ «ուտոպիստական»[12] խաղաղության օրակարգին Աժ ընդդիմադիր ուժերը հակադրում են իրենց երբեմնի գաղափարական հակոտնյա Լևոն Տեր-Պետրոսյանից փոխառած, սակայն իմաստազրկած «արժանապատիվ խաղաղության» հասկացությունը.

> *«Խաղաղության գինը անհայրենիք ստրկամիտների համար թշնամուն հպատակությունն է, ազգային արժեքներից ու ինքնությունից հրաժարումը, թշնամու բոլոր պայմանների անվերապահորեն ընդունումը»*[13]:

Սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի՝ ՀՀ ներխուժման առիթով «Հայաստան» խմբակցությունը տարածել էր հայտարարություն՝ տեղի ունեցողը վերագրելով ինքնին խաղաղության օրակարգի քաղաքականությանը[14]:

Առավել լայն տարածաշրջանային գործընթացների և նկրտումների ենթարկեցումը խաղաղության օրակարգին երևան է բերում հետպատերազմյան հայաստանյան քաղաքական դաշտի դիմադրության և պայքարի իրական առարկան: Որքան էլ այն քողարկվում և շղարշվում է առանձին գաղափարների շահարկումներով, այդուհանդերձ, նյութական է և ունի մի քանի շերտ. մի կողմից՝ կոնֆլիկտի, ինքնության, ազգի և ռազմի շուրջ տիրապետող հանրային գիտելիքի ձևավորման և վերարտադրության իշխանական լծակների վերադարձը և դրանց պահպանությունը, մյուս կողմից՝ սեփական տնտեսական կապիտալի ապահովագրությունն ու հասարակական շերտերի շահագործման ու կապիտալի շարունակական կուտակման իշխանական լծակների ձեռքբերումը, և երրորդ՝ առավել լայն՝ աշխարհաքաղաքական շերտը, որով Հայաստանը տարածաշրջանային պարփակ դրության հետևանքով մշտապես ենթակայական հարաբերությունների մեջ կմնա Ռուսաստանի հետ:

---

12. Factor TV. (2022, սեպտեմբեր 28). *Ռոբերտ Քոչարյանի ասուլիսը. ՈՒՂԻՂ*. YouTube. https://www.youtube.com/watch?v=6gdpDYPSHXA

13. ՀՀ 3-րդ նախագահի գրասենյակ. (2022, մայիս 9). *ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ* [Կցված է նկար] [Հրապարակում]. Facebook. https://bit.ly/40IXxNy

14. «Հայաստան» դաշինք. (2022, սեպտեմբեր 13). «Հայաստան» խմբակցություն. Տեղի ունեցողը բացահայտում է, այսպես կոչված, խաղաղության դարաշրջանի իրական դեմքը. *դաշինք. հայ*. http://bit.ly/3nPyUjQ

Ժողովրդավարության և անվտանգության հակադրության մասին

Ժողովրդավար Հայաստանի պատկերը ավտորիտար Ադրբեջանին հակադրելիս իշխանությունները շեշտադրում են ժողովրդավարության՝ անվտանգության և խաղաղության երաշխիք լինելու հանգամանքը: Տարածաշրջանում ժողովրդավարության «հանգրվանի» այս փաթեթավորումը հիմնականում ուղղված է արտաքին դերակատարներին՝ հակադրվելով Ադրբեջանի ավտորիտար ռեժիմին: Ժողովրդավարությունն այս համատեքստում հանդես է գալիս իբրև միջազգային գործիչների աջակցության, հետևաբար նաև անվտանգության երաշխիք: Ժողովրդավարությունն, այսպիսով, ձևակերպվում է իբրև պետականությունը փրկող[15] կապիտալ: Ավելին՝ ժողովրդավարությունը կարևորվում է նաև խաղաղության օրակարգի տեսանկյունից՝ որպես ժողովրդի ձայնն այդ օրակարգում սահմանադրող:

Ժողովրդավար Հայաստանի և ավտորիտար տարածաշրջանի հակադրությունը տարածված մոտեցում է նաև փորձագետների շրջանում:

Որպես խաղաղ համակեցության անհնարինության փաստարկ՝ հաճախ օգտագործվում է Հայաստանի չորս հարևաններից երեքի ավտորիտար բնույթը: Հարևան Ադրբեջանը և Թուրքիան, ըստ փորձագետների, լինելով ավտորիտար և ռեժիմային պետություններ, խաղաղ համակեցություն չունեն իրենց պետությունների ներսում, իսկ այլ պետությունների հետ հարաբերություններում վարում են ծավալապաշտական քաղաքականություններ: Ավելին՝ իրենց ռեժիմի պահպանության և վերարտադրության համար, ինչպես կարծում են փորձագետները, այս երկրները քսենոֆոբ քաղաքականությունների գործադրող են.

> *«Ադրբեջանն այս տարիների ընթացքում դաստիարակել է հայատյացություն, այդ իշխանության գաղափարական հիմքը դա է, նա չի կարող հետքայլ անել դրանից, և իր փոքր հաղ-*

15. Լուրեր. [ArmPublicTvLurer]. (2022, փետրվար 1). *Հարցազրույց Ալեն Սիմոնյանի հետ* [Տեսանյութ]. YouTube. https://www.youtube.com/watch?v=DUHV6M3yuZU

> *թանակները Հայաստանի նկատմամբ ռեժիմը պահելու գրավականն են»:*
>
> ***Ազգագրագետ, մշակութային մարդաբան***

Մյուս կողմից՝ փորձագետների շրջանում կա գիտակցում, որ գերտերությունները, որոնց քաղաքական և տնտեսական շահերից է բխում տարածաշրջանում շարունակական լարվածության պահպանությունը և խաղաղության հաստատման ձգձգումը, հայերի շրջանում սնում են հակաթուրքականություն և դրան փոխառնչված գոյացական վախեր, որոնց հետևախորքում իրենք ներկայանում են իբրև երկկողմ հարաբերությունների «փրկիչ» կամ «միջնորդ»՝ պահելով իրենց գերիշխանությունը և շարունակաբար նվազեցնելով Հայաստանի անկախությունն ու քաղաքական գործորդությունը:

Օգտագործելով ընտրություններով ժողովրդից ստացած մանդատն իբրև երկրի ներսում օրենքի (ցավալիորեն՝ ոչ իրավունքի) գերակայության, իսկ երկրից դուրս՝ խաղաղության դարաշրջանի հաստատման լեգիտիմություն, իշխանությունները մնում են ժողովրդավարության ֆորմալ (ընտրական) և պոպուլիստական ընկալման շրջանակում, որում ժողովրդի հետ ինքնանույնացումը հարմար միջոց է դառնում՝ պատնեշվելու քննադատություններից և «կիսելու» մեղադրանքների կամ պատասխանատվությունների բաժինը ժողովրդի հետ: Շահարկելով հենման կետը՝ ժողովրդի կամքը, որի մեջբերման համար հաճախ օգտագործվում է «հասարակական կարծիքի ուսումնասիրության», ինչպես Պ. Բուրդիոն էր ասում, քաղաքական կատեգորիան (Բուրդիո, 2019), իշխանությունները միաժամանակ ունակ չեն հաղթահարելու ընդդիմության հոդավորած «դավաճան և հողատու» դիսկուրսը՝ վերարտադրելով դրա տրամաբանությունը.

> *«Ինչպես վարչապետը երեկվա իր ելույթում արձանագրեց, ժողովուրդը վերջին համապետական ընտրություններով շատ հստակ արձանագրեց, թե ով է հողատուն, և ով է դավաճանը»[16]:*

16. Աղաջանյան, Է. [Էդուարդ Աղաջանյան]. (2021, օգոստոս 25). *Արդարադատությունը հասնելու է բոլոր դավաճան և հողատուներին, անկախ նրանից՝ Աժ պատգամավորի մանդատը տվյալ պարագայում առկա է, թե ոչ* [Կցված է տեսանյութ] [Հրապարակում]. Facebook. https://www.facebook.com/aghajanyan.eduard/videos/1471495456516728

Սրան զուգահեռ պատերազմներ վերապրած պետություններին բնորոշ աճող ռազմականացման և անվտանգայնացման քաղաքականությունների հետնախորքում հանրային-քաղաքական դաշտում հյուսվում է «Ժողովրդավարություն, թե անվտանգություն» երկընտրանքը: Այդ երկընտրանքը ձևակերպող ընդդիմադիր ուժերը, դրանց ծառայող լրատվամիջոցները և փորձագիտական շրջանակներն ունեն ուժ և իշխանություն անվտանգայնության տրամաբանության և քաղաքականության ներքո հարցադրելու ժողովրդավարության անհրաժեշտությունը՝ սահմանելով «ազգային անվտանգության» կամ ուժեղ պետության գերակայությունը ժողովրդավարական կամ թույլ պետության համեմատ:

Ղարաբաղյան կոնֆլիկտը տարիներ շարունակ իշխանության պահպանմանն ու վերարտադրմանը ծառայեցրած հայաստանյան և ղարաբաղյան այս ուժերը պնդում են, թե Ժողովրդավարության հետևանքով անվտանգային հարցերը և մարտահրավերները հետին պլան են մղվում: Սակայն քննադատական հայացքն անհրաժեշտ է՝ նկատելու, որ անվտանգությունը հակասական բնույթ ունի, և այն անհրաժեշտաբար դրական կամ ունիվերսալ չէ: Կարևոր է համատեքստը, ինչպես նաև անվտանգության քաղաքականություններ մշակող և այն գործադրող իշխանության (լայն իմաստով) սուբյեկտները և նրանց շահերը, քանի որ անվտանգության քաղաքականության բանեցումը նշանակում է, որ մինչ որոշ շերտեր կամ խմբեր դառնում են արտոնյալ կամ պաշտպանված, այն արտադրում է անհամաչափ ուժային հարաբերություններ արտոնյալ դարձած և ստորադասված հասարակական խմբերի միջև: Միաժամանակ քննադատական հայացքն անհրաժեշտ է՝ արձանագրելու, որ անվտանգային քաղաքականությունները գործադրողը պետությունը և դրա համապատասխան ուժի ինստիտուտներն են, որոնք հիմնվում են ուժի բազմապատկման տրամաբանության վրա՝ ի հաշիվ սոցիալական ոլորտների և ճնշված խմբերի է՛լ ավելի լուսանցքայնացման: Հետևաբար որքան էլ բարդ, սակայն հետպատերազմյան Հայաստանում խիստ անհրաժեշտ է անվտանգայնացման և ռազմականացման[4] ջատագովության և դրանց արդեն իսկ նկատելի քաղաքականությունների հարցադրումը. անվտանգություն ինչի հաշվին և ում կողմից, ինչ եղանակներով և քաղաքականություններով, սոցիալական, տնտեսական, բնապահպանական, գենդերային ինչ ազդեցություններով և մարտահրավերներով:

Միաժամանակ կարևոր է, որ մտահոգության և քննադատության առարկա դառնան պայմանները, որոնք հնարավոր են դարձրել անվտանգայնացումը և դրա առանձնահատուկ լեզուն, որ թույլ է տվել ուժի սուբյեկտին ձևակերպել վտանգն ու դրա դեմ պայքարելու միջոցների լեգիտիմությունը:

Ժողովրդավարության քաղաքական ճգնաժամի մասին խոսում են բազմաթիվ հասարակագետներ աշխարհի տարբեր անկյուններում: Լիբերալ ժողովրդավարության ճգնաժամի առումով այն արտահայտվում է աջ և ծայրահեղ աջ ուժերի ամրապնդմամբ, որոնք հարցականի տակ են դնում նեոլիբերալ իսթեբլիշմենթը՝ առաջարկելով կամ փոխարինելով այն ռեակցիոն նեոլիբերալիզմի քաղաքականություններով: Միաժամանակ նշանակալի է սոցիալական ժողովրդավարության քայքայումը գլոբալացող, նեոլիբերալ կապիտալիզմի ներկա ձևերի ամրապնդման հետնախորքում (Fraser, 2019): Այս քայքայումը առավել լայն և բազմաշերտ ազդեցություններ և հետևանքներ ունի սոցիալական, բնապահպանական, առողջապահական և այլ հարակից ոլորտների վրա:

Հետպատերազմյան Հայաստանի հանրային-քաղաքական դաշտ նետված «Ժողովրդավարություն, թե անվտանգություն» երկընտրանքը, որ ձևակերպվում է տեղական իշխանության համար պայքարի տրամաբանության ներքո, այդուհանդերձ, առնչված է գլոբալ գործընթացներին և ժողովրդավարական ինստիտուտների թուլացմանը:

Ընդդիմադիրներն այն երբեմն սահմանում են իբրև ժողովրդավարական բարեփոխումների ձախողում, երբեմն էլ՝ իբրև հետևողական ջանքերով պետության թուլացում. այս երկու մոտեցումները գոյություն ունեն կողք կողքի՝ զուգահեռաբար:

Ըստ էության՝ մեծ պաշտպանվածություն, անձեռնմխելիություն և շատ այլ երաշխիքներ ունեցող ԱԺ ընդդիմադիր պատգամավորների հակաժողովրդավար և օլիգարխիկ հատվածն իր նեղ քաղաքական և կուսակցական շահերի պաշտպանության համար գործիքայնացնում է մարդու իրավունքների և ժողովրդավարության լեզուն (Մարգարյան, 2022):

Մեղադրելով իշխանություններին ոլորտային բարեփոխումների ձախողման համար՝ ընդդիմությունն առաջ է քաշում դիսկուրս,

որ ժողովրդավարությունը չի կարող երաշխավորել անվտանգություն, և որ վերջինս գերակա է մյուսի նկատմամբ.

> *«Մեզ ասում էին, որ Հայաստանում այնպիսի մի ժողովրդավարություն է, որ որևէ ավտորիտար երկիր (այդպես էր, չէ՞, մոտավորապես) չի համարձակվի հարձակվել Հայաստանի վրա: Եվ ժողովրդավարությունը դիտվում էր որպես անվտանգության մի լուրջ կոմպոնենտ: Հիմա ո՛չ ժողովրդավարություն ունենք, ո՛չ էլ անվտանգություն: Արդյունքը սա է»*[17]*:*

Չկայացած ինստիտուցիոնալ և սոցիալական ժողովրդավարության համատեքստում վերջինս հեշտորեն տեխնոկրատացվում և գործիքայնացվում է հակաժողովրդավար խմբերի կողմից, որոնք բազմաթիվ վախեր և մտահոգություններ ունեցող հետպատերազմյան հասարակությունում խաղարկում են անվտանգության նուրբ խաղաքարտը՝ սրելով և չափազանցելով դրա գոյացական շերտը, ինչպես նաև խորացնելով Հայաստանի ռազմականացման հռետորաբանությունը և արդեն իսկ գործադրվող քաղաքականությունները:

Հայաստանի քաղաքական սուբյեկտության սահմանները և Ռուսաստանը

Գործորդության (agency) սոցիալական և քաղաքական տեսություններն ընդգծում են ուժի գործադրման գաղափարը: Ուժի կոնցեպտն իր հերթին առանձնացնում է գործորդի (agent) քաղաքական կարողությունը՝ լինի անհատ, թե հավաքական միավոր: Այս ըմբռնման շրջանակում որքան անհատները կամ հավաքական միավորները մեկուսանան միմյանցից, այնքան կնվազի նրանց քաղաքական գործորդությունը:

17. Factor TV. [Factortv]. (2022, սեպտեմբեր 28). *Ռոբերտ Քոչարյանի ասուլիսը. ՈՒՂԻՂ.* [Տեսանյութ]. YouTube. https://www.youtube.com/watch?v=6gdpDYPSHXA

Սոցիալական և քաղաքական գործորդության այս ընդհանրական ձևակերպումներից զատ՝ որոշ հեղինակներ այն դիտարկում են հասարակական կյանքի եղանակները որոշարկելու համար պայքար մղելու կարողության տեսանկյունից՝ շեշտադրելով քաղաքականի կոնֆլիկտային և բախումնային չափումը (Mouffe, 2005): Այլ մտածողներ էլ ըմբռնում են քաղաքական գործորդությունն իբրև «ուրիշների» հետ հարաբերակցվելու ռազմավարական կարողություն հանուն արդար հասարակարգի ստեղծման (Sanchini, Pongiglione, 2019): Չնայած սոցիալական և քաղաքական տեսություններում գործորդության սահմանման լայն ընդգրկույթին՝ բոլոր մոտեցումները կիսում են ուժի և այդ ուժը գործադրելու լեգիտիմության հարցերի մտահոգությունը:

Թեև սոցիալական և քաղաքական գործորդությունը գոյություն ունի «սահմանագծված շրջանակում» և ճնշումների ներքո, այն նաև ունի որոշակի ազատություն և ճկունություն այդ նախասահմանված շրջանակների ներսում և այդ շրջանակները զանցելու առումով (Giddens, 1979): Գործորդության ազատությունն ու ճկունությունն ի հայտ են գալիս, երբ անհատ և հավաքական միավորները գիտակից են դառնում իրենց դրությանը: Երբ կան համապատասխան քաղաքական, իրավական, սոցիալական և այլ մեխանիզմներ քաղաքական գործողության և հեգեմոն համակարգի կառուցվածքները փոխակերպելու համար, գործորդությունը դրսևորվելու հնարավորություն ունի:

1988-ի Ղարաբաղյան շարժումից ի վեր անկախ Հայաստանն իր ազգային և պետական ինքնությունը կառուցել է Ղարաբաղյան առաջին պատերազմի հաղթանակի առանցքի շուրջը: Ղարաբաղյան հարցի շուրջ «ազգային միության» գաղափարաբանությունը (Ժամակոչյան, 2016), որ տիրապետող էր Հայաստանի անկախության տարիներին, կոնֆլիկտն այնքան «բնականացրեց» և «հավերժացրեց», որ Ղարաբաղի և Հայաստանի ներկաները և ապագաներն անքակտելիորեն կապվեցին միմյանց՝ մեկի քաղաքական և պատմական գոյությունը պայմանավորելով մյուսով:

Այդ գաղափարաբանության մշակողների և գործադրողների մի մասը, որ այժմ ընդդիմություն է, ձևակերպել և ձևակերպում է Հայաստանի և Ղարաբաղի՝ զույգ պետությունների կոնցեպտը՝ նշելով, որ նախքան հեղափոխությունը երկու սուբյեկտները զարգացել

են համահունչ և փոխկապված, հայկական բանակն էլ՝ «Արցախյան ազատամարտով, զոհողություններով միս ու արյուն ստացած»[18]:

«Արցախն ամրանում էր, համազգային ճիգով օրեցօր կայանում այն համոզումով, որ այն Հայրենիքի, Հայաստանի Հանրապետության հետ անվտանգային, հոգևոր ու տնտեսական մեկ համակարգ է, նույն զարկերակին ուժ տվող և նրանից ուժ ստացող անբաժան մարմին: Ավաղ, Հայաստանի գործող իշխանությունների կողմից վարվող արկածախնդիր, կարճատես և ապազգային քաղաքականությունը կորստաբեր և աղետալի հարված հասցրեց Հայաստան-Արցախ անքակտելի միասնականությանը՝ անվտանգային լրջագույն սպառնալիքների առջև կանգնեցնելով մեր զույգ պետություններին»[19]:

18. «Հայաստան» դաշինք. (2022, օգոստոս 29). *«Դիմադրություն» շարժման Պաշտպանության ու անվտանգության հանձնաժողովն այսօր հրավիրել է ընդլայնված նիստ* [Կցված են նկարներ] [Հրապարակում]. Facebook. https://bit.ly/3Gleq8S

19. «Հայաստան» դաշինք. (2022, սեպտեմբեր 2). *«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ՈՒՂԵՐՁԸ ԼՂՀ ՀՈՉԱԿՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ* [Կցված է նկար] [Հրապարակում]. Facebook. https://bit.ly/43mCHp8

ՄԱՍ 1

Աղքատությունից մինչև համայնքների խոշորացում. հանրային մտահոգություն-ների ընդգրկույթը

Արդեն Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Հայաստանի քաղաքական գործորդության հարցը քննարկվում է գլխավորապես Ղարաբաղի ճակատագիրը որոշելու նրա կարողության տեսանկյունից՝ դառնալով վիճարկման առարկա թե՛ հասարակական, թե՛ քաղաքական, թե՛ փորձագիտական մակարդակներում: Վիճարկելով Հայաստանի քաղաքական սուբյեկտությունը՝ քննարկման գլխավոր առարկան դառնում է Ռուսաստանը՝ իբրև տարածաշրջանի և մասնավորապես հայ-ադրբեջանական հարաբերությունների բովանդակությունն ու ձևաչափը որոշարկող հեգեմոն սուբյեկտ:

Փորձագետների զգալի մասը տարածաշրջանում խաղաղության հաստատման հնարավորությունը սահմանում է իբրև մի դրություն, որ տեղի կունենա Ռուսաստանի անմիջական ցանկությամբ և շահագրգռությամբ: Ռուսաստանի կամքից կախյալությանը հաջորդում է Արևմուտքի, Թուրքիայի և Ադրբեջանի դերը, և այս առումով ամենանվազ գործորդությունը տրվում է Հայաստանին՝ իբրև պետության.

> *«Հայաստանը ուժ չունի, հնարավորություններ ու ռեսուրս չունի իր ընտրությամբ ոչ խաղաղ հարաբերություններ ունենալու իր հարևանների հետ, գնալու ռևանշի, ագրեսիվ վարքագծի: Նաև որևէ աջակից չունի՝ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր՝ նման քաղաքականություն վարելու: ...Հայաստանը շատ այլ բաներ չունի անելու՝ գոնե այս պահին, գոնե մոտ ապագայում»:*
>
> ***Քաղաքագետ***

Քաղաքական դիսկուրսի մակարդակում Ռուսաստանի դերակատարումը տարածաշրջանում մեծապես քննարկվում է երկու տեսանկյունից. մի կողմից՝ «մտահոգություն» և «հոգատարություն» տարածաշրջանում Ռուսաստանի հեղինակության նվազման առնչությամբ, որ ձևակերպում է ընդդիմադիր թևը, մյուս կողմից՝ Ղարաբաղում ռազմական պատասխանատվության վերագրում Ռուսաստանին, որ ձևակերպում է իշխանությունը: Այսպես՝ Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովման հիմնարար հարցը իշխանությունների դիսկուրսում վերագրվում է

Ռուսաստանին, իսկ Հայաստանն այս համատեքստում առավելագույնը ստանում է հումանիտար և սոցիալ-տնտեսական աջակցություն տրամադրողի դերակատարում:

Եթե իշխանությունները քննադատում և հարցադրում են Ռուսաստանի խաղաղապահ առաքելության՝ խաղաղություն ապահովելու ներուժը, ապա ընդդիմադիրները և ղարաբաղյան քաղաքական էլիտան անհանգստանում են, թե Ադրբեջանը «ստվերում» է Ռուսաստանի խաղաղապահ առաքելությունը սահմանախախտման դեպքերով և պարբերական թեժացումներով:

Իշխանություններից Ռուսաստանին «պաշտպանելու» ընդդիմադիրների ջերմեռանդ քաղաքականությունը նպատակ ունի լեգիտիմացնելու Հայաստանի հանդեպ Ռուսաստանի վերահսկողհովանավորչական քաղաքականության վերարտադրությունը և Ռուսաստանից Հայաստանի ստորադաս կախյալության շարունակականությունը՝ առաջ մղելով ինքնամեղադրման և ինքնախարազանման քաղաքականություն: Հայաստանի քաղաքական գործորդության դրսևորման փորձերը ընդդիմությունը ձևակերպում է իբրև դավաճանություն հեգեմոնին՝ ձգտելով պահպանելու և հասարակության ներսում խորացնելու ռուսաստանամետ քաղաքական մշակույթի չհարցադրվող բնույթը, ինչպես նաև սերմանելու գոյացական վախեր.

> *«Փաստը մեկն է, որքան էլ ոմանք չցանկանան դա ընդունել, այսօր Արցախը, արցախցիների անվտանգությունը պահում են ռուս խաղաղապահները, և այս պայմաններում փորձել Ռուսաստանի թիկունքում խաղեր տալ, իսկ ես ձեզ վստահեցնում եմ՝ նման դեպքեր եղել են, հերթական արկածախնդրության գնալ է, նոր փորձանք Հայաստանի ու Արցախի գլխին բերել է»*[20]*:*

Այսպիսով՝ Հայաստանի հանդեպ Ռուսաստանի գերիշխող դիրքի ամրապնդման ջատագովությունն ունի ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ ներքաղաքական չափում: Իշխանափոխու-

20. Yerevan.Today. (2022, մարտ 16). Ադրբեջանի 5 նախապայմանների բուն նպատակը 44-օրյա պատերազմի արդյունքների իրավաբանական ամրագրումն է. Ագնեսա Խամոյան. *yerevan.today.* https://bit.ly/3KF2Vfg

թյան անհրաժեշտության դիսկուրսում երևան է գալիս Ռուսաստանին ավելի լավ ենթակա լինելու քաղաքական նպատակադրումը: Հայաստանի քաղաքական գործորդությունը, մի կողմից, սահմանափակված է Ղարաբաղյան երկրորդ պատերազմի պարտությամբ, մյուս կողմից՝ տարածաշրջանային և գլոբալ փոխակերպումներով: Փորձագետները պնդում են, որ «անուժ», «պարտված» Հայաստանը խոցելի է և ձայնազուրկ: Միաժամանակ գործորդության «սահմանագծված շրջանակում» հնարավոր է ընդլայնել սահմանագծերը և քաղաքական գործողության հեռանկարները՝ ոչ թե հրաժարվելով կամ մերժելով պարտությունը, այլ «ռեֆլեքսիվ պարտվածի» դիրքից տարբեր սուբյեկտների հետ հարաբերություններ կառուցելու լծակներ գտնելով: Քամու հորձանուտում հայտնված Հայաստանը կարող է տրվել քամու տատանումներին (ինչը ևս կարող է լինել քաղաքական գործորդի ընտրություն) կամ կարող է «կառուցել հողմաղացներ», ինչպես նշեց հետազոտության փորձագետներից մեկը:

1.1 Հանրության սոցիալ-տնտեսական մտահոգությունները և աղքատությունը

2020-ի սկզբին բռնկված կորոնավիրուսային համավարակը, ապա նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմը էապես ազդեցին Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վատթարացման վրա: Համավարակի և պատերազմի հետևանքով առաջ եկած առողջապահական, հումանիտար և սոցիալական խնդիրները, ինչպես նաև ներքաղաքական անկայուն և բորբոքված դրությունը էլ ավելի սրեցին առկա վատթար սոցիալ-տնտեսական վիճակը, նվազեցրին սպասելիքները զարգացման հնարավոր հեռանկարների հանդեպ:

Այսպես՝ ամբողջ աշխարհում և Հայաստանում վերջին երկու տարիներին գրանցվել է բարձր գնաճ: Գնաճային երևույթները, առաջնային ապրանքների, մասնավորապես՝ սննդամթերքի կտրուկ թանկացումն էական լարվածություն են առաջացրել սոցիալական ոլորտում, քանի որ սպառողական գներն աճում են, իսկ մարդկանց եկամուտներում դրական տեղաշարժ չի նկատվում, լավագույն դեպքում եկամուտները մնում են նույնը[21]:

2021-2022 թթ. ընթացքում գնաճը եղել է 10.3%, իսկ սննդամթերքի գներն աճել են մոտ 17,1%-ով[22]: 2022 թ. հուլիսին հանրայնացված տվյալների համաձայն՝ 2022 թ. հունիսին 2021 թ. նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 18%-ով թանկացել է ալյուրը, հացը՝ 20%-ով, իսկ մակարոնեղենը՝ գրեթե 30%-ով, տավարի միսը՝ շուրջ 20%-ով, ավելի քան 25%-ով՝ պանիրը և այլն[23]:

Ավելին՝ 2022 թ. փետրվարին Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սանձազերծած պատերազմի, այնուհետև՝ Ռուսաստանի նկատ-

---

21. ՀՀ վիճակագրական կոմիտե. (2022). Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-սեպտեմբերին. *armstat.am.* https://armstat.am/am/?nid=82&id=2522

22. Զարգարյան, Ռ. (2022, հուլիս). Սննդամթերքի թանկացման հետևանքով Հայաստանը կանգնած է աղքատության ավելացման վտանգի առջև. Վահան Քերոբյան. *azatutyun.am.* https://www.azatutyun.am/a/31933062.html

23. Նույն տեղում

մամբ պատժամիջոցների համատեքստում հայաստանյան տնտեսությունում ավելացել են գնաճային գործոններն ու ինքնին գնաճը՝ արտահայտվելով նաև պահանջարկի միջավայրի զգալի ընդլայնմամբ[24]:

Ըստ ՀՀ Կառավարության հրապարակած տվյալների՝ 2022 թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշի հավելաճը եղել է շուրջ 14%, և տարբեր փորձագետների գնահատմամբ, եթե նոր պատերազմ չլինի, Հայաստանը 2022-ը կավարտի երկնիշ տնտեսական աճով[25]:

Սակայն երկնիշ տնտեսական աճը կամ տնտեսական վիճակի բարելավումը դեռևս չի նշանակում, որ հանրային բոլոր շերտերն են օգտվում այդ աճից, և տնտեսական աճը հավասարապես է ազդում մարդկանց տնտեսական կյանքի վրա: Սովորաբար տնտեսական աճից շահում են տնտեսապես առավել լավ պայմաններում ապրող հանրային խմբերը՝ ձեռնարկատերեր, հարուստներ, միջին խավի մարդիկ:

Չնայած տնտեսական աճի բոլոր ցուցանիշներին՝ այսօր Հայաստանում աճում է նաև աղքատությունը, և ամենայն հավանականությամբ 2022 թ. վերջին աղքատության ցուցանիշը կբարձրանա[26], և կշատանան աղքատության մեջ ապրող մարդիկ:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, աղքատության և գնաճի հիմնախնդիրները հանրության լայն շերտերի առաջնային մտահոգությունների տիրույթում են՝ համակցվելով գործազրկության և աշխատատեղերի սակավության, արտագաղթի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ոլորտի այլ խնդիրների հետ:

---

24. ՀՀ կենտրոնական բանկ. (2022, նոյեմբեր 29). Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն (2021 թ. 4-րդ եռ. - 2022 թ. 3-րդ եռ.). *cba.am.* https://bit.ly/43doNFs

25. Բուլղադարյան, Ն. (2022, հոկտեմբեր 26). «Եթե պահպանվի խաղաղությունը, Հայաստանն այս տարին կավարտի երկնիշ տնտեսական աճով». տնտեսագետ. *azatutyun.am.* https://www.azatutyun.am/a/32101016.html

26. Սուքիասյան, Լ. (2022, նոյեմբեր 3). «Չեմ ժխտում, որ տարվա վերջում կարող ենք տեսնել աղքատության ավելի բարձր ցուցանիշ».Վահան Քերոբյան. *aravot.am.* https://www.aravot.am/2022/11/03/1302207/

> *«Հայաստանը սնանկ վիճակում է, բնական բան է, շատ սնանկ է, մենք շատ աղքատ Հայաստանում ենք ապրում, շատ աղքատ»:*
>
> **54-71 տարեկան կին, Երազգավորս, Ծիրակի մարզ**

> *«Առաջնայինը գործազրկության խնդիրն է, աղքատությունը»:*
>
> **18-35 տարեկան կին, Երևան**

> *«...Բնակչության սոցիալական վիճակը, անընդհատ գնաճը, աշխատանքի բացակայությունը»:*
>
> **18-35 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ**

Աղքատության հարցն առավելապես գյուղական համայնքների բնակիչների մտահոգությունն է: Համեմատվելով մայրաքաղաքի և մարզային խոշոր քաղաքների հետ՝ գյուղական համայնքի բնակիչները ընդգծում են ոչ միայն աղքատության խորությունը, այլև դրա «ֆիզիկական» շերտը՝ գյուղաբնակների վաղաժամ ծերացումը աղքատության հետևանքով:

> *«Կենտրոնացված, խոշոր քաղաքներում աղքատությունն այդքան չի երևում: Շրջաններում, գյուղերում ահավոր շատ է* [աղքատությունը]*: 50 տարեկան գյուղացուն և 50 տարեկան քաղաքացուն դնես իրար կողքի, հաստատ տարբերությունը շատ մեծ է»:*
>
> **36-53 տարեկան կին, Մալիշկա, Վայոց ձորի մարզ**

ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցի համաձայն՝ 2021 թ. աղքատության մակարդակը նշանակալի փոփոխության չի ենթարկվել՝ հաշվարկված ըստ աղքատության միջին գծի, սակայն 2,1 անգամ աճել է ծայրահեղ աղքատության մակարդակը (եթե 2020 թ. այն 0,7% էր, ապա 2021 թ. դարձել է 1,5%), ինչը նշանակում է, որ բնակչության կենտրոնացումն աղքատության ծայրահեղ գծի շուրջ 2020-2021 թթ. ավելին էր, քան աղքատության

ընդհանուր (միջին) գծի շուրջ[27]: Այս նույն զեկույցի համաձայն, ըստ 2021 թ. տվյալների, գյուղական բնակչության աղքատության մակարդակը բարձր է միջին հանրապետական մակարդակից, մասնավորապես՝ 33,0%՝ 26,5%-ի դիմաց[28]: Աղքատության ամենաբարձր մակարդակը 2021 թ. արձանագրվել է Գեղարքունիքի մարզում (57,2%), որին հաջորդում է Շիրակի մարզը (56,5%), իսկ ամենացածր մակարդակը՝ Սյունիքի մարզում (4,2%):

ՀՌԿԿ-Հայաստանի իրականացրած մեկ այլ՝ «Համայնքային մակարդակում բազմաչափ աղքատությունը Հայաստանում» հետազոտության[5] համաձայն՝ առօրյա սննդի և հագուստի համար բավարար գումար չունենալու առումով ամենախոցելին Լոռու մարզն է (71.3%, ըստ որում՝ Սպիտակ քաղաքում ցուցանիշը 80.1% է): Սպիտակում տնային տնտեսությունների 83,7%-ը, Իջևանի 74,3%-ը չեն կարող իրենց միս կամ համարժեք բուսական սնունդ թույլ տալ ամեն երկրորդ օրը: Հետազոտության անցկացման երեք մարզերում (Լոռի, Շիրակ, Տավուշ) աշխատունակ տարիքի (15-75) անձանց կեսից ավելին աշխատաշուկայի մաս չի կազմում (55.9%), իսկ 39.6%-ը երկարաժամկետ գործազուրկ է: Բնակչության միայն 2,4%-ն է նշել, որ ի վիճակի է կոմունալ վճարումները կատարելու «հեշտությամբ» (ՀՌԿԿ, 2023):

> *«Ընդհանուր խնդիրները շատ են, բայց ես թոփ խնդիրներն ասեցի՝ սահմանները, սոցիալական, մարդկանց զբաղվածության հարցը, աշխատատեղերի բացակայությունը: Շիրակի մարզում՝ Գյումրիում, մարդկանց արտահոսքը դրա պատճառով շատ-շատ է. կեսը գնում են Երևան, կեսը՝ Ռուսաստան և այլն»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Գյումրի, Շիրակի մարզ**

Մարդկանց սոցիալական խնդիրները և դրանց շուրջ մտահոգությունները սրվում են հատկապես ապագայի անորոշության պայմաններում, երբ սոցիալ-տնտեսական երաշխիքներ չունեցող

27. ՀՀ վիճակագրական կոմիտե. (2022). Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021 թթ. *armstat.am*. https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

28. Նույն տեղում

հանրային շերտերը վախենում են ապագան պլանավորելուց, ներդրումներ անելուց, ինչ-որ անելիքներ ձեռնարկելուց:

> *«Գյուղացի մարդը պետք է իմանա, որ աշխատում է, չարչարվում է, ինչ-որ տեղ իր ապրանքն իրացնելու տեղ կա: Էս մեր ախպերը 60 տոննա խաղող ունի, բայց վախենում է, մտածում է՝ աշնանն այդ խաղողն ո՞ւր պիտի տանի, ո՞նց պիտի իրացնի»:*

54-71 տարեկան տղամարդ, Նալբանդյան, Արմավիրի մարզ

Սոցիալ-տնտեսական խնդիրների մասին խոսելիս Հայաստանի խորհրդային անցյալը բազմիցս է հիշատակվում և դառնում համեմատության եզր: Անկախության տարիներին բնորոշ ակնառու խնդիրների մի մասը, հատկապես հասարակության խիստ շերտավորումը, սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը, մեկնաբանվում են իբրև այդ տարիներին իրականացված լայնամասշտաբ մասնավորեցման, շուկայի ազատականացման և շուկայում պետության դերի թուլացման հետևանք: Թեև առանց գաղափարաբանական տերմինաբանության, բայց խորհրդային անցյալի փորձ ունեցող սերունդն այս կերպ քննադատում է վայրագ կապիտալիզմը և ազատական շուկան՝ վերլուծելով բանվոր դասակարգի շահերի ոտնահարումը, կապիտալի կուտակումը առանձին անհատների կամ խմբերի ձեռքին՝ մասնավորեցման և շուկայի ազատականացման տարիներին և դրանից հետո:

1990-ականներին Խորհրդային Միության փլուզմանը զուգահեռ Արևմուտքում վերապատրաստված նորազատական (նեոլիբերալ) տնտեսագետներն իբրև խորհրդատուներ սկսեցին ակտիվորեն աշխատել նախկին սոցիալիստական երկրների կառավարությունների հետ՝ տրամադրելով նրանց սոցիալիզմի ավերակների վրա կապիտալիզմի կառուցման նախագծեր և ճանապարհային քարտեզներ: Կապիտալիստական զարգացման տրամաբանության մեջ մտնող հետխորհրդային հասարակական ֆորմացիաները ենթարկվում էին բազմատեսակ կառուցվածքային, ինստիտուցիոնալ և իրավական փոփոխությունների՝ հիմք դնելով ունեցվածքի կուտակման մի վայրագ մեխանիզմի, որը նորազատականները կոչում էին «շոկային թերապիա» (Հարվի, 2017, Maranjos, 2013)՝ արագ

մասնավորեցում, առևտրի և գների ազատականացում, հարկաբյուջետային և դրամավարկային խստություն, ինչպես նաև տեղական տնտեսությունների բացում միջազգային կապիտալի՝ ներդրումների հոսք ապահովելու համար (Hamm, King, Stuckler 2012): Շոկային՝ ցնցումային թերապիան հետխորհրդային երկրներում, այդ թվում Հայաստանում ընթանում էր սոցիալական արդարության սկզբունքների, հանրային շահի կոպիտ խախտումներով՝ ի շահ քաղաքական, ռազմական և կրոնական իշխանություն ունեցող վերնախավի, ինչպես նաև խորհրդային շրջանի գործարանների, ցեխերի և հիմնարկների նախկին տնօրենների խավի և, ի վերջո, միջազգային կապիտալի ներհոսքն ապահովող ներդրողների: Արդյունքում ինչպես հայաստանյան, այնպես էլ հետխորհրդային այլ հասարակություններում խզում և բևեռացում առաջացավ գրեթե ձրի կապիտալ ձեռք բերած նոր հարուստների և հանրության մյուս խավերի միջև, իսկ երկրի կենսական ենթակառուցվածքները մենաշնորհվեցին աշխարհաքաղաքական նպատակներ հետապնդող օտարերկրյա ձեռնարկությունների կողմից (Ժամակոչյան, Մարգարյան, 2021): Ունեզրկման միջոցով կուտակումը, ինչպես գրում է Դեյվիդ Հարվին, «պետական իշխանությունների լուրջ օժանդակությամբ կապիտալիստական զարգացմանն անցնելու գինն էր» (Հարվի, 2017: 37)

Շոկային և մասնավորեցման քաղաքականության ջատագով նորանկախ Հայաստանի առաջին իշխանությունները նշում են, որ 1990-ականների սկզբին Հայաստանը զարգացման ուղի ընտրելու անորոշության մեջ էր և կանգնած էր երկընտրանքի առաջ, թե արդյոք պետք է շարունակել կառավարման հին մոդելով առաջ գնալ, երբ պետությունն ամենուր էր, թե պետք էր կառուցել նոր համակարգ՝ պետության նվազագույն մասնակցությամբ: Այս երկընտրանքի պայմաններում իշխանություններն ընտրեցին անցումը ազատ շուկայական տնտեսակարգին, որը, իրենց իսկ բնութագրմամբ, դյուրին գործ չէր, ճանապարհ էր՝ լի անորոշություններով, սակայն կանխորոշված էր բարեփոխումների ճակատագիրը: Օրվա իշխանությունների պնդմամբ՝ այդ ժամանակվա քաղաքական վերնախավը երկրի զարգացումը պայմանավորել էր «*ժողովրդավարական բարեփոխումներով, շուկայական տնտեսակարգ հաստատելով, սոցիալական, իրավական պետություն ունենալու հանգամանքով*» (Խաչատուրյան, 2020: 20-31): Մասնավորեցման և

ազատականացման քաղաքականությունները գործադրած նախկին իշխանությունների [ինքնա]գնահատման համաձայն՝ գների և առևտրի ազատականացումը, սահմանափակումների վերացումը և բիզնես գործունեության ներդրված կարգավորումները խթանել էին տնտեսության արագ վերականգնումը. «...*անարդյունավետ կոմունիստական դինոզավրերից անցում արեցինք դեպի նոր ընկերություններ (ֆիրմաներ)*» (Խաչատուրյան, 2020: 20-31):

Սակայն հետագայում 90-ականների որոշում կայացնողները կասեն, որ այդ կառուցվածքային բարեփոխումները տապալվեցին, իսկ քաղաքականությունները սկսեցին բարեփոխումների գաղափարախոսությանը հակառակ զարգանալ 1998-ից հետո միայն, երբ Ռոբերտ Քոչարյանի իշխանությունը համակարգային դարձրեց հովանավորչական, հակամրցակցային քաղաքականությունը՝ անդառնալի և անհաղթահարելի հետք թողնելով հայաստանյան տնտեսության վրա (Խաչատուրյան, 2020): Իսկ մինչ այդ ժամանակի իշխանությունները համոզված էին, որ այդ տարիներին մարդկանց կրած զրկանքները, հանրության խիստ բևեռացումը և բնակչության մեծ մասի աղքատացումը տեղի են ունեցել անկախացման և ազատականացման դեմ պայքարող ներքին ուժերի «ձեռամբ», որոնց *«շնորհիվ» հաղթանակների, բարեփոխումների տարիներն անվանվեցին «ցրտի ու մթի» տարիներ»*» (Մանուկյան, 2020: 7-30):

Ըստ էության՝ անկախ ժամանակի իշխանությունների՝ բարեփոխումներ անելու մտադրություններից, ցնցումային թերապիան ինքնին հասարակության մի խավի ձեռքում կապիտալի կուտակման մեխանիզմ էր, որն ազատ շուկայի և իբրև թե ժողովրդավարության գործարկման նախապայման էր: Մինչդեռ այդ քաղաքականությունը հանգեցրեց եղած թույլ ժողովրդավարական մեխանիզմների տապալմանը և քաղաքական համակարգում մեծամասշտաբ կոռուպցիայի ինստիտուցիոնալացմանը: Արտաքին խոշոր կապիտալի համագործակցությամբ և նորազատական գործիքների կիրառմամբ իշխող վերնախավերը տեղերում զավթեցին պետական և հանրային ինստիտուտները, ռեսուրսները և ենթակառուցվածքները, իսկ քաղաքական-տնտեսական համակարգը վերածեցին քրեաօլիգարխիկի:

Նորազատական ժողովրդավարացման խոստումը նոր ժողովրդավարացող հետխորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաս-

տանում, տապալվեց: Հետսոցիալիստական երկրների ցնցումային թերապիան՝ մասնավորապես, և աշխարհում ընթացող նորազատական քաղաքականությունները՝ ընդհանրապես, հիմնովին քննադատվել են բազմաթիվ տնտեսագետների կողմից (Stiglitz, 2019, Ժամակոչյան, Մարգարյան, 2021): Շուկայի ազատականացումը և մասնավորեցումը, կապիտալի և հարստության կուտակումը փոքրաթիվ մարդկանց՝ քաղաքական և տնտեսական վերնախավի ձեռքում հատկապես խնդրականացնում են հանրային այն շերտերը, որոնք սեփականաշնորհումը (թեև առանց ձևակերպելու, բայց լայն իմաստով՝ նորազատական կարգի ամրապնդումը) դիտարկում են թե՛ որպես ինքնին խնդիր, թե՛ որպես այսօրվա սոցիալ-տնտեսական վատթար իրադրության պատճառ:

> *«Հենց սկսվեց սեփականաշնորհումը, գործարանները բռնի սեփականաշնորհեցին՝ [տվեցին] մի մարդու, ու չասացին՝ եթե դու չես կարողանում աշխատեցնել, տուր թող ուրիշն աշխատեցնի: Ասացին՝ տալիս են քեզ, ուզո՞ւմ ես՝ քանդի, ծախի, ջարդի, փշրի, ինչ ուզում ես, արա: Ա՛յ դրանից սկսվեց մեր Հայաստանի անկումը»:*
>
> **36-53 տարեկան տղամարդ, Լճաշեն, Գեղարքունիքի մարզ**

> *«Սեփականաշնորհում են: Աշխատողը չգիտի՝ իր սեփականատերն ով է: Մենք ասում ենք Քաջարանի պղնձամոլիբդենային, բայց իրականում տենց չի կոչվում, կոչվում է Գոլդեն չգիտեմ ինչ: Շատ ենք լսում՝ քաջարանցիներն ասում են՝ մենք բանվոր ենք, քիչ ենք ստանում, ինչի՞ ենք քիչ ստանում, հետո ասում են՝ չգիտենք բարձրերում ովքեր են և այլն»:*
>
> **54-71 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ**

Հստակորեն ձևակերպելով և նկատելով հանրության և իշխանությունների շահերի տարանջատումը՝ շուկայի ազատականացման քաղաքականությունը և պետության դերի թուլացումը տնտեսական հարաբերությունների կարգավորման համատեքստում համարվում են մենաշնորհների արմատավորման, տնտեսական հարաբերություններում անօրինականությունների և շուկայում գների անկառավարելիության խորացման պատճառ:

«...Ով զարթնեց, ինչ գին ուզեց, էդ գինը ձեթին դնում է»:

54-71 տարեկան տղամարդ, Պառավաքար, Տավուշի մարզ

«Այո՛, շուկայի վերահսկողություն չկա: Ոչ ոք չի գալիս, այս ջուրը վերցնում, ասում՝ լսի՛, եթե դու սա գնել ես 500 դրամով, ինչո՞ւ ես վաճառում 1000 դրամով: Դրա վրա բե՛ր, տոկոսները դի՛ր, հետո տեսնենք, թե ինչ է ստացվում»:

54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ

«Մի պահ հիշո՞ւմ եք, որ ասին՝ ալյուրի դեֆիցիտ կլինի, ալյուրի մեշոկը [պարկը] հասցրին 18 հազարի ու վաճառեցին: Մեկը չկարողացավ ասել՝ այ ընկեր, այ սիրելիս, ինչո՞ւ ես էդպես բերում, վաճառում: Վերջը մեկը չի կարո՞ւմ դրանց դեմն առնի: Ասենք, դու ներկրողն ես, բերում ես, 18 հազարով ծախես մարդկանց վրա, հետո՞: Այսինքն՝ մեզ թվում ա, որ ինչ-որ անկառավարելի երկրում ենք ապրում»:

36-53 տարեկան կին, Մալիշկա, Վայոց ձորի մարզ

1.2 Կրթությունը և առողջապահությունը՝ շատ քննարկվող խնդիրներ

Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վատթարացման վրա ազդեցությունից զատ՝ 2020-ի սկզբին բռնկված կորոնավիրուսային համավարակը և Ղարաբաղյան երկրորդ պատերազմը էական բացասական ազդեցություն են ունեցել նաև կրթության և առողջապահության վրա. մենք դեռ երկար կզգանք դրանց հասցված վնասների հետևանքները:

Համաձայն Համաշխարհային բանկի կանխատեսումների՝ տարբեր երկրներում հայտարարված արտակարգ դրության և մեկուսացման պայմաններում դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների փակումը հնարավոր է հանգեցնի մեկ լիարժեք ուսումնական տարվա մեկ երրորդի չափով ուսումնառության կորստի[29], որը Հայաստանում ավելի ցածր է՝ 12 շաբաթ, և սովորողները հետ են ընկել մոտ մեկ կիսամյակի չափ[30]: Կրթական համակարգի առկա խնդիրների հետ մեկտեղ սա, ըստ ամենայնի, էլ ավելի կխորացնի անհավասարությունները՝ անհամաչափորեն ազդելով անապահով ընտանիքների սովորողների վրա, ինչպես նաև կխորացնի երկրում ֆունկցիոնալ անգրագիտության[6] մակարդակը:

Գլոբալ հյուսիսում և հարավում կրթության և հիմնական առողջապահության հասանելիության անհավասարությունները շարունակում են մնալ շատ խորը, և դրանք գրեթե ամենուր են՝ կրթական և առողջապահական ոլորտների բոլոր մակարդակներում: Հավասարության ճանապարհը, այսպես ասած, անցնում է մի քանի փուլերով, առաջնային փուլ են համարվում գրագիտությունը, որակյալ առողջապահության հասանելիությունը, զբաղվածությունը՝ ամենահարուստների կարողության պրոգրեսիվ հարկմամբ: Ավելին՝

29. Համաշխարհային բանկ. (2020, հոկտեմբեր 7). Առողջապահության և կրթության ոլորտի հատկացումների ավելացումն առանցքային է հետհամավարակի փուլում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հեռանկարային տնտեսությունների կայուն վերականգնման համար. *worldbank.org*. https://bit.ly/3LflrvN

30. Բաբաջանյան, Ա. (2021, նոյեմբեր 7). Կրթական «լոքդաուն»՝ ֆունկցիոնալ անգրագիտության տեսքով. ինչպե՞ս համավարակը բերեց թերուսության. *factor.am*. https://factor.am/438282.html

դեպի հավասարություն ճանապարհին կարևոր է նաև սեփական-նաշնորհված որոշ ոլորտների «ապամասնավորեցումը», ներառյալ կրթությունը, առողջապահությունը, տրանսպորտը և էներգետիկան (Piketty, 2022):

Ըստ տարբեր վիճակագրական տվյալների՝ Հայաստանում գրագիտության մակարդակը 99% է, սակայն, համաձայն տարբեր չափորոշիչներ հաշվի առնող չափումների, հանրապետությունում սովորողների առնվազն 20%-ը վերջին 17 տարիներին դժվարությամբ կամ առհասարակ չի համապատասխանել ֆունկցիոնալ գրագիտության չափանիշներին: Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Համընդհանուր հիմնական հմտությունների» զեկույցի՝ 2015-ի դրությամբ Հայաստանում սովորողների շուրջ 45%-ը ձեռք չի բերել անհրաժեշտ հիմնական հմտություններ[31]: Խնդիրն առավել խորանում է բնագիտական և մաթեմատիկական առարկաների գիտելիքների չափման առումով. աշակերտներից գրեթե ամեն երրորդը չի կարողանում կատարել թվաբանական պարզ գործողություններ, չունի կյանքի մասին գիտությունների բնագավառում հիմնարար գիտելիքներ[32]:

Կրթության ոլորտում առկա խնդիրներն առավել մտահոգիչ են դառնում, երբ դրանք դիտարկում ենք երկարաժամկետ հետևանքների տեսանկյունից. որակյալ կրթության անհասանելիությունը և անհամաչափությունը խորացնում են սոցիալական անարդարությունը և նպաստում աղքատության վերարտադրմանը:

Հայաստանում կրթության համակարգում առկա խնդիրների, կրթության որակի մասին քննարկումները լայն տարածում ունեն տարբեր մակարդակներում: Կրթության խնդիրները մշտապես հասարակության տարբեր շերտերի ուշադրության կենտրոնում են, քանի որ այդ ոլորտի շահառուները, ըստ էության, բոլոր քաղաքացիներն են, և քանի որ բոլորն այս կամ այն կերպ առնչակից են ոլորտին, ունեն ենթադրություններ և խոսում են խնդիրների մասին[33]:

---

31. Մանուկյան, Ն. (2020, փետրվար 10). Որքա՞ն գրագետ է Հայաստանը. *EVN Report*. https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/how-literate-is-armenia-2/

32. Նույն տեղում

33. Աբրահամյան, Ա. (2023, փետրվար 19). Դասագրքերը գնալով կորցնում են իրենց նշանակությունը. ապաքաղաքական զրույց Ժաննա Անդրեասյանի հետ. Տեսանյութ. *factor.am*. https://factor.am/613715.html:

Կրթական ոլորտում հետազոտական գիտելիքի բաց կա, սակայն քանակական մեթոդաբանությամբ աշխատող տարբեր հետազոտական կազմակերպություններ կրթության հարցը դարձնում են հետազոտության առարկա միայն այն ժամանակ, երբ այն դառնում է քաղաքական խնդիր: Այդ համատեքստում իրականացված հետազոտությունները սովորաբար այնքան նեղ ու սահմանափակ են, որ դրանց արդյունքները հասարակությանը մտահոգող իրական խնդիրներից չափազանց մեծ հեռավորության վրա են: Իսկ եթե մարդկանց խնդրենք, որպեսզի նրանք թվարկեն, թե որ խնդիրներն են իրենց ամենակարևորը թվում կրթության ոլորտում, կունենանք խնդիրների մեկ այլ ցուցակ, որոնք լրացուցիչ հետազոտության առարկա կարող են դառնալ (Բուրդիո, 2019):

Մեր հետազոտության շրջանակում, երբ խնդրում էինք մարդկանց մատնանշել այսօրվա հիմնարար խնդիրները, հաճախ լսում էինք կրթական համակարգում առկա խնդիրների՝ կրթության որակի և ոլորտում անհրաժեշտ բարեփոխումների մասին մտահոգություններ: Կրթության համակարգի խնդիրները հիմնականում փոխկապված են և փոխառնչվում են սոցիալական այլ հիմնահարցերի հետ՝ կազմելով մի չընդհատվող շղթայի մաս. դրանք թե՛ ինքնին խնդիրներ են, թե՛ այլ խնդիրների սկզբնապատճառ:

> *«Կրթությունից է գալիս վատ ապրելակերպը, վատ սոցիալական վիճակը»:*
>
> **36-53 տարեկան կին, Ապարան, Արագածոտնի մարզ**

> *«Լավ տնտեսություն ունենալու համար լավ տնտեսագետներ են պետք, լավ տնտեսագետներ ունենալու համար լավ կրթություն է պետք, լավ կրթության համար ներկայում ճիշտ քաղաքականություն է պետք և այլն»:*
>
> **18-35 տարեկան կին, Երևան**

Կրթական ոլորտում առանձնացվող հանրային մտահոգությունները բազմաթիվ են և լայն՝ նախադպրոցականից մինչև հետբուհական կրթություն և գիտության զարգացում: Միաժամանակ հետազոտությունը երևան է բերում ոլորտին վերաբերող հանրային պատ-

կերացումների բազմազանությունը, հաճախ նաև հակասականությունները և տարամետ դիրքորոշումները, օրինակ, պետության հռչակած բարեփոխումների նպատակներից և տրամաբանությունից կամ կրթության ոլորտի մասնագետների գնահատականներից: Երբ պետության առաջարկած բարեփոխումների տրամաբանությունը և քաղաքականությունները չեն համապատասխանում մարդկանց ակնկալիքներին, առաջ է գալիս հանրային քննադատությունը:

> *«Մեր կրթական համակարգը քանդել, զրոյից հավաքել է պետք, որովհետև այն, ինչ հիմա անում են, շատ ծիծաղելի է, էլի: Դպրոցները ծանրաբեռնում են, ամեն անգամ ծանրաբեռնում նոր չափորոշիչներով, ուսուցիչներին այնտեղ են կտտանքների ենթարկում, աշակերտներին այնտեղ են չարչարում, բոլորը մաքառում են, որ այնքան է որ ինչ-որ ուսումնական պլաններ հասցնեն ու գալչկան* [խմբ.՝ ստուգանիշ] *դնեն, որ հասցրինք, բայց կրթություն չկա, էլի»:*
>
> **36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**

> *«Ես կուզենամ՝ ինչ-որ բան փոխվի, բայց մենք մնանք մեր ազգային գծի վրա: Հայերենը շատ լինի, ազգայինը շատ լինի, ու դա լինի իրականում, ոչ թե ձևական բնույթ ունենա»:*
>
> **36-53 տարեկան կին, Ապարան, Արագածոտնի մարզ**

ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրում կրթության և գիտության զարգացումը սահմանված է որպես գերակա խնդիր, որի միջոցով հնարավոր կլինի հասնել կայուն ու ներառական զարգացման, համընդհանուր բարեկեցության: Ըստ ծրագրի՝ կրթության և գիտության ոլորտում նախատեսվող բարեփոխումները պետք է միտված լինեն ձևավորելու *քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ, ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու*[34]: Ֆրանսիացի տնտեսագետ Տոմա

34. Gov.am (2022). *ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր*. վերցվել է՝ https://www.gov.am/files/docs/4586.pdf

Պիկետին պնդում էր, որ «*երկարաժամկետ հեռանկարում աշխատանքային անհավասարությունները նվազեցնելու, ինչպես նաև աշխատուժի միջին արտադրողականությունը և տնտեսության ընդհանուր աճը բարձրացնելու լավագույն միջոցը, անկասկած, կրթության մեջ ներդրումներ անելն է*» (Piketty, 2014: 306–307): 2008-2018 թթ. ՀՀ պետական բյուջեում կրթության և գիտության ոլորտին հատկացվող ծախսերի կշիռն ընդհանուր ծախսերի մեջ ունեցել է նվազող դինամիկա: 2018 թվականն այդ առումով եղել է շրջադարձային տարի, քանի որ ընդհանուր ծախսերի մեջ այս ոլորտին ուղղված գումարների կշռի փոփոխությունը դրական է եղել և աճել է նախորդ տասը տարիների համեմատ 5 տոկոսային կետով[35]: ՀՀ պետական բյուջեի 2023 թ. նախագծով կրթության ոլորտի համար նախատեսված ծախսերը հաշվարկված են 212 մլրդ դրամ՝ նախատեսված նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորման համար[36]: Սակայն արդյո՞ք այս ֆինանսական հատկացումները բավարար են կրթության և գիտության բնագավառներում որակական փոփոխությունների հասնելու և սոցիալ-տնտեսական անհավասարությունների մեղմման համար: Որոշ փորձագետներ, վերլուծելով կրթության ոլորտի բյուջետային հատկացումները, հանգել են այն եզրակացության, որ «*կառավարությունը հրաժարվել է հավակնոտ ծրագրերից*»[37], և դրա պատճառը մեծ մասամբ պայմանավորված է նախկին հավակնոտ ծրագրերի ուղղությամբ հաջողություններ չգրանցելու հետ: Բյուջետային հատկացումները և բյուջեն ավելացնելը միայն բավարար չեն որակական փոփոխությունների հասնելու համար: Որակական փոփոխությունների համար ծրագրերի գնահատման չափորոշիչներում անհրաժեշտ է սահմանել ոչ միայն ֆինանսական, այլ նաև ոչ ֆինանսական ցուցիչներ և ըստ այդմ գնահատել այդ ծրագրերի արդյունքներն ու արդյունավետությունը:

---

35. Ավետիսյան, Հ. (2018). Բյուջեից կրթությանն ուղղվող միջոցներն աճո՞ւմ են, թե՞ նվազում. *hetq.am.* https://hetq.am/hy/article/98583

36. Հերգանյան, Ս. (2022, հոկտեմբեր 12). Բյուջե 2023. որքան է նախատեսվում ծախսել բանակի, թոշակների և այլ ուղղություններով. *hetq.am.* https://hetq.am/hy/article/149209

37. Պետրոսյան, Ն. (2022, հոկտեմբեր 27). 2023 թ. բյուջեում կրթության ու գիտության հատկացումներն ավելացել են, հավակնությունները՝ նվազել. *armradio.am.* https://cutt.ly/R8ViiSY

Կրթության ոլորտի բարեփոխումների, դրանց անհրաժեշտության մասին քննարկումներում հանրային տարբեր խմբեր կարևորում են ապակենտրոն կրթության զարգացումը, գենդերային ներկայացվածությունը, կրթության ոլորտի կառուցվածքի, կառավարման, համակարգային կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը, ինչպես նաև սովորողի՝ աշակերտի կամ ուսանողի սովորելու ցանկության բացակայության, մոտիվացիաների բացակայության և շատ այլ ենթախնդիրներ: Մասնավորապես, մարդիկ կարևորում են կրթության և գիտության ոլորտի բարեփոխումների ապակենտրոն իրականացումը, որը կներառի ոչ միայն Երևանի, այլև մարզային հանրակրթական, միջին մասնագիտական և բուհական կրթական հաստատություններին:

> *«Դե, օրինակ, այս խնդիրը Վանաձորի հետ է կապված: Հիմնական, գլխավոր ուսումնական բարելավումներն արվում են ԵՊՀ-ում, Ամերիկյան համալսարանում, Բժշկականում, բայց չեն փորձում զարգացնել այստեղի համալսարանները: Հայաստանում տարբեր համալսարաններ կան, կենտրոններ, քոլեջներ, որտեղ ուսանողները կարող են մեծ հաջողություններ հասնել: Բայց այդ կրթությունը չեն զարգացնում այստեղ: Այստեղ մատների արանքով են նայում այստեղի կրթությանը, դասաժամերը շատ քիչ են, դասամիջոցներն ավելի երկար են, քան դասերը* [քմծիծաղով]»:

18-35 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

Ավելին՝ կրթության ոլորտի առանցքային խնդիրներից մեկն էլ սովորողների մոտիվացիայի բացակայությունն է, որ ձևակերպվում է ինքնաքննադատության և ինքնանդրադարձի համատեքստում:

> *«Բոլորը բողոքում են կրթության որակից, բայց ես սովորում եմ, իմ կարծիքով, կարելի է ասել, Հայաստանի լավագույն համալսարաններից մեկում՝ Հերացու անվան բժշկական համալսարանում: Կրթությունը շատ լավն է, բայց համալսարանից շատ մարդիկ դուրս են մնում, ինչո՞ւ, որովհետև կրթվել չեն ցանկանում: Հարցը նրա մեջ է՝ դուք ուզո՞ւմ եք սովորել, թե՞ ոչ: Կապ չունի, թե դուք որ համալսարանում եք սովորում:*

18-35 տարեկան կին, Երևան

Ինչպես կրթության, այնպես էլ առողջապահության ոլորտին Հայաստանում առնչվում են գրեթե բոլորը. ՀՀ քաղաքացիներից յուրաքանչյուրն իր կյանքի այս կամ այն փուլում հարաբերվել է առողջապահական որոշակի ինստիտուտի հետ, հետևաբար սեփական փորձառության հիման վրա սահմանում է առողջապահական ոլորտի խնդիրների հիմնական շրջանակը, պատկերացնում, թե ինչպիսին պետք է լինի ոլորտը, խնդիրների լուծման համար ունի իր պատկերացումները:

Ինչպես կրթության, այնպես էլ առողջապահության ոլորտում կորոնավիրուսի համավարակը և Ղարաբաղյան երկրորդ պատերազմն ու դրանց հետևանքները ակնհայտորեն սրել են բնակիչների առողջապահական կարիքները և ոլորտի խնդիրները՝ է՛լ ավելի հրատապ դարձնելով լուծումների անհրաժեշտությունը: Ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, առողջապահության ոլորտում արագ և տեսանելի բարեփոխումների կարիք կա, որոնք պետք է միտված լինեն հասանելի, մատչելի, բարձր որակի առողջապահական ծառայությունների մատուցմանը, առողջապահական համակարգում բոլորի ներգրավվածությանը, ինչպես նաև համընդհանուր առողջության, հանրային առողջության պահպանմանը:

Հայաստանում առողջապահության հետ կապված զրկանքները մեծ դեր ունեն բազմաչափ աղքատության ձևավորման և ընդհանուր աղքատության մեջ զրկանքների չափը պայմանավորելու հարցում: Ընդհանուր աղքատության մեջ առողջապահության ոլորտում առկա զրկանքների ծավալը 87,8% է: Այսինքն՝ աղքատ բնակչության համար առողջապահությունը հիմնարար զրկանքներից մեկն է: Առողջապահության հետ կապված զրկանքները ոչ միայն աղքատության բնութագրական երևույթներից են, այլ աղքատությունը վերարտադրող և նույնիսկ աղքատության մշակույթը խորացնող պատճառ (Թադևոսյան, 2018): Անհավասարությունը արտահայտվում է նաև այն բանում, որ աղքատների ոչ միայն կյանքի տևողությունն է ավելի կարճ, այլև առողջապահական տեսանկյունից կյանքի որակն է շատ ցածր:

Հայաստանի անկախության տարիներին առողջապահությունը չի համարվել առաջնահերթ ուղղություն, և պետական բյուջեի հատկացումները միջինում չեն գերազանցել տարեկան բյուջետային ծախսերի 6%-ը, իսկ ՀՆԱ-ում՝ 1,5%-ը: Պետության իրակա-

նացրած առողջապահական ծրագրերի և միջոցառումների համար նախատեսվող գումարները դեռևս հաշվարկվում են հիմնականում հիվանդանոցային դեպքերի և կատարված լաբորատոր-գործիքային հետազոտությունների թվաքանակներով, համապատասխան ծրագրերի և միջոցառումների կազմման ընթացքում հաշվի չեն առնվում բնակչության սեռատարիքային կամ առողջական առանձնահատկությունները, հանրային առողջությունը[38]: Ոլորտի ոչ բավարար չափով ֆինանսավորումը հանգեցրել է հասարակության սոցիալապես անապահով հատվածի թույլ թիրախավորմանը, իրական ծախսերից ցածր փոխհատուցվող գների, բժշկական մասնագիտացված անձնակազմի բացակայությանը մարզերում, բժշկական կազմակերպությունների թերի ծանրաբեռնվածությանը և այլ խնդիրների: Ֆինանսական պատճառներով բնակչության շուրջ 20,1%-ը չի հաճախում առողջության առաջնային պահպանման բժշկի: Ավելին՝ նյութական և ոչ նյութական միջոցների պակասը խոչընդոտում է համակարգի զարգացումը և բուժօգնության որակի բարելավումը, նպաստում է բազմաթիվ ընտանիքների աղքատացմանը առողջապահական աղետալի ծախսերի պատճառով, խոչընդոտում է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների հասանելիության և մատչելիության բարելավումը: Բնակչության շուրջ 9%-ի սպառողական ծախսերի ավելի քան 25%-ը առողջապահական ծախսերն են, ինչի հետևանքով վերջիններիս շուրջ 6%-ը աղքատանում է, ինչն ամենաբարձր ցուցանիշն է տարածաշրջանում[39]:

> *«Ամենակարևորը առողջության ոլորտն է, որ չկա: Մարդիկ հիվանդանում են, և իրենք նույնիսկ այդ տարրական անալիզների գումարը չունեն, որ տան»:*
>
> **36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**

> *«Բժշկության հարցն է, որ ծանր հիվանդ ես, դիմում ես բժշկի, ասում են՝ մինչև փողը չբերես, քեզ չենք բուժի»:*
>
> **54-71 տարեկան կին, Երազգավորս, Շիրակի մարզ**

---

38. e-draft.am. (2019)շ. *Հայաստանի առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգի Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծ*. վերցվել է՝ https://bit.ly/3yB9ngc.

39. Նույն տեղում

Առողջապահական համակարգի հասանելիության և մատչելիության խնդիրը ոչ միայն բուն առողջապահական հաստատությունների հետ է կապված, այլև սրվում է առողջության պահպանման համար անհրաժեշտ դեղորայքի անմատչելիությամբ և գնման դժվարություններով. հատկապես գյուղական համայնքներում դեղատների բացակայությունը է՛լ ավելի է բարդացնում առանց այն էլ սոցիալապես ծանր դրության մեջ ապրող մարդկանց կյանքը:

> *«Մենք՝ ընկերուհիներով, բոլորս թոշակառու ենք, հավաքվում ենք, խոսում ենք, ասում ենք՝ ինչո՞ւ է պետությունը մեզ այդքան վատ պահում: Ո՛չ դեղորայքի գներն է մի քիչ իջեցնում, ո՛չ մի բանի իրավունք ունենք որպես թոշակառու»:*
>
> **54-71 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ**

> *«Մեծ գյուղ է, բայց դեղատուն չունենք»:*
>
> **36-53 տարեկան կին, Մալիշկա, Վայոց ձորի մարզ**

> *«Մի դեղի համար ես տաքսու վարորդին երեք հազար դրամ եմ տալիս, որ հասնեմ ավտոկայան, մի դեղ գնեմ ու հետ գամ»:*
>
> **54-71 տարեկան կին, Երազգավորս, Շիրակի մարզ**

Կարևոր է նկատել, որ հետազոտության հատուկենտ մասնակիցներ որպես առողջապահական ոլորտի նշված խնդիրների լուծում են տեսնում առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը, որը կապահովի առողջապահական ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը հանրային բոլոր շերտերի համար:

> *«Ցանկալի կլիներ ունենալ [առողջության ապահովագրություն], եթե վճարովի, թեկուզ ինչ-որ փոքր գումար վճարեինք: Հնարավորության դեպքում թոշակառուն կարողանար հանգիստ գնալ բժշկի»:*

> *«Ապահովագրությունը պարտադիր թող լինի ամբողջ ազգաբնակչության համար»:*
>
> **54-71 տարեկան կանայք, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ**

1.3 Համայնքների խոշորացումը և հանրային շահը

Համայնքների խոշորացման հայեցակարգն ընդունվել է դեռևս 2011-ին՝ Սերժ Սարգսյանի նախագահության և Տիգրան Սարգսյանի վարչապետության օրոք, և մեկնարկել է 2015-ին: Խոշորացման ռեֆորմի խնդրահարույց քաղաքականությունը հենված էր ոչ թե համայնքների կարիքների և համայնքների միջև ձևավորված կապերի, այլ նեղ կուսակցական շահի վրա, որ առաջ էր մղում ժամանակի ՀՀԿ-ական իշխանությունը (Խաչատրյան, 2021): Այն ժամանակվա քաղաքական մտայնությունը օրվա իշխանություններին լոյալ գյուղապետի կամ տվյալ տարածաշրջանից ՀՀԿ-ական պատգամավորի «ճաշակի» առաջնադասումն էր (Խաչատրյան, 2021): Կենտրոնացվածից ապակենտրոնացված կառավարման համակարգի անցումը տարիներ շարունակ եղել է բարեփոխումների նախագծերում, որոնց համար ժամանակի իշխանությունները հայցել և ստացել են միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը: Սակայն համայնքների և դրանց բնակիչների կարիքների, ինչպես նաև համայնքների միջև տարիների ընթացքում ձևավորված սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական կապերի անտեսումը ակնառու էր ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր: Մինչ օրս մարզային համայնքների բնակիչներից շատերի համար տեսանելի չեն համայնքների խոշորացման տնտեսական և սոցիալական առավելությունները, որոնք, ըստ էության, այս ռեֆորմի հիմնական նպատակը պիտի լինեին: Խոշորացված համայնքների մեջ մտած փոքր համայնքների բնակիչների մեծ մասը շարունակում է պնդել, որ իրենց բարձրաձայնած խնդիրները մնում են չլսված և չլուծված, իրենց ձայնը ներկայացված չէ, իսկ բարձրաձայնած խնդիրների լուծումը լի է բյուրոկրատական քաշքշուկներով, որոնք հազվադեպ են դրական վերջնարդյունք ունենում:

> *«Մեր ժողովուրդը չէր պատկերացնում, թե ինչ է նշանակում խոշորացումը, թե չէ ոչ մեկը չէր ընտրի: Գիտե՞ս՝ ինչ արեց. մի հատ հասարակ բանի համար պետք է գնաս հասնես Ատոմնի [Մեծամոր]: Էլի ստեղ գյուղապետը էդ հարցերը լուծում էր,*

էլի: Ատոմնի գնալն էլ էդքան հեշտ բան չի, փող է պետք, գյուղացուն ո՞ւր ա փող, էս գարնան գլուխ արի գյուղացուն փող ճարի»:

54-71 տարեկան տղամարդ, Նալբանդյան, Արմավիրի մարզ

Շատ են նաև պնդումներն առ այն, որ համայնքների խոշորացումն արվել է առանց բնակիչների կարիքները և այլ համայնքների հետ արդեն իսկ գոյություն ունեցող կապերը հաշվի առնելու: Ավելին՝ համայնքների միջև հաղորդակցությունների, բարվոք ճանապարհների, ինչպես նաև միջհամայնքային տրանսպորտի բացակայությունը կամ տրանսպորտի աշխատանքային սահմանափակ գրաֆիկը լրացուցիչ խնդիրներ են ստեղծում բնակիչների համար, որոնք այս կամ այն հարցով կարիք ունեն գնալու խոշորացված համայնքի համայնքապետարան:

«Քանի որ Իջևանն արդեն նաև խոշորացված համայնք է, խոշորացումից հետո շատ մեծ խնդիր է ներհամայնքային տրանսպորտի բացակայությունը: Սա մեծագույն խնդիր է, և այդ համայնքներն իրար կապող կոմունիկացիա չկա, ճանապարհների մի մասը բացակայում է, ինչ էլ որ կա, լավը չի, ու սա ահռելի հետևանքների է բերում հիմա. որ թվարկեմ, վերջը չի երևում»:

36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Համայնքների խոշորացման խնդրահարույց լինելը բնակիչները նաև մեկնաբանում են այն տեսանկյունից, որ նախկինում համայնքներն ունեին իրենց ներհամայնքային բյուջեն, որն իրենք էին տնօրինում, տեղում առաջացած խնդիրներին լուծումներ էին տալիս: Սակայն համայնքների խոշորացման հետևանքով կրճատվել են աշխատատեղերը, համայնքային բյուջեի տնօրինումն էլ արդեն խոշորացված համայնքում է, իսկ տեղական մակարդակում, այստեղ և հիմա առկա խնդիրների լուծումը պատվիրակված է խոշորացված համայնքին, ինչի հետևանքով էլ լուծումները ձգձգվում են կամ մնում են առկախված:

> *«Մեր բյուջեն մեր գյուղը տնօրինում էր, ունեինք լավ ղեկավարներ, լավ հավեսով գործ էին անում, առուները մաքրում էին... որ խոշորացումը եղավ, արդեն 4-րդ, 5-րդ տարին ա, մի հատ առվի մաքրում՝ որպես ծրագիր, չկա, իսկ էն վախտ գյուղապետը կանչում էր մի քանի հոգու, օրավարձով աշխատում էին, հիմա դա էլ չունենք, ա՛յ խնդիրներից մեկն էլ դա ա»:*

54-71 տարեկան տղամարդ, Արագած, Արագածոտնի մարզ

Ընդհանուր առմամբ մարզերում ապրող մարդիկ բացասական վերաբերմունք ունեն համայնքների խոշորացմանը: Նման վերաբերմունքը հատկապես այն համայնքների (հիմնականում՝ գյուղական) բնակիչների շրջանում է, որոնք անմիջապես ազդվել են այս փոփոխությունից. մարդիկ չեն հավատում խոշորացման ռեֆորմին: Անգամ եթե խոշորացումը դրական փոփոխությունների ներուժ ունի, մարզերի բնակիչները կասկածամտությամբ են վերաբերվում դրան: Ինչպես այլ ռեֆորմների պարագայում է, այստեղ ևս փոքրաթիվ խմբերը կամ առանձին անհատները, որոնք շահել են ռեֆորմի գործադրումից, և որոնց կյանքում դրական փոփոխություն է եղել դրա շնորհիվ, հակված են առավել դրական վերաբերմունքի:

> *«Դե ամուսինս առաջ փոքր համայնքում էր աշխատում, հիմա մեծ համայնքապետարանում է աշխատում: Կոնկրետ ինքը խոշորացումից չի դժգոհում»:*

54-71 տարեկան կին, Վարդենիս,Գեղարքունիքի մարզ

1.4 Բանակը՝ աշխատատեղ

Հայաստանյան բանակի իրական վիճակի, բանակում բռնությունների, սպանությունների և ինքնասպանությունների, ռազմական վերնախավի կոռումպացվածության և ոչ կոմպետենտության, թալանի հարցերը մի շարք այլ խնդիրների հետ մեծ սրությամբ հանրային քննարկման օրակարգ վերադարձան Ղարաբաղյան երկրորդ պատերազմի պարտությունից հետո: Տարիներ շարունակ Հայաստանում ռազմականացված վերնախավերն իրենց քաղաքական և տնտեսական շահերը քողարկում էին ազգայնական-հայրենասիրական դիսկուրսով[40]: Բանակի «սրբադասումը» տարիներ ի վեր տիրապետող հանրային-քաղաքական գործողություն էր Հայաստանում: Չնայած պետական ինստիտուտների, այդ թվում՝ բանակի թալանին և բանակում բռնություններին՝ դրա քննադատությունը հեշտությամբ պիտակվում էր իբրև դավաճանություն. «Կարելի էր թալանել բանակն ու պետությունը, բայց չէր կարելի այդ թալանով զբաղված վերնախավերի դեմ բողոքել, քանի որ ըստ տիրապետող դիսկուրսի՝ դա կարող էր վտանգել Արցախի ու Հայաստանի անվտանգությունը»[41]: Չնայած առերևույթ անձեռնմխելիության և չհարցադրման հանրային-քաղաքական կոնսենսուսին՝ բանակը նաև վախի և արտագաղթի պատճառ է[ր] տղա երեխա ունեցող բազմաթիվ ընտանիքների համար:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի պարտությունը ընդլայնել է բանակին քննադատորեն մոտենալու, դրա խնդիրների մասին բարձրաձայնելու տարածքը. այլևս «անբարոյական» չէ կոռումպացված, Ղարաբաղյան առաջին պատերազմի արդյունքում հարստացած, իսկ երկրորդում պարտված գեներալիտետին քննադատելը[7]:

Մեր հետազոտությունը ևս ցույց տվեց, որ բանակի մասին հանրային քննարկումներն առավել անկաշկանդ են, ավելին՝ բանակն այլևս միայն ռազմի ոլորտին չի պատկանում. այս ընդարձակված քննարկումներում երևան է գալիս բանակի սոցիալական երեսը:

---

40. Թադևոսյան, Ա. (2022, մարտ 19). Կյանքը պատերազմից հետո՝ ըստ մասնակիցների պատմությունների. *infocom.am.* https://infocom.am/hy/article/78289:

41. Նույն տեղում

Հանրության առավել խոցելի խմբերի համար այն քննարկվում է նախ և առաջ իբրև աշխատավայր, *«ապրելու միջոց վաստակելու տեղ»:*

Բանակի շուրջ հանրային-քաղաքական ակտիվացած քննարկումների հետևանքորքում ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022 թ. առաջարկել է փոփոխություններ անել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում՝ պարտադիր ժամկետային ծառայությունից անցում կատարելով պայմանագրային զինվորական ծառայության, որի համաձայն՝ սպայական, ենթասպայական և շարքային կազմերի այն զինծառայողները, որոնք զբաղեցնում են մարտական և դրան հավասարեցված խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ, ատեստավորման համակարգի միջոցով հնարավորություն կունենան ստանալու լրավճարներ[42]:

Նախագիծը, ըստ էության, սոցիալական «բոնուսների» համակարգ է ներդնում՝ ռազմի ոլորտը հանրության համար առավել գրավիչ աշխատատեղ դարձնելու համար: Ավելին՝ պարտադիր զինվորական ծառայության աստիճանական նվազեցման տրամաբանության շրջանակում առաջարկվում է պետական բյուջե 24 միլիոն դրամ վճարելու պայմանով զինծառայողին վաղաժամկետ ազատել զինծառայությունից: Այս թվացյալ առաջադեմ փոփոխությունը, սակայն, հակասում է սոցիալական արդարության սկզբունքին՝ բանակից «ազատվելու» հնարավորություն տալով միայն հասարակության հարուստ խավին, իսկ պայմանագրային զինծառայության գրավչությունը ներկայացնող քաղաքականությունները և դրանց հանրահռչակմանն ուղղված և եթերը լցրած զանազան սոցիալական գովազդներն ուղղված են հանրության առավելապես անապահով խավերին՝ առաջարկելով նրանց կայուն եկամուտ, անշարժ գույք ձեռք բերելու արտոնություններ, այլևայլ սոցիալական երաշխիքներ:

42. e-draft.am. (2022). *Տեղեկանք-հիմնավորում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.* վերցվել է՝ https://www.e-draft.am/projects/4679/justification:

2023 թ. զգալիորեն մեծացած ռազմական բյուջեն է՛լ ավելի մեծ թափով է ուղղվելու հասարակական տարբեր ոլորտների և շերտերի ռազմականացմանը՝ սոցիալապես անապահով խավերի՝ իբրև մարդուժի ներգրավմանը բանակում:

Սակայն հանրությանը հուզում է ոչ թե ռազմականացման միտումը (դրանք մի մասի համար ողջունելի են, ինչին դեռ կանդրադառնանք), այլ ռազմի ոլորտի բարեփոխումների արդյունքում հասարակության սոցիալ-տնտեսական դրության բարելավման կարիքը: Սա ևս մեկ անգամ գալիս է փաստելու, որ հանրության սոցիալապես խոցելի շերտերը մեծապես կախված են բանակից՝ իբրև աշխատատեղից: Պայմանագրային զինծառայողների ցածր աշխատավարձի «անթույլատրելիությունը» քննարկման առարկա է հատկապես ոստիկանների, պատգամավորների կամ պետական համակարգի աշխատողների համեմատաբար բարձր աշխատավարձերի և պարգևավճարների համատեքստում:

> *«Բա էդ խեղճ նայոմնիկը* [խմբ.՝ պայմանագրային զինծառայող], *որ արյունը ճակատին կապած՝ ստանում է 180 հազար դրամ, ինքը ի՞նչ անի: Ես բազմիցս գրել եմ քոմենթներում, որ գոնե զինվորների աշխատավարձը բարձրացրեք: Թող որպես աշխատանք իրանք չկանգնեն, այլ որպես հայրենիքի պաշտպան կանգնեն: Էնքան որ ձևական չկանգնեն իրանք»:*
>
> **36-53 տարեկան կին, Մալիշկա, Վայոց ձորի մարզ**

> *«Զինվորականը, եթե ինքը կամավոր գնացել է, կռվում է ինձ պահելու, ապահովելու համար, ստանում է 220-300 հազար դրամ, բայց ոստիկանին տալիս են 1000 դոլար, 1500 դոլար... Որտե՞ղ ա գրած տենց բան»:*
>
> **54-71 տարեկան տղամարդ, Արագած, Արագածոտնի մարզ**

Ռազմական ոլորտի մեկ այլ շերտի՝ ոստիկանների թվի ավելացումը՝ նրանց ստացած աշխատավարձի չափը, քննադատվում է իբրև չարդարացված ծախս, մյուս կողմից՝ ոստիկանացումը ներքաղաքական լարված պայմաններում դիտարկվում է իբրև նշանակալի՝ կարգուկանոնի հաստատման համար:

> *«Ասում են՝ ինչի՞ են ոստիկանները շատ: Բա որ դրանք էլ չլինեն, իրար ուտե՞ն: Բա ուժայինը որ չլինի, դրանք ամենավերջին ձևով իրար ուտելու են»:*
>
> **54-71 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ**

Ռազմականացման աճի պայմաններում հանրության որոշ խմբեր, սակայն, խնդրականացնում են բանակի՝ հիմնական աշխատատեղ լինելը աշխատանքային այլընտրանքների բացակայության պայմաններում: Մարզային, սահմանամերձ համայնքներում երիտասարդ տղամարդկանց համար պայմանագրային զինծառայությունը տիրապետող աշխատանքային ոլորտ է: Պայմանագրային զինծառայող չլինելն այս պայմաններում քիչ այլընտրանք ունի. վերջինիս հաղթահարումը հաճախ արտագաղթն է:

> *«Մեր խնդիրն այն է, որ մի հատ աշխատատեղ լինի՝ բացի վայեննիից* [խմբ.՝ զինվորական ծառայությունը], *որ երիտասարդներն աշխատեն, չգնան: Մեզ լքում են: Մի հատ հիմնարկ լինի, մի երկու հատ»:*
>
> **54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ**

Այսպես, չնայած պատերազմի պարտությունից ազդված և դրանով մեծապես պայմանավորված առկա տեսակետին, որ բանակի ուժեղացումը և նորանոր սպառազինություններով հարստացումը, սեփական պաշտպանական զենք-զինամթերք արտադրելը օրհասական հիմնախնդիրներ են Հայաստանի անվտանգությունն ապահովելու տեսանկյունից, բանակի՝ իբրև աշխատատեղի խնդիրն այսօր հանրությանը մտահոգող հիմնարար հարցերից է, որ ակներև է դարձնում ռազմականացման և աղքատության, ռազմականացման և սոցիալական արդարության կապը:

ՄԱՍ 2

Իդեալականացված կարգուկանոնի հանրային ցանկությունը

2.1 Ստալինի նոստալգիան

Համաձայն «Փյու» հետազոտական կենտրոնի՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում 2015-2016 թթ. իրականացված քանակական հետազոտության տվյալների՝ հետազոտության մասնակիցների մեծ մասը Խորհրդային Միության փլուզումը համարում էր բացասական շրջադարձ: Այսպես՝ Ռուսաստանում, Մոլդովայում, Հայաստանում հարցվածների տասից առնվազն յոթը կարծում է, որ Խորհրդային Միության փլուզումը «վատ բան է»: Խորհրդային Միության փլուզումն առավել դրական լույսի ներքո են մեկնաբանում Բալթյան երկրների (Էստոնիա, Լատվիա, Լիտվա) հասարակությունները, որոնք Խորհրդային Միությանն անդամակցումը դիտարկում են գաղութատիրության և բռնակցման համատեքստում[43]: Ավելի վաղ՝ 2013 թ., հետխորհրդային 11 երկրներում իրականացված հետազոտության արդյունքներով[44], հետխորհրդային այս երկրների բնակիչների կարծիքով Խորհրդային Միության փլուզումը ավելի շատ վնասել, քան օգնել է այս երկրներին:

Գրեթե բոլոր հետազոտությունների պարագայում խորհրդային նոստալգիան ավելի բնորոշ է 35 տարեկանից բարձր մարդկանց: Համաձայն ՀՌԿԿ-Հայաստանի «Կովկասյան բարոմետր. 2021»-ի տվյալների՝ ՀՀ բնակչության 67%-ը բացասական է գնահատում Խորհրդային Միության փլուզումը Հայաստանի համար (իսկ 22%-ը՝ դրական): Իբրև բացասական հետևանքներ՝ առաջ են քաշվում հասարակության տնտեսական վիճակի վատթարացումը, աշխատատեղերի նվազումը, Ղարաբաղյան կոնֆլիկտի բռնկումը, հարուստների և աղքատների միջև տարբերությունների խորացումը, ընկերների և բարեկամների հետ կապերի խզումը, նախկին Խորհրդային Միության տարածքում ճամփորդությունների հնարավորության նվազումը և այլն[45]: Նմանատիպ են ընկալումները նաև հետխորհրդային այլ երկրներում. մարդիկ ամենաշատը կարո-

43. Masci, D. (2017, June 29). In Russia, Nostalgia for Soviet Union and Positive Feelings about Stalin. *Pew Research Center.* https://www.pewresearch.org/fact-tank/2017/06/29/in-russia-nostalgia-for-soviet-union-and-positive-feelings-about-stalin/.

44. Esipova, N., & Ray, J. (2013, December 19). Former Soviet Countries See More Harm from Breakup: Residents More than Twice as Likely to Say Collapse Hurt Their Country. *GALLUP. GALLUP.* https://news.gallup.com/poll/166538/former-soviet-countries-harm-breakup.aspx

45. ՀՌԿԿ-Հայաստան. (2022, հունիս). Կովկասյան բարոմետր. 2021-2022. *crrc.am.* https://bit.ly/3zA9byz

տում են ընդհանուր տնտեսական համակարգը, որը ֆինանսական կայունություն էր ապահովում, իսկ պատկանելությունը ինչ-որ «մեծ ուժի» կարևորության զգացում էր ներշնչում՝ ի հակադրություն ներկայի վստահության հենարանների թուլացման և դաժանությունների ավելացման[46]:

Անցումը նորազատական կարգին և նորազատական ռեֆորմները, որոնք ագրեսիվորեն առաջ մղվեցին հետխորհրդային երկրներում՝ ի դեմս մասնավորեցման ու խստամբերության (austerity), էականորեն վատթարացրին հասարակության տնտեսական դրությունը՝ կապիտալը կենտրոնացնելով նոր ձևավորված օլիգարխիկ բիզնեսմենների դասի ձեռքում, կրճատելով աշխատատեղերը, ինչպես նաև խորացնելով հարուստների և աղքատների միջև ճեղքվածքը (Scheidel, 2017):

Խորհրդային նոստալգիայի հետնախորքում մեծ է նաև նոստալգիան Իոսիֆ Ստալինի նկատմամբ: Հարցվածների մեծ մասն ավելի դրական վերաբերմունք ունի հենց Ստալինի, քան, օրինակ, ԽՍՀՄ վերջին տարիների առաջնորդ և ԽՍՀՄ փլուզման հետ ասոցացվող Միխայիլ Գորբաչովի նկատմամբ: Ռուսաստանում, Հայաստանում, Մոլդովայում, ինչպես նաև Վրաստանում Ստալինի նկատմամբ վերաբերմունքը «դրական» կամ «հիմնականում դրական» է (մոտ 58%), իսկ Գորբաչովի հանդեպ «դրական» կամ «հիմնականում դրական» վերաբերմունքը մոտ 22% է[47]:

Հետաքրքիր է նկատել, որ հետխորհրդային տարածաշրջանում, հատկապես Ռուսաստանում, Ստալինի ժողովրդականությունը աճում է, ընդ որում՝ նաև երիտասարդների շրջանում: Այսպես՝ «Լևադա» անկախ հետազոտական կենտրոնի 2021 թ. մայիսին իրականացրած հարցման տվյալների համաձայն, ռուսաստանցիների 56%-ը ավելի շուտ համաձայն և լիովին համաձայն է, որ «Ստալինը մեծ առաջնորդ էր»: Այս ցուցանիշը մոտ երկու անգամ աճել է 2016-ից ի վեր՝ 28%-ից հասնելով 56%-ի[48]:

---

46. Levada-Center. (2017, January 9). The Fall of the Soviet Union. *levada.ru.* https://www.levada.ru/en/2017/01/09/the-fall-of-the-soviet-union/

47. Masci, D. (2017, June 29). In Russia, Nostalgia for Soviet Union and Positive Feelings about Stalin. *Pew Research Center.* https://pewrsr.ch/3Ta11pg

48. Левада-Центр. (2021, июнь 23). Отношение к Сталину: Россия и Украина. *levada.ru.* https://www.levada.ru/2021/06/23/otnoshenie-k-stalinu-rossiya-i-ukraina/

Հանրային կարծիքի այս ուսումնասիրությունները մեզ ցույց են տալիս ԽՍՀՄ փլուզման և դրա առաջնորդներից Ստալինի հանդեպ հասարակական դիրքորոշումների, հույզերի և տրամադրությունների փոխակերպումներն ու միտումները, ասում՝ քանիսն են այդ մարդիկ կամ քանի տոկոս: Սակայն ինչպե՞ս հասկանալ այս թվերը և տոկոսները, ինչպե՞ս զետեղել դրանք ժամանակի և տարածության մեջ: Արդյոք այս թվերը և տոկոսներն ինքնին բավարա՞ր են հանրային տրամադրությունների շուրջ դատողություններ անելու, երբեմն էլ՝ հասարակություններին քաղաքական դիագնոզներ տալու համար:

Չհավակնելով հետխորհրդային երկրներում Ստալինի կերպարի, ավելին՝ ստալինիզմի խորքային քննադատությանը՝ այդուհանդերձ, փորձենք հասկանալ, թե որ սոցիալական, տնտեսական և լայն քաղաքական պայմաններն են, որ նպաստում են Ստալինի նոստալգիայի ձևավորմանը հետխորհրդային, մասնավորապես՝ հայաստանյան հասարակությունում, և ի՞նչ է դա նշանակում այսօրվա տնտեսաքաղաքական կարգի տեսանկյունից: Ռուս լիբերալ քաղաքագետ Եկատերինա Շուլմանը Ստալինի շուրջ այս «սիրավեպը» բացատրում է երեք հիմնական գործոնով. ժամանակաշրջանը, երբ իրադարձությունները կարծես ժամանակի մեջ հետ են գնում, ռուսական պետական քարոզչությունը, որը Ստալինին ներկայացնում է բացառապես իբրև պատերազմը հաղթած առաջնորդի, և հակաէլիտիստական տրամադրությունների աճը, երբ Ստալինի կերպարը ոչ թե իրական է, այլ ժողովրդական վերհուշ, ով ասոցացվում է երկաթյա կարգուկանոնի և ագահ չինովնիկների դեմ պայքարի հետ[49]:

Ձախական պատմաբան Իլյա Բուդրաիցկիսը կարծում է, որ այսօրվա Ստալինը «մաքրված» է կոմունիստական հարանշանակություններից և պատմական ու քաղաքական մանրամասնություններից ու համատեքստից. «...Ստալինիզմի ժողովրդական աջակիցները պարզապես ամուր ձեռքով օրենքի հաստատում չէ, որ ուզում են, այլ արդարության [իրենց] ըմբռնման վրա հիմնված իշխանություն: Այս դիսոնանսը այսօրվա աճող սոցիալական անհավասարության մասն է: Հակասություններն այստեղ պետք է ակն-

49. BBC News. (2019, April 18). *Joseph Stalin: Why so Many Russians Like the Soviet Dictator.* BBC. https://www.bbc.com/news/world-europe-47975704

հայտ լինեն, բայց իշխանություններն անընդհատ քողարկում են դրանք՝ փորձելով դիմել հասարակությանը. «մենք հզոր պատմություն ունենք», «մենք կապված ենք մեր նախնիների հետ»: Իշխանություններն օգտագործում են խորհրդային այս հատկանիշները, մինչդեռ գործնականում հակված են ներդնել վճարովի կրթություն և առողջապահություն, հրաժարվել ճգնաժամի ժամանակ աշխատավարձերն ինդեքսավորելուց և այլն: Միաժամանակ նրանք անընդհատ կրկնում են՝ «մենք ունենք շուկայական տնտեսություն», «յուրաքանչյուրն իր համար» կամ «ինքներդ մտածեք՝ որտեղից փող գտնել»[50]:

Պետականամետ գործիչ Ստալինը սոցիալական արդարության և բուրժուա դասակարգի տապալման խորհրդանիշն է: Այս հանգամանքը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական ծայրահեղ շերտավորումը հետխորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Մեկ այլ հանգամանք է ուժեղ պետության Ստալինի նշանավորումը: Մի կողմից՝ կոմունիստական, մյուս կողմից՝ պետական-ազգայնական մոտեցումները միավորվում են Ստալինի կերպարի ներքո, ոչ թե, օրինակ, հեղափոխական Լենինի: «Այսօր ժողովրդականություն վայելող ստալինիստը կարող է լինել կա՛մ գործադուլ անող բանվորը, կա՛մ ոստիկանապետը, ով ենթարկեցնում է բանվորին: Երկուսն էլ արդարացում կգտնեն իրենց առասպելական ստալինիզմի համար»,- հայտարարում է Բուդրաիցկիսը:

Կարևոր է նաև հաշվի առնել, որ բազմաբարդ ժամանակներում, որոնցում մենք այսօր ապրում ենք, պատերնալիստական դիրքորոշումներն ընդհանուր առմամբ ժողովրդական աճ են ունենում: Ռուսաստանում մասնավորաբար վերջին մի քանի տարիների ընթացքում կանգնեցված Ստալինի հուշահամալիրների թիվը 2,5 անգամ ավելի է եղել, քան «հարուստ» տարիներին՝ 2006-2009 թվականներին[51]: Անկայուն տնտեսական իրավիճակը, աճող հանրային զգայունությունը սոցիալական անարդարության նկատմամբ, հարուստների և աղքատների միջև մեծացող անջրպետը և կոռումպացված բյուրոկրատիան առիթ են տալիս, որ կարոտով հիշվեն

50. Okrest, D. (2015, November 16). *Stalin's Back.* Open Democracy. https://www.opendemocracy.net/en/odr/stalins-back/

51. Архипова, А. (2017, Июнь 29). Сталин без Сталинизма. *Inliberty.* https://old.inliberty.ru/blog/2616-Stalin-bez-stalinizma#f2b52bb99c5605c

անցյալի առավել կայուն ժամանակները, որոնցում կար մեկը, ով կարգն իր ձեռքն էր վերցրել (Makhotina, 2018)։ Այս առումով Ստալինը պատմական կերպարից վերածվում է խորհրդանիշի, որ կարող է օգտագործվել տարբեր նպատակներով։

Սոցիալական պրակտիկաների քննադատական քննառությունը ցույց է տալիս, որ Ստալինը դարձել է ունիվերսալ խորհրդանիշ և փոխաբերություն տարբեր համատեքստերում։ Ներկայի հիասթափությունները մարդկանց նետում են ավելի լավ անցյալի կամ այդպիսին ըմբռնվողի վերհուշի մեջ։ Որքան կոռուպցիան, սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը, ինչպես նաև աջական նիհիլիզմը ամրապնդվում են առօրյա կյանքում, այնքան ավելի ակնառու է դառնում Ստալինի կերպարի հանդեպ նոստալգիան։

Ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, հայաստանյան հանրության շրջանում ներքաղաքական քննարկումների մի մեծ մաս է կազմում երկրի ղեկավարի կերպարի հարցը. տարբեր խնդիրների քննարկման համատեքստում պարբերաբար վերադարձ է արվում այն բանին, թե ինչպիսին պետք է լինի պետության ղեկավարը։ Ըստ հետազոտության մասնակիցների բնութագրման՝ երկրի ղեկավարը պետք է լինի *«գրագետ», «շատ խելքով», «բարի», «հայրենասեր», «ազգասեր», «իր խոսքն առաջ տանող»,* ինչպես նաև «*խստապահանջ*»։ Լավ և հաջողակ քաղաքական առաջնորդներ են համարվում նրանք, որոնք ուժեղ են, ունեն ռազմական, պատերազմի մասնակցելու փորձառություն, իսկ այն ղեկավարները, որոնք ավելի ներառական են և որոշումները մենակ չեն կայացնում, այլ հաշվի են առնում տարբեր տեսանկյուններ, համարվում են թույլ կամ պակաս հաջողակ։ Ըստ էության՝ մարդիկ փնտրում են մի *«մեծ մարդու՝ ղեկավարի»*, որը ենթադրաբար ունի բոլոր հարցերի պատասխանները, պատրաստի լուծումներ բոլոր խնդիրներին և կարող է բոլորին ուղղորդել՝ աշխատելու ըստ նախանշված պլանի, իսկ ինքն էլ՝ իբրև ղեկավար, կվերահսկի բոլորի «հանձնարարությունների» պատշաճ իրականացումը։

Հենց այս համատեքստում է, որ հիշատակվում է Ստալինը՝ իբրև լավ և ուժեղ ղեկավար։ Ընդ որում՝ առավել հետաքրքրական է նկատել, որ Ստալինի՝ որպես «ցանկալի» առաջնորդի մասին դատողություններ անում են թե՛ երիտասարդները, թե՛ ավելի տարեցները, որոնք ենթադրաբար ավելի լավատեղյակ են ստալինյան բռնա-

ճնշումներից: Բայց մի՞թե մարդկանց դիրքորոշումները պայմանավորվում են միայն նրանով, թե ինչ իրենք «գիտեն», կամ արդյո՞ք խճճված անցյալի պատմությունը ներկայում տեղայնացնելու բարդ գործընթացը միայն ռացիոնալ է:

> *«Մեր ազգային մենթալիտետը հաշվի առնելով՝ մեզ պետք ա մի հատ Իոսիֆ Ստալին ու վերջ»:*
>
> **54-71 տարեկան տղամարդ, Պառավաքար, Տավուշի մարզ**

> *«Միգուցե դա ճիշտ է* (խմբ.՝ ստալինյան խիստ ռեժիմը)*, որովհետև թույլ մարդուն ոչ ոք չի սիրում: Փորձը ցույց տվեց, որ երկրի ղեկավարը պետք է լինի հզոր, ուժեղ, ու իրենից վախենան: Ումից վախենում են, իր ասածներն անում են, ումից չեն վախենում, հա դե լավ, ինքն է, էլի»:*
>
> **18-35 տարեկան կին, Մեղրաձոր, Կոտայքի մարզ**

«Ստալին-դիկտատորի փնտրտուքը» մեծապես պայմանավորված է նորազատական սոցիալ-տնտեսական քաղաքականությունների նկատմամբ հիասթափություններով և գալիս է անարդարության դեմ պայքարելու անհրաժեշտության զգացումից և սոցիալական արդարության վերականգնման կարիքից: Սոցիալական արդարության վերականգնման ձախողումը հատկապես սուր է ըմբռնվում 2018 թ. հեղափոխությունից հետո: Սոցիալ-տնտեսական և քաղաքական անարդար կարգը փոխելու՝ հեղափոխության ձախողված խոստումը թուլացրել է հարստահարված խավերի հավատը այդ փոփոխության հնարավորության նկատմամբ՝ տեղ տալով արդար ապագայի հանդեպ թերահավատությանը և անցյալի իդեալականացված կարգի հանդեպ նոստալգիային: Բայց հենց այստեղ է, որ առաջ է գալիս թաքնված վտանգը, որ չքավոր և ճնշված ժողովուրդների նյութական կարիքներն ավելի լավ հոգալու ձևերի փնտրտուքին կփոխարինի կորսված ի նկատմամբ նոստալգիայի քաղաքականությունը, որ «վերադարձը սոցիալական հարաբերությունների և արտադրության համակարգերի ավելի հին ձևերին կներկայացվի որպես լուծում մի աշխարհում, որն առաջ է շարժվել» (Հարվի, 2017: 59): Այստեղ Հարվին առաջարկում է մաս-

նակի հաշտեցումը, որ ավելի առաջադիմական և դյուրին կարող է լինել, քան նոստալգիկ վերադարձը հին կարգերին:

Պատերնալիստական պետության ղեկավարի շուրջ քննարկումներում նկատելի են նաև ընտանիքի և պետության ինստիտուտների նույնականացումներն անգամ հասկացութային մակարդակում: Ընտանիքի հայրիշխանական ինստիտուտը հաճախ համեմատվում է պետության հայրիշխանական ինստիտուտի հետ՝ ընտանիքի կառուցվածքի համանմանությամբ վերաբաշխելով դերերն ու պարտականությունները: Այսպես՝ երկրի ղեկավարին համեմատում են ընտանիքի գլխի, ընտանիքի ղեկավարի՝ «տան տղամարդու» հետ, իսկ ընտանիքի ղեկավար տղամարդուն վերագրվող հատկանիշներով զուգահեռներ են տարվում պետության ղեկավարի հետ՝ գնահատելով նրա ուժեղ կամ թույլ լինելը:

Ընտանիքի և պետության փոխհարաբերությունները մտածելու հարցը մեծ ավանդույթ ունի արևմտյան փիլիսոփայության դպրոցներում, որոնք այս կամ այն կերպ անպայմանորեն քննում են ընտանիքին և պետությանը միավորող հիմնարար հատկանիշները՝ ուժի գործադրման և իշխանության հարցերը: Հատկապես միջնադարյան կրոնափիլիսոփայական մտքի՝ պետությանն իբրև ընտանիք (ընտանիքների ընտանիք) դիտելու ավանդույթը նշանակում էր, որ արքայի իշխանությունը ծնողական իշխանության մի տեսակ կամ դրսևորում էր, իսկ պետությունը նրա ընդարձակ ընտանիքն էր: Մեծ ջանք է պետք գործադրել այս համատեքստում չհիշելու համար Նիկոլ Փաշինյանի «*Հայաստանն իմ օջախն է, ժողովուրդն իմ ընտանիքն է*» կարգախոսը, որ նա հնչեցրել էր 2019 թ. օգոստոսի 5-ին Ղարաբաղում իր ելույթում, որը միտված էր հերքելու «Ղարաբաղը ծախելու» մասին դավադրությունները և ձևակերպելու «համահայկականության տրամաբանության» իր քաղաքական թեզերը[52]: Ավելի ուշ այս կարգախոսով Փաշինյանը նախաձեռնեց մի հանրային ֆլեշմոբ, որ Ժամանակի անհոգության պայմաններում հանրային գործիչներին, հրապարակախոսներին, ակտիվիստներին և հետազոտողներին հնարավորություն տվեց քննադատելու (երբեմն հումորի, ծաղրի և ցինիզմի միջոցներով) բազմաշերտ

52. «Ազատություն» ռադիոկայան. (2019, օգոստոս 5). Անիմաստ է Հայաստանի գործող կառավարությանը կասկածել Արցախի դեմ դավադրության մեջ. Փաշինյան. *azatutyun.am.* https://www.azatutyun.am/a/30093834.html

և հետհեղափոխական դինամիկ հասարակությունը՝ հանրայինը, հայրիշխանական և նահապետական ընտանիքի մոդելով՝ մասնավորով դատելու իշխանական մտաեղանակը[53]: Պետությունը օջախային մոդելով դատելու հեղինակը, իհարկե, Փաշինյանը չէ: Սակայն Փաշինյանը, ինչպես նաև հանրության մի մեծ շերտ մեզանում, պատմականորեն գերիշխող նահապետական ընտանիքի կամ «ավանդական ընտանիքի» հավաքական գիտելիքի կրողն է, որ մի առանձին սոցիալ-պատմական և հասարակագիտական հետազոտության առարկա կարող է լինել:

Հայրիշխանական ընտանիքի և պատերնալիստական պետության փոխաբերությունը, ուրեմն, կապված է ինչպես գերիշխող «միասնականության» և «ավանդական ընտանիքի» կոնցեպտների, սոցիալ-պատմական ու մշակութային ժառանգության, այնպես էլ ներկա անկայուն ժամանակներում պաշտպանության հենարաններ գտնելու հանրային ձգտման հետ:

> *«Ղեկավարը եթե խիստ չեղավ... Մեկը՝ ես, եթե ընտանիքում խիստ չեղա, իմ երեխեքը կարող ա ինչ-որ բանով չլսեն ինձ»:*
>
> **36-53 տարեկան տղամարդ, Լճաշեն, Գեղարքունիքի մարզ**

53. Տե՛ս, օրինակ, infocom.am. (2019, հոկտեմբեր11). *Հայաստանն այն է, ինչը բոլորիս համար ընդհանուր է, և հետևաբար չի կարող օջախ լինել. Դավիթ Ստեփանյան*. https://infocom.am/hy/article/17103. azatutyun.am. (2019, հոկտեմբեր 18) *«Ըստ էության». Վարչապետի սկսած ֆլեշմոբը՝ «Հայաստանն իմ օջախն է, ժողովուրդն իմ ընտանիքն է»*. https://www.azatutyun.am/a/30223216.html, Մանուսյան, Ա. (2020, հունիս 12). Համավարակի[g] հետ[n]. *infocom.am*. https://infocom.am/hy/article/29515, Պետրոսյան, Մ., (ա.ա.). *Ովքեր կշարունակեն հեղափոխությունը*. https://www.marinepetrossian.com/hy/vardan-azatyan-book

2.2 Ներքին խաղաղության հարցը

Արդեն երկու տարուց ավելի է, ինչ հայաստանյան հասարակության ամենատարբեր շերտեր ձևակերպում են խաղաղության հաստատման կարիքը կամ, եթե կուզեք, պահանջը: Ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, խաղաղության պակասը և խաղաղության վճռական հաստատման կարիքն այնքան նշանակալի են մարդկանց համար, որ դրանք ձևակերպվում են իբրև Հայաստանի կարևոր խնդիրներ: Ընդ որում՝ խաղաղության և դրա հաստատման կարիքի ընկալումը բավական լայն է՝ ընդգրկելով թե՛ ներքին խաղաղությունը երկրում, թե՛ «արտաքին» խաղաղությունը սահմաններին և հարևան պետությունների հետ:

Ներքին խաղաղության պակասը և դրա վերականգնման կարիքը մտածվում են ներքաղաքական լարված և բևեռացված իրադրության համատեքստում: Բուռն ներքաղաքական կյանքը, որ վերջին շրջանում արտահայտվում էր ընդդիմության փողոցային պայքարի տարբեր ձևերով, քաղաքական դաշտում գերակա իշխանություն-ընդդիմություն խոսքային փոխհրաձգությամբ և հայհոյախոսությամբ, ըստ հանրային տարբեր շերտերի, ոչ միայն չի նպաստում խնդիրների լուծմանը, այլև անմիջականորեն վնասում է հասարակական համերաշխությանը և հակասում հանրային շահին:

> *«Ուղղակի հայերն իրար լեզու հասկանան, իրար մեջ խաղաղություն լինի, հաշտվեն իրար հետ: Մեջտեղը մենք ենք տուժում»:*
>
> **54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ**

Այժմ անդրադառնանք մեր հետազոտության շրջանակում այդքան բարձրաձայնված ներքին խաղաղությունը վերագտնելու հանրային կարիքի քննարկմանը:

2015 թ. դեկտեմբերի 6-ին փոփոխված Սահմանադրությամբ Հայաստանը կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի: Դեռևս 2015 թ. սահմանադրական փոփոխությունների քարոզարշավի ջատագովները դրանց անհրաժեշտությունը հիմնավորում էին պետական ինստիտուտների կայացման ու նրանց

աշխատանքն ավելի թափանցիկ դարձնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև կուսակցությունների և խորհրդարանի դերի բարձրացման կարևորությամբ՝ նվազեցնելով միանձնյա որոշում կայացնելու հնարավորությունը[54]: Որպես առաջարկվող սահմանադրական նախագծի առավելություն էր նաև ներկայացվում այն հանգամանքը, որ երկրի կառավարման համար կարևոր որոշումներ ընդունելու ժամանակ հասարակությունն առավելագույնս ներկայացված կլինի[8]:

2015 թ. փոփոխված Սահմանադրության ուժի մեջ մտնելուց և հատկապես 2018 թ. Թավշյա հեղափոխությունից հետո նկատում ենք պետական գրանցում ունեցող կուսակցությունների թվի աճ: Եթե 1991 թ. ՀՀ-ում պետական գրանցում ուներ ընդամենը 11 կուսակցություն, 2016 թ.՝ 79 կուսակցություն[55], ապա 2022 թ. պետական գրանցում ունեցող կուսակցությունների թիվը 117 է, ընդ որում՝ այս կուսակցություններից 42-ը գրանցվել են 2018-ին՝ հեղափոխությունից հետո, որոնց մի մասն էլ՝ 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար: Առհասարակ կուսակցությունների, խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների, ինչպես նաև կուսակցությունների դաշինքների ավելացումը չի ապահովում բազմազան քաղաքական և գաղափարական ներկայացվածություն Ազգային ժողովում[9]:

Ավելին՝ կուսակցությունների բազմաշատությունը հանրությունը ձևակերպում է որպես ներքաղաքական խնդիր, ինչը պատճառ է դառնում այլ՝ դրանից բխող ածանցյալ խնդիրների առաջացման, օրինակ՝ համախմբվածության բացակայության, հանրության բևեռացվածության, հանրության մեջ ատելության, թշնամանքի մթնոլորտի խորացման, ապատեղեկատվության տարածման և այլն:

Կուսակցությունների մեծ քանակն անհարկի և ուռճացված է դիտարկվում մի քանի պատճառով: Նախ և առաջ հանրային ամենատարբեր խմբերը հստակորեն տեսնում են, որ կուսակցությունների բազմաշատությունը բնավ քաղաքական գաղափարախոսությունների բազմազանության չի հանգեցնում, իսկ եղած քաղաքական

54. Parliament.am. (2015). *Սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ*. վերցվել է՝ https://bit.ly/3JxVmGA

55. Առաջին լրատվական. (2016). Հայաստանում քանի՞ գրանցված կուսակցություն կա. «Ժողովուրդ». *1in.am*. https://www.1in.am/1838958.html

ուժերը չեն առաջարկում առկա սոցիալ-տնտեսական, ներքաղաքական և արտաքին քաղաքական խնդիրների լուծումներ, ավելին՝ առաջարկվող լուծումներն էլ նմանօրինակ են և քաղաքական բովանդակության տեսանկյունից չունեն մեծ տարբերություններ: Այստեղ քննադատությունն ուղղված է թե՛ իշխանություններին, թե՛ խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմությանը, որոնք կարողունակ չեն մշակելու պատշաճ քաղաքականություններ: Մյուս կողմից՝ հաշվի առնելով կուսակցությունների առատության հետևանքորքում գաղափարախոսական սնանկությունը՝ հանրությունը հարցադրում է, որ այս քաղաքական ուժերն առհասարակ ունակ են ներկայացնելու ժողովրդի կարիքները և շահերը:

Կուսակցությունների բազմաշատությունը, հետևաբար նաև մեծաթիվ ընկալվող հակասությունները և տարաձայնությունները քննարկվում են խարխուլ և չկայացած հանրային և պետական ինստիտուտների և համակարգերի քննադատության հետևանքորքում: Ընդհանուր առմամբ, չկայացած ժողովրդավարական ինստիտուտների համատեքստում, որտեղ անհատները և նրանց քաղաքական ճաշակները և կարողությունները գերակա են ինստիտուցիոնալ հիշողության և գաղափարական քաղաքականությունների նկատմամբ, իսկ քաղաքական պաշտոն զբաղեցնողները հաճախակի փոխվում են, հանրությանը դարձնում են գերքաղաքականացված և մխրճված ամենօրյա ներքաղաքական եռուզեռում:

> *«Կան բնակիչներ* (խմբ.՝ նկատի ունի այլ երկրներում), *որ չգիտեն՝ ով է պետության նախագահը կամ վարչապետը: Դա լա՞վ է, թե՞ վատ: Իհարկե լավ է, որովհետև ինձ հետաքրքիր չի՝ էնտեղ ով է, եթե ես աշխատանք ունեմ: Իսկ մեր առօրյայի չգիտեմ քանի տոկոսը քննարկում է, թե ո՞վ է վարչապետը, ի՞նչ է անում, էսօր ո՞ւր ու խի՞ գնաց, ո՞ւմ դեմ ելավ, ո՞ւմ դեմ չելավ: Ինձ կառավարման համակարգը պետք է չհետաքրքրի: Իհարկե պետք է լավ մարդ լինի: Բայց ինձ դա չպիտի հետաքրքրի, որ սա է, դրա համար սենց եղավ»:*
>
> **36-53 տարեկան տղամարդ, Թումանյան, Լոռու մարզ**

Միաժամանակ հանրությունը հատկապես հարցադրում է քաղաքական գործիչների՝ կուսակցություններ հիմնելու, ընտրություններին մասնակցելու, խորհրդարանական և արտախորհրդարա-

նական պայքարի որոշ ձևերի իրական շարժառիթները և շահերը: Այսպես՝ հարցադրվում է խորհրդարանական ընդդիմության «արտախորհրդարանական» գործունեությունը[vi], որը *«հայրենիքը փրկելու»*, *«Արցախը փրկելու»* հայտարարությունների ներքո *«սեփական ունեցվածքը պահպանելու փորձեր»* է անում: Ավելին՝ հարցադրվում են կուսակցությունների ղեկավարների և անդամների (թե՛ խորհրդարանական, թե՛ արտախորհրդարանական) քաղաքական մտքեր ձևակերպելու և քաղաքական օրակարգեր առաջ քաշելու ունակությունն ու հնարավորությունը՝ համարելով, որ այժմյան քաղաքական գործիչների այդ կարողությունը մոտ է «*միջակության*»: Միջակությունը և գաղափարական սնանկությունը կապվում են միմյանց և գնահատվում իբրև առաջընթացի բացակայության պատճառ:

Կուսակցությունների միջև առկա թվացյալ և իրական հակասությունների հարթման և նույն ուղղությամբ գնալու անհրաժեշտության մասին կա երկու հիմնական հակադիր տեսակետ: Մարդկանց մի մասը վերարտադրում է միասնականության տիրապետող ընկալումը՝ պնդելով, որ կուսակցությունների միջև չպետք է լինեն հակասություններ, բոլորը պետք է համախմբված լինեն մեկ գաղափարի և նպատակի շուրջ՝ իբրև խնդիրների հաղթահարման եղանակ: Ավելին՝ հետահայաց վերլուծություններում հանրային տարբեր խմբեր պնդում են, որ հակասությունների բացակայության և *«ազգային»* գաղափարի շուրջ համախմբվածության պարագայում, օրինակ, «*Ղարաբաղում այդքան զոհ չէր լինի*»:

> *«Թող միավորվեն դիմությունը և ոչ դիմությունը, թող միավորվեն, մի հարց լուծեն: Կարողանո՞ւմ ես, ընդդիմության ղեկավար, ինչ-որ հարց լուծես, այ սիրելիս, արի՛, նստի՛, ասա՝ այ Փաշինյան, արի՛ միավորվենք, էս երկիրը փրկենք, գերիներին բերենք: Ասեք՝ այ ժողովուրդ, տեսա՞ք՝ գերիներին բերեցինք: Դուք էլ միավորվեք, այ մարդ, դու եղի վարչապետ, նրանք էլ՝ քո տեղակալները: Ինչի՞ եք կռիվ անում: Մի աթոռ դրե՛ք, երկուսով նստե՛ք, հերի՛ք ա, էլի: Երկիրը հանե՛ք էս վիճակից»:*
>
> **36-53 տարեկան կին, Մալիշկա, Վայոց ձորի մարզ**

«Ազգային միասնությունը», «միասնությունը», «միաբանությունը», «միասնության ձևավորումը» խորապես պատմական դիս-

կուրսներ են, կառուցվել, ամրապնդվել և մեզ են հասել ամենատարբեր միջոցներով՝ հրապարակախոսությունից մինչև գրականություն (Ժամակոչյան, 2016)։ Ճգնաժամային, կոնֆլիկտային իրավիճակներում, պատերազմների և սահմանային էսկալացիաների ժամանակ «ազգային միասնականության» դիսկուրսը հիմնականում առաջ էր քաշվում իշխանությունների կողմից՝ ուղղորդելու հանրության ակտիվ խմբերի նախաձեռնություններն ու գործողությունները դեպի *«կայունամետ կամ հնազանդ միասնություն»* (Ժամակոչյան, 2016։ 29)՝ սահմանափակելու խնդիրներին այլ տեսանկյունից նայելու, դրանք հարցադրելու կամ դրանց լուծման այլընտրանքներ փնտրելու հնարավորությունները։ Միասնությունը ինքնության մտածողության մի տեսակ է նաև, որ ջնջում է տարբերություններն ու ուրիշությունը (Իգլթոն, 2019)։

Միասնությունը իշխանությունների կողմից առաջ քաշվող նարատիվ է եղել ՀՀ անկախության տարիներին, որն իր դիմադրական ներուժով հանդերձ երբեմն դուրս է եկել գծված սցենարից և ուղղվել իշխանությունների դեմ, բայց մեծ մասամբ ունեցել է արատավոր, սահմանափակող, կրավորական և չհարցադրող բնույթ (Ժամակոչյան, 2016)։ «Ազգային միասնության» գաղափարը բավական խորն է արմատացած մեր իրականության, կրթական համակարգի մեջ, և պատահական չէ, որ մասնակիցները քննարկումների ժամանակ վերադառնում էին հենց այս հարցին։

2018 թ. հեղափոխությունից հետո Նիկոլ Փաշինյանի քաղաքական ուժը «ազգային միասնականություն» դիսկուրսին զուգահեռ սկսեց օգտագործել նաև «քաղաքացիական համերաշխություն» դիսկուրսը, որոնց վրա պետք է հենվեին իրավունքի գերակայությունն ու օրենքի առաջ բոլորի հավասարությունը, որը, ըստ էության, «էթնիկ հիմքով» և «քաղաքացիական» հանրույթները միավորում է իրար այն պարագայում, երբ վերջինս դուրս է ազգային շրջանակից (Անդրեասյան, 2019)։ Սակայն Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո հանրային տիրույթում «համերաշխության» դիսկուրսի սածիլներն է՛լ ավելի սակավացան, իսկ «ազգային միասնականության» դիսկուրսը դեռևս պահպանում է իր դոմինանտ դերը։ Բացի հանրային մակարդակում առկա քննարկումներից՝ քաղաքական տարբեր շրջանակներ պարբերաբար վերադառնում են այս հարցին. որոշ ուժեր ազգային համախմբումն ու միասնա-

կանությունը սահմանում են որպես երկրի առաջ կանգնած լրջագույն խնդիրների լուծման համար կարևոր նախապայման. *«Հաշվի առնելով ներկայիս գերզգայուն իրավիճակում մեր երկրի առաջ կանգնած լրջագույն խնդիրները և դրանք լուծելու համար պահանջվող ցավոտ որոշումները՝ խորհրդակցության մասնակիցները օրվա գլխավոր խնդիր են համարում ազգային համախմբման կայացումը և իշխանության ու ընդդիմության միջև կառուցողական երկխոսության սկզբնավորումը*[56][10]*»*: Մյուսներն էլ կողմ են, այսպես ասած, «մասնակի համախմբման», ինչը նշանակում է, որ, ըստ էության, նրանք կողմ են «ազգային միասնականության», սակայն դա հնարավոր է միայն այս կամ այն դերակատարի բացակայության պայմաններում, ինչպես նաև կոնկրետ հարցի շուրջ[57]:

Այսպիսով՝ հանրության այն հատվածը, որի համար ներքին խաղաղության բացակայությունը հիմնարար խնդիր է, իսկ վերագտնելը՝ առաջնահերթություն, ըստ էության, ձևակերպում է հանրային-քաղաքական համերաշխության վերականգնման իղձը՝ պատկերացնելով այն քաղաքական ուժերի միասնականության, հակասությունների հարթման և առկա մարտահրավերներին համատեղ ջանքերով լուծումներ տալու միջոցով:

Այդուհանդերձ, միասնականության գաղափարը քննադատության առարկա է մարդկանց մյուս մասի համար, որը հարցադրում է կուսակցությունների միասնականության անհրաժեշտությունը: Մարդկանց այս հատվածը հավատում է, որ ընդդիմության շրջանում էլ կան *«հայրենասեր»* մարդիկ, որոնք *«ունեն լավ մոտիվներ»*, ի վերջո *«հայ են»*, և պետք էլ չէ, որ համաձայնեն իշխանության, այլ քաղաքական ուժերի առաջ քաշած տեսակետների և քաղաքականությունների հետ: Միաժամանակ միասնականության քննադատության դիսկուրսը կրկին մնում է ազգայինի կամ հայության ամբողջացնող միևնույն մտաեղանակի ծիրում: Այս համատեքստում ընդգծվում է երկրի ներսում առողջ քննադատություն ունենալու անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա

56. Լուրեր. [ArmPublicTvLurer] (2022). *Հարցազրույց Լևոն Տեր-Պետրոսյանի հետ*. YouTube. https://www.youtube.com/watch?v=kTeWytVBdVI

57. Ինֆոքոմ. (2022). Չենք կարող բուժվել այն միջավայրում, որը մեզ հիվանդացրել է. Քոչարյանը՝ իշխանության շուրջ միավորվելու առաջարկի մասին. *infocom.am*. https://infocom.am/hy/article/89351_

ընդլայնելու խնդիրներին մոտենալու և դրանց լուծումներ տալու տեսանկյունների հորիզոնը:

> *«ԱԺ-ում նստում են, մեկը մեկին շիշ է խփում: Դրանցից կառավարիչ կլինի՞: Կլինի՞: Եթե ինքն էդպես անի, ես էլ իմ դիմացինի հանդեպ եմ հաստատ անելու: Իրենք իրենց պիտի հարգեն, որ կարողանան ժողովրդին հարգեն»:*
>
> **36-53 տարեկան տղամարդ, Երասխ, Արարատի մարզ**

Հայաստանյան բարդ ներքաղաքական և արտաքին քաղաքական դրությունն է՛լ ավելի մեծ սրությամբ է ըմբռնվում հանրության կողմից մեդիադաշտ նետված զանազան դավադրության տեսությունների, հանրային վախերը սնող և [ինքնա]վստահության հենարանները կազմաքանդող դիսկուրսների պատճառով: Սրա հետևանքորքում հանրության շրջանում տարածված դատողություն է այն, որ կա մի մեծ ուժ, որը խաղում է և՛ իշխանությունների, և՛ ընդդիմության դերը: Այսպես կարծող մարդիկ հավատում են, որ կուսակցությունների մեջ իրականում խնդիրներ չկան, դրանք արհեստածին են, ստեղծվում են այլ ուժերի կողմից՝ հանրությանը մոլորեցնելու, միմյանց դեմ տրամադրելու և իրար դեմ պայքարելու համար: Ավելին՝ մարդկանց այս խմբի մի մասն էլ հավատում է, որ Հայաստանում ստեղծված իրավիճակի հետևում թաքնված են արտաքին ուժեր, որոնց նպատակը *«Հայաստանը ոչնչացնելն է»*՝ կազմելով արտաքին ուժերի կողմից ղեկավարվող մի մեծ ծրագրի մի մասը[11]:

Այսպիսով՝ ինչպես իշխանությունների, այնպես էլ ընդդիմության հռետորաբանությունում ակներև կիսաճշմարտությունները, ստերը, դիսկուրսիվ մանիպուլյացիոն հնարքները մոլորեցնում են հանրային որոշ շերտերի՝ դարձնելով նրանց շփոթված, խոցելի և երբեմն՝ ապակողմնորոշված տեղեկատվական հորձանուտներում:

> *«Մեզ էլ են շփոթության մեջ գցում: Լսում ես նրանց՝ պահի տակ իրենց կողմն ես անցնում, մտածում ես՝ իրենք են ճիշտ: Հետո մյուսներին ես լսում, չէ՛, իրենք են ճիշտ, դու էլ ես շփոթվում՝ որն է ճիշտ, որն է սխալ:*
>
> **18-35 տարեկան կին, Մեղրաձոր, Կոտայքի մարզ**

2.3 Խաղաղության ներկա դրությունը և խաղաղության սահմանման փորձերը

Հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական իրադրությունները վերլուծելու համար նախ և առաջ կարևոր է անվանել դրանք: Ինչպե՞ս գործ ունենալ բազմաբարդ խնդիրների և համատեքստերի հետ, երբ չգիտենք, թե ինչպես անվանել, ինչ բառերով ու հասկացություններով նկարագրել դրանք: Արդյոք հատկապես Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո փորձագիտական և քաղաքական տարբեր շրջանակների կողմից լայնորեն շրջանառվող «ճգնաժամ» հասկացությունը բավարա՞ր է անվանելու այն դրությունը, որում ապրում ենք իբրև հանրություն: Արդյոք այն իրապես արտահայտո՞ւմ է մեր վիճակը, թե՞ ընդհակառակը՝ գերընդհանրացնելով լղոզում է այն, մեղմում համատեքստի հարանշանակությունները և նրբությունները:

Այս առումով կարևոր է քաղաքական և պատմական համատեքստերի հետ անքակտելիորեն կապված, դրանցում զետեղված հանրային դիսկուրսների, սոցիալական գիտելիքի, գաղափարների և ինքնասահմանումների ուսումնասիրությունը: Այն մի կողմից կարող է հենվել գիտելիքի սոցիոլոգիայի ավանդույթի վրա, որ քննում է գաղափարների և հասարակության, գիտելիքի և սոցիալական կառուցվածքների հարաբերությունները, մյուս կողմից՝ հանրային սոցիոլոգիայի ավանդույթի վրա՝ իբրև կարևոր հասարակական խնդիրները ձևակերպելու, ուսումնասիրելու և հանրությանը դրանց հաղորդակից դարձնելու ուղղություն:

Այսպիսով՝ մեր հետաքրքրությունը սոցիալական, քաղաքական կամ տնտեսական խնդիրների շուրջ «գիտելիք կուտակելու նպատակազուրկ տեսական փորձը» (Calhoun, 2009) չէ, այլ մեր ներկայի առնչությամբ հանրային գիտելիքի տարբեր շերտերի վերհանումը՝ խորամուխ լինելով սոցիալ-քաղաքական գործընթացների և համատեքստերի առանձնահատուկ կազմաձևերի մեջ:

Հանրային սոցիոլոգիայի ավանդույթը նաև նշանակում է, որ անխուսափելիորեն հարցադրվում են հաճախ սովորական ու ապապատմական թվացող և ըմբռնվող հասարակական և քաղա-

քական ճշմարտությունները՝ դրանք հանրային դիսկուրսի ասպարեզ նետելու փոխարեն:

Հենվելով այս ավանդույթի վրա՝ մենք այստեղ կփորձենք ոչ թե հիմնվել այժմյան դրության փորձագիտական կամ քաղաքական գնահատականների վրա, որոնց անդրադարձել ենք գրքի ներածության բաժնում, այլ հանրային տարբեր շերտերի՝ ներկայի ըմբռնումների և ձևակերպումների վրա:

Այսպիսով՝ մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ հանրության շրջանում ընդհանուր առմամբ տիրապետող են Հայաստանի՝ խաղաղության առումով ներկա վիճակի տագնապային, թերահավատ և մտահոգ ընկալումները: Եթե առանձնացնենք այն տարածված որակական ածականները, որոնք դիսկուրսի մակարդակում ուղեկցում են Հայաստանի ներկայի, մասնավորապես խաղաղության և պատերազմի տեսանկյունից քննարկումները, ապա կարող ենք ընթերցել հետևյալ ձևակերպումները.

Անկայունություն. խառնաշփոթ. Սոդոմ-Գոմոր. չունենք պետականություն. ծնկած պետություն. անորոշ վիճակ. քաոս. անմխիթար վիճակ. կիսատ վիճակ. զինադադար. ձևական վիճակ. փխրուն կայունություն. հարաբերական խաղաղություն. «ոչ մեկիս մոտ չկա ապահովության զգացում». «ազգի 80 տոկոսը սթրեսի մեջ է, 20 տոկոսն էլ կայֆավատ է լինում». «պատերազմը չի ավարտվել, խաղաղություն չկա». «մենք միշտ սպասողական վիճակում ենք եղել՝ 90-ականներից». բթացած վիճակ:

Լայն իմաստով այս ձևակերպումներն արտահայտում են հետպատերազմյան Հայաստանի՝ իբրև պետության և պետականության երերուն վիճակի հանրային մտահոգությունները: Պատերազմի պարտությունից հետո Հայաստանն ըմբռնվում է իբրև պետականությունը և ինքնիշխանությունը կորցրած, ծնկած, վերահաս պատերազմների վտանգի առջև կանգնած:

Այս մտայնության շրջանակում Հայաստանն ընկալվում է իբրև խաղաղություն մուրացող, խաղաղություն աղերսող պետություն՝ վերհանելով Ղարաբաղյան առաջին պատերազմին հաջորդած տարիներին հայաստանյան ռազմական և քաղաքական վերնախավերի կողմից մշակվող այն վտանգավոր [մասկուլին] գաղափարաբանությունը, թե խաղաղությունը թույլի, տկարի, «գետնին

ընկածի» հասանելիք բաժինն է, իսկ ուժի գործադրմամբ խաղաղություն պարտադրելը՝ ուժեղ պետության խորհրդանիշ[12]: Այս տեսանկյունից խաղաղությունը ոչ թե համատեղ ձեռք բերվող քաղաքական փոխհարաբերություն է, այլ զորեղի կողմից իջեցվող դիկտատ ուժային անհավասարակշռության պայմաններում: Պատմական արմատներ ունեցող այս գլոբալ և տեղական հանրային-քաղաքական մտայնությունը տարածված էր նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմից առաջ: Եթե պատերազմն ըմբռնվում էր իբրև Հայաստանին և Ղարաբաղին Ադրբեջանի կողմից պարտադրված ֆենոմեն, ապա խաղաղությունը ձևակերպվում էր իբրև Հայաստանի կողմից Ադրբեջանին [ուժով] պարտադրվող մի բան (Խալաթյան, Մանուսյան, 2021): Բավարար է շատ մակերեսային հայացք նետել տարբեր տարիների հայաստանյան մեդիայի վրա՝ հասկանալու համար, թե որքան գերակա է «խաղաղություն չեն մուրում, այլ պարտադրում են» դիսկուրսը, որը հանրությանը համոզում է, թե անգամ «մի թիզ» հող հանձնելը ոչ թե տարածաշրջանում խաղաղ համակեցության հեռանկար է բացում, այլ է՛լ ավելի է մոտեցնում պատերազմը, կասկածի տակ առնում հայկական բանակը և դրա ռազմական ուժն ու հնարավորությունը: Ավելի խորքային քննությունը մեզ հուշում է, որ մտածողության եղանակ դարձած «խաղաղություն չեն մուրում, այլ պարտադրում են» չարչրկված ձևակերպման հայաստանյան հեղինակներից կարող է լինել Պարույր Հայրիկյանը: 1992-ին Գորիսի արտակարգ դրության պարետ Պարույր Հայրիկյանը գորիսեցիների հետ հանդիպմանը քննադատում էր ժամանակի կառավարությանը սահմաններում բարձիթողի վիճակի համար, խաղաղասիրական քաղաքականության համար. «Այսօր Հայաստանը պատերազմի մեջ է, իսկ մենք խաղաղություն ենք մուրում: Խաղաղություն չեն մուրում, խաղաղությունը պարտադրում են»[58]:

Հետևաբար կարևոր է նկատել, որ այս նուրբ հարցերի հանրային ընկալումները և դրանց շուրջ զգացմունքները ձևավորվում, ծավալվում և տարբեր դրսևորումներ են ստանում կոնկրետ սոցիալ-պատմական և քաղաքական համատեքստերում, դրանք անկախ չեն ներքին և արտաքին քաղաքական ուժերի, մեդիա սեփականատե-

58. Archives.am. (1992, օգոստոս 8). Խաղաղություն չեն մուրում, խաղաղությունը պարտադրում են. *«Երկիր»*. https://rb.gy/icolav

ների՝ հանրային վախերը սնող քաղաքականություններից, որոնք, վտանգները չափազանցելով, սահմանափակում են իրադրությունների առավել նուրբ վերլուծության և ընկալման հնարավորությունները (Լիպարիտեան, 2022)։ Ավելին՝ այդ վտանգները հաճախ կառուցվում են առեղծվածների քաղաքականության տրամաբանությամբ, ինչը է՛լ ավելի է նվազեցնում իրերի դրության նրբին վերլուծության հեռանկարը։

> *«Այն պարագայում, երբ ամբողջը հատուցված է, կարելի է խոսել ինչ-որ հարաբերություններ ձևավորելու մասին, բայց քանի դեռ դու պարտված, գետնին ընկած մեկն ես, որ մուրում է... Խաղաղությունը չեն մուրում, խաղաղությունը պարտադրում են»։*

18-35 տարեկան տղամարդ, Գյումրի, Շիրակի մարզ

Եթե կայուն և կանխատեսելի, սոցիալական արդարության սկզբունքների հիման վրա ձևավորված պետությունը հասարակությանը տալիս է մշտականության և ապահովության որոշ զգացում, ապա հետպատերազմյան Հայաստանը հանրության կողմից ըմբռնվում է իբրև «ռազմավարական անորոշությունների» (Լիպարիտեան, 2022) թատերաբեմ։

> «Խաղաղություն կարանք ունենաք, բայց ոչ պետականություն։ Մենք այսօրվա դրությամբ չունենք պետականություն»։

36-53 տարեկան տղամարդ, Թումանյան, Լոռու մարզ

> *«Մեր երիտասարդությունը փախեփախ է լինում Հայաստանից։ Էդ սարսափը մեջները՝ մարդիկ դուրս են գալիս Հայաստանից։ Տղա երեխաներին հանում են երկրից կամաց-կամաց։ Դեռ էդ սարսափը կա, վախեցած են։ Տարիներ են պետք, որ անցնեն, հաստատվեն, կարողանան համոզվել, որ անվտանգ է իրենց երկրում, որ դուրս չգան»։*

54-71 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Պետության և պետականության խոցելիության և փխրունության, անպաշտպանության և անօգնականության ըմռբնման հա-

մատեքստում է, որ հանրության որոշ շերտերի շրջանում (գլխավորապես՝ տղամարդկանց) գլուխ է բարձրանում և լեգիտիմություն ձեռք բերում քաղաքական մեծ դերակատարներից կախվածության արդարացումը, ինքնիշխանության զիջումը հանուն երևակայական անվտանգության և կայունության: Պաշտպան «մեծ եղբոր» փնտրտուքը, իհարկե, բազմաշերտ է: Կարող ենք վերլուծության առանցքը դարձնել խորհրդային անցյալը, հանրային և քաղաքական գիտակցության մեջ ամրապնդված Ռուսաստան-Հայաստան պատերնալիստական հարաբերությունները, Հայաստանի՝ Ռուսաստանի ազդեցության գոտի և «ռազմավարական դաշնակից» լինելը, ի թիվս այլ չափումների, սակայն ինչպես և Ստալինի նոստալգիայի երևույթը վերլուծելիս, կարևոր է, որ նկատի առնենք հանրության՝ սոցիալական արդարության, պաշտպանվածության և կայունության ձգտումը, որ հատկապես սասանված է հետպատերազմյան ընկճվածությամբ և ապագայի հանդեպ անհուսությամբ: Իհարկե, իշխանության ներկայացուցիչները կշտապեն ասել, որ 2021 թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրությունները ժողովրդավարության, ինքնիշխանության և խաղաղության ծրագրի հաղթանակի մասին էին, և սա կարտահայտի իրականության մի մասը միայն: Մյուս մասն էլ այն է, որ հասարակության՝ ընտրության իրավունք ունեցող, բայց ընտրություններին չմասնակցած քաղաքացիների հիսուն տոկոսի մասին քաղաքական գործիչները սովորաբար գրեթե ոչինչ չգիտեն, ավելին՝ հասարակական մտայնությունները և դիրքորոշումները վտանգի և անապահովության համատեքստում երերուն են, կարող են փոխակերպվել և վերանայվել սեփական անպաշտպանությունն ու փոքրությունը սնող քաղաքականությունների ներքո:

> *«Ես էսպես կասեմ. մեր Հայաստանն անկախացել է, ես չեմ ուզի՝ նորից մտնի ինչ-որ երկրի, այսինքն՝ Ռուսաստանի կազմի մեջ: Անկախ ենք, վերջ: Բայց եթե դու չես կարողանում էսօր քո անկախությունը պահել, ավելի լավ է մտնես Ռուսաստանի կազմի մեջ, մտնես ռուբլու գոտի, իմանաս, որ, կոպիտ ասած, տեր կա գլխիդ, ու ապրես: Թե չէ սենց արդեն մասնատում են, էլ դու սահման չունես, տաշում են»:*

36-53 տարեկան տղամարդ, Երասխ, Արարատի մարզ

Թեև հանրային-քաղաքական դիսկուրսում տիրապետող է Հայաստանի վիճակն ու խնդիրները համարել և ձևակերպել իբրև առանձնահատուկ, ոչ տիպական, միայն հային ու հայկական մենթալիտետին բնորոշ՝ երբեմն հասնելով ճակատագրապաշտության, նկատում ենք, որ զուգահեռաբար հանրության շրջանում տարածված են Հայաստանի ներկա դրությունը աշխարհաքաղաքական գործընթացների, պատերազմների, տարածաշրջանային լարումների համատեքստում տեղայնացնելու փորձերը: Հանրության շրջանում կա ըմբռնում, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայի վրա հարձակումը և արդեն մեկ տարուց ավելի տևող պատերազմը, ռազմատենչ հռետորաբանությունը, զենքի ու զինամթերքի անսպառ շրջանառությունը ժամանակակից աշխարհը դարձրել են անորոշությունների և վտանգների ասպարեզ, որում քաղաքական տարբեր դերակատարների հետ հարաբերվում է նաև Հայաստանն իբրև պետություն, և որում ծավալվում է հայաստանյան հասարակության կյանքը: Խաղաղության հորիզոնը գնալով նեղանում է հատկապես ռուս-ուկրաինական պատերազմի համատեքստում, որ է՛լ ավելի է լեգիտիմացնում պատերազմի և ուժի գործադրման քաղաքականությունը: Պատերազմի դադարեցման, բանակցությունների կամ խաղաղության հնարավորության մասին միջազգային դիսկուրսները գրեթե բացակայում են, ռուս-ուկրաինական պատերազմի համատեքստում պարբերաբար ազդարարվում են «ամեն գնով խաղաղության հաստատման»[13] վտանգները[59]: Այս պատերազմը, որ իր սովորականությամբ արդեն թվում է անվերջ[14], վերահաստատում է իր լեգիտիմությունն ու արժեզրկում աշխարհի տարբեր անկյուններում խաղաղությանն ուղղված ջանքերը՝ շրջանակելով դրանք իբրև նաիվ կամ մանկամիտ:

Այս տեսանկյունից է, որ հանրության շրջանում կա թերահավատություն առհասարակ խաղաղության՝ իբրև արժեքի և քաղաքական համակեցության հեռանկարի առնչությամբ: Այդ թերահավատությունը չի վերաբերում միայն Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատման հնարավորությանը:

59. Krashennikov. F. (2022, June 13). The Dangers of "Peace at Any Cost". *Wilson Center.* https://www.wilsoncenter.org/blog-post/dangers-peace-any-cost

«Մենք հիմա էն վիճակում ենք, որ մտածում ենք՝ ոնց անենք, որ ներկա վիճակը պահենք: Մենք խաղաղության մեջ չենք, ու ամբողջ աշխարհն ա տենց: Ես չեմ մտածում, որ եթե գնամ եսիմ որտեղ ապրելու, ինչ-որ մի բան փոխվելու է, որովհետև իրականում աշխարհը խաղաղության մեջ չի»:

18-34 տարեկան կին, Երևան

Այդուհանդերձ, որքան էլ խաղաղության առնչությամբ մեր ներկան հասարակությանը պատկերվում է իբրև քաոսային, անորոշ, անմխիթար կամ կիսատ, դրան հասնելու փորձերը՝ արդյունավետ կամ ոչ այնքան, հասարակությունը նկատում է, թեև գնահատում է ոչ բավարար: Տիրապետող է հանրային ըմբռնումը, որ խաղաղության հաստատումը այդ գործընթացում ներգրավված սուբյեկտներից պահանջում է փոխադարձություն: Ուստի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ռազմատենչ հռետորաբանությունը հատկապես Մեղրիի միջանցքի շուրջ դիտվում է իբրև խաղաղությունը անհնար դարձնող հանգամանք, լեգիտիմացնում «ուժեղի մոտ միշտ թույլն է մեղավոր» սոցիալական մտայնությունը, վերահաստատում սեփական անօգնականության և խաղաղության՝ իբրև թույլի հասանելիք բաժնի ըմբռնումը:

«Այս պահին լուրերով էնպես է ներկայացվում, որ [Հայաստանը] գնում է խաղաղության: Եթե իրականում այդ ամեն ինչը ճիշտ է, վատ բան չի դա, որովհետև տեսանք՝ ինչ կարող է լինել: Խաղաղությունից լավ բան չկա: Եթե խաղաղություն լինի, ու ամեն ինչ իր ճիշտ հունով գնա, բոլորիս էլ ձեռնտու է՝ և՛ մեզ, և՛ մեր հարևաններին՝ մեր երեք հարևաններին: Դե պարսիկների հետ նորմալ է, դրա համար՝ երեք: Իշխանությունը փորձում է ինչ-որ բաներ անել խաղաղությունը վերականգնելու համար, բայց թե ինչքանով կստացվի, ժամանակը ցույց կտա: Ներկայում այդ խաղաղությունը չունենք: Անորոշ վիճակ է»:

18-35 տարեկան տղամարդ, Չարենցավան, Կոտայքի մարզ

«Հայաստանը, հա՛յն ա մուրում խաղաղություն: Հլը մենք չենք լսել, որ Ադրբեջանի նախագահը կանգնի, ասի՝ գիտե՞ք ինչ,

հայե՛ր ջան, մենք ձեզ շատ ենք սիրում, եկե՛ք խաղաղ ապրենք: Հլը էդ բառը ոչ մեկի բերանից դուրս չի եկել»:

54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ

«Դե խաղաղությունը մենակ մի պետությունով չի, երկրորդ պետությունն էլ պետք ա ուզի էդ խաղաղությունը, մենակ մեզնով չի: Եթե մենք ուզում ենք խաղաղություն, եթե մեր իշխանությունն էլ ուզում ա խաղաղություն, բայց դիմացի պետությունը չի ուզում քո հետ խաղաղ ապրի, այսինքն՝ դու ո՞նց պետք ա անես. պետք ա միշտ պատերազմի պատրաստ լինես»:

36-53 տարեկան կին, Ապարան, Արագածոտնի մարզ

2.4 Խաղաղության սահմանման տարբեր չափումները

Խաղաղությունը սահմանելիս մարդիկ մի կողմից նայում են միկրո մակարդակին՝ ներընտանեկան հարաբերությունների, ինչպես նաև դրկից հարևանների հետ հարաբերություններին, մյուս կողմից՝ ներքաղաքական և ներհասարակական հարաբերությունների ոլորտին:

Այս առումով միջանձնային հաշտ ու ներդաշնակ հարաբերությունների ձևը արտապատկերվում է տարածաշրջանային հարևանների հետ կամ համաշխարհային մակարդակում խաղաղ հարաբերությունների հեռանկարի վրա:

Մի կողմից՝ տարածված մտայնությունն այն է, որ եթե ընտանիքներում՝ մի քանի հոգու միջև խաղաղության հասնելը բարդ է, ապա հարևան պետությունների հետ այն գրեթե անհնար է դառնում: Մյուս կողմից, սակայն, հենց ներընտանեկան հաշտության տեսանելի և շոշափելի մոդելն է, որ մարդկանց հնարավորություն է տալիս մտածելու, երևակայելու տարածաշրջանային և պետությունների միջև խաղաղությունը: Կարող ենք ենթադրել, որ ընտանիքի մոդելով տարածաշրջանային խաղաղության պատկերացումները տարածված են նաև այն պատճառով, որ տարիներ շարունակ չենք ունեցել և այժմ էլ գրեթե չունենք խաղաղության մասին խոսելու, այն մտածելու եղանակներ, տարածքներ և լեզու[ներ]: Թերևս սա է նաև պատճառը, որ խաղաղության սահմանման կամ ձևակերպման ձևերը որքան բազմազան, նույնքան էլ նման են՝ տեսանելի դարձնելով հասարակությունում առկա տիրապետող գիտելիքն ու դիսկուրսները խաղաղության շուրջ:

Դրկից հարևանների հետ հաշտ հարաբերությունների մոդելը ևս առաջ է գալիս իբրև տարածաշրջանային հարևան պետությունների հետ խաղաղ հարաբերությունների կառուցման հնարավոր հեռանկար: Ընտանեկան և հարևանական հարաբերությունների այս պատկերացումը, մի կողմից, ապաքաղաքականացնում է տարածաշրջանային խաղաղության հարցը, մյուս կողմից էլ մարդկայնացնում է այն և դարձնում պատկերացնելի: Այս պարագայում տա-

ռածաշրջանային թշնամին կարող է դառնալ տարածաշրջանային հարևան՝ ստանալով մարդկային կերպարանք:

> *«Խաղաղությունը մի հատ մեծ, խոշոր բան ա, որն ամեն տեղ չի կարա լինի: Հիմա նայե՛ք. եթե ընտանիքում խաղաղ չես կարում ապրես, հոգով անհանգիստ ես, չես կարող ո՛չ հանգիստ ապրել, ո՛չ էլ... Նույնն էսօր մեր պետության մեջ ա* (մեկ այլ մասնակից՝ *դա էլ մի ընտանիք է (խմբ.): Մեր պետությունն էսօր տեղից խաղաղ չի: Մեր քնից ելած փոքր երեխան էսօր քաղաքականացված ա: Ինչի՞ց ա. հեռուսատացույց միացնում ենք՝ իրարից են բամբասում, ինտերնետ մտնում ես՝ իրարից են բամբասում, որտեղ նայես՝ իրար փնովել, իրար թերագնահատել»:*

54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ

Խաղաղության ձևակերպումն ունի նաև ժամանակային չափում: Այս համատեքստում մարդկանց հայացքը մի կողմից ուղղված է անցյալին, մյուս կողմից՝ ապագային: Անցյալի ու ապագայի այս հարաբերության մեջ են երևան գալիս ներկայում խաղաղության սահմանման կամ ձևակերպման բարդությունները և նրբությունները: Մի կողմից՝ խորհրդային անցյալի փորձը տարեց սերնդին հուշում է, որ բարեկամության, սոցիալիստական «եղբայրության» հարաբերությունները իրական և հնարավոր են եղել, մյուս կողմից՝ դա առավելապես անցյալի վերհուշ է, որ նաև շարունակաբար վերախմբագրվում է Ղարաբաղյան երկրորդ պատերազմով, դրան հաջորդած մարտական թեժացումներով և լարումներով, երկու հասարակությունների և պետությունների միջև կարծես թե չհաղթահարվող թշնամությամբ:

> *«Խաղաղությունն այն է, որ... ինչպես Սովետի ժամանակ էր, բոլոր ժողովուրդներն իրար հետ հաշտ ու համերաշխ էին: Խաղաղություն [ասելով] ես դա եմ պատկերացնում, որ միշտ ժողովուրդները իրար հետ հաշտ ու խաղաղ լինեն՝ լինի Ռուսաստանը, Վրաստանը թե Լեհաստանը»:*

54-71 տարեկան կին, Երազգավորս, Շիրակի մարզ

«Առաջնահերթություններից մեկն ա խաղաղությունը: Էստեղ բոլորը Սովետի ժամանակ ծառայած տղերք են: Թուրք էլ կար, վրացի էլ, ուկրաինացի էլ... Խաղաղությունը դա էր, էլի»:

54-71 տարեկան տղամարդ, Պառավաքար, Տավուշի մարզ

Ժամանակային մյուս՝ ապագայի չափումը երևան է բերում խաղաղության ինչպես բաղձալիի, այնպես էլ դրա սովորականության, առօրյա-կենցաղայինի և ռիսկի ու վերահաս վտանգների պատկերացման շերտը: Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ վերացական, անորոշ և խրթին թվացող ապագան ժամանակատեղվում և առավել հստակ մարմնավորում է ստանում, երբ կապվում է հանրության ամենապարզ՝ առօրյա-կենցաղային կյանքի և մտահոգությունների հետ: Այս առումով խաղաղությունը շատ կոնկրետ է և պարզ. այն նախ և առաջ ամենասովորական կարիքները հոգալու առողջ պայման է, ինչպես նաև ապագան ծրագրելու, վաղվա օրվա համար չանհանգստանալու, քնելուց առաջ լուրեր չկարդալու շռայլություն և հնարինություն:

«Ա՛յ մարդ, թող Պողոսն առնի Վարդգեսին, կռիվ չլինի, խաղաղ ապրենք մեր համար, իմ երեխային հաց լինի, աշխատանք լինի»:

54-71 տարեկան կին, Երազգավորս, Շիրակի մարզ

«Խաղաղությունը մեր բոլորի երազանքն ա»:

36-53 տարեկան տղամարդ, Թումանյան, Լոռու մարզ

«Խաղաղությունն էն ա, որ հանգիստ լինեմ, գնամ գործի, այգիս ջրեմ, չմտածեմ, որ հեսա մի տեղից մի բան կգա, կընկնի գլխիս, կմեռնեմ, կամ մեկը կտա, կսպանի ինձ»:

18-35 տարեկան տղամարդ, Շինուհայր, Սյունիքի մարզ

«Խաղաղությունը վաղվա օրվա, հուսալի օրվա պատկերացումն ա իմ մոտ, որ գոնե վաղը մոտավորապես հասկանաս՝ ինչ օր ա քեզ սպասում, այլ ոչ թե արթնանաս ու անակնկալի

գաս ինչ-որ վատ բանով: Իսկ հիմա, կարծում եմ, կայուն ծանր վիճակում ենք, տենց բժշկական տերմին կա»:

18-34 տարեկան տղամարդ, Երևան

«Բացի ապագայի հանդեպ հանգստությունից՝ [խաղաղությունը] նաև հույս և հավատ ա, իսկ եթե պատերազմ կա, մենք ապագան չենք տեսնում, չենք պլանավորում, չենք էլ մտածում ապագայի մասին»:

36-53 տարեկան կին, Ապարան, Արագածոտնի մարզ

Խաղաղության ձևակերպման և սահմանման փորձերի համատեքստում երևան է գալիս նաև դրա անմիջական փոխառնչությունը բանակի ինստիտուտի ըմբռնման հետ: Կարևոր է նկատել, որ Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո հանրությունն ավելի անկաշկանդ է խոսում բանակի խնդիրների մասին, բանակի՝ իբրև վտանգավոր, մահաբեր կառույցի մասին: Այս առումով խաղաղությունն այն կարևոր պայմանն է, որը բանակը նվազ երկյուղալի է դարձնում հատկապես տղա երեխա ունեցող ծնողների ու հատկապես մայրերի համար: Տղաներին Հայաստանից «փախցնելու» մասին, տղա երեխա ունենալու վախի մասին *(«հիմա ո՞ր աղջիկը չի վախենում տղա ունենալուց այս երկրում»*) մարդիկ ավելի անկաշկանդ են խոսում, ավելին՝ այդ խոսակցությունը շրջանառվում է իբրև արդարացի և լեգիտիմ:

«Գոնե հիմա Ղարաբաղ չտանեն մեր երեխաներին»: [Ղարաբաղ չկա, վե՛րջ] (խմբ.՝ քննարկման մասնակից մեկ այլ կին):

54-71 տարեկան կին, Երազգավորս, Շիրակի մարզ

«[Խաղաղությունը]... երբ դու առավոտը արթնանում ես առանց վախի, որ քո երկիրը հենց էդ օրը կարա կործանվի: Դու քո երեխային, քո եղբորը ճանապարհում ես բանակ՝ առանց վախենալու, որ ինքը կարա զոհվի»:

18-35 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Իմ համար խաղաղությունը էն ա, որ դու հավատ ունես քո հաջորդ օրվա նկատմամբ, որ դու հեռավոր ապագայի մասին պլաններ ես գծում կոնկրետ քո երկրում, ոչ թե ուրիշ տեղ, ոչ թե փորձում ես փախնես էստեղից, այլ մտածում ես էստեղ երեխաներ ունենալու մասին ու հետագայում չես վախենա, որ քո երեխաները գնան բանակ, ու հարցականի տակ լինի իրանց վերադառնալը: Ու եթե էս ամենը հարցականներով չլինի, իհարկե կլինի խաղաղություն, իսկ հիմա ես չեմ համարում, որ մենք խաղաղության մեջ ենք ապրում»:

18-34 տարեկան կին, Երևան

«Խաղաղությունը առանց արցունքների մայրն է, ժպտացող մայրը՝ խաղաղ երկնքի տակ: Դա է էս պահին խաղաղության իմ բնութագրումը»:

18-35 տարեկան կին, Մեղրաձոր, Կոտայքի մարզ

Խաղաղության մյուս շերտը դրա՝ իբրև կայուն զարգացման, սոցիալ-տնտեսական դրության բարելավման նախապայմանի հանրային ձևակերպումն է: Մարդիկ անմիջական և ուղիղ կապ են տեսնում Ղարաբաղյան կոնֆլիկտի հանգուցալուծման, խաղաղության հաստատման, տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման և երկրի ու հասարակության սոցիալ-տնտեսական դրության բարելավման ու կայուն զարգացման միջև: Ղարաբաղի և սոցիալ-տնտեսական դրության բարելավման ու զարգացման փոխկապվածության շուրջ հայաստանյան քաղաքական դաշտում տարիներ շարունակ տիրապետող է եղել վազգենսարգսյանական քաղաքական մտածողությունը, որ հնարավոր է ունենալ տնտեսական զարգացում Ղարաբաղյան առաջին պատերազմից հետո ստեղծված ստատուս քվոյի պայմաններում, որ կարելի է «երկիրը պահել» ընդամենը 7-8 գործարան աշխատեցնելով: Այս քաղաքական մոտեցումը դրվեց անկախ Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահների գաղափարաբանության հիմքում, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանի «Սերգո՛ ջան, դու լավ չես ապրելու, քանի դեռ Ղարաբաղի հարցը կա»[15] արտահայտությունը դավաճանական ու պարտվողական քաղաքականության հոմանիշ դարձավ: Ղարաբաղյան կոնֆլիկտի և Հայաստանի ու Ղարաբաղի

սոցիալ-տնտեսական վիճակների ուղիղ կապն, այսպիսով, տարիներ շարունակ քողարկվում և հանրային-քաղաքական ասպարեզից լուսանցք էր մղվում՝ բարոյականացնելով հարցը: Սակայն Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո նկատում ենք, որ ինչպես բանակի անքննելիության հաղթահարումը, այնպես էլ պատերազմի և հասարակության սոցիալ-տնտեսական դրության կապի վերաիմաստավորումը տեղ ունեն հանրային լայն շերտերի շրջանում:

> *«[Խաղաղությունը] զարգացման նախապայման է»:*
> **18-35 տարեկան տղամարդ, Չարենցավան, Կոտայքի մարզ**

> *«[Խաղաղությունը] կայուն տնտեսական աճ է»:*
> **36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**

ՄԱՍ 3

Տարածաշրջան և ապագա



Անարխիստական, քրիստի հոգեկան մշտական Բնազանցական.
Զերբերբոգրանիկի ոգին կամ, ցրնանոց Հայաստ

36-53 տարեկան կին,
Արմավիր, Արմավիրի մարզ

3.1 Հայաստանը և տարածաշրջանը. սահմաններ և հարաբերություններ

Ինչպե՞ս են ըմբռնվում տարբեր պատմական շրջափուլերում բռնի կոնֆլիկտների և պատերազմների միջով անցած տարածաշրջանը[16] և Հայաստանն այդ տարածաշրջանում, ի՞նչ հարաբերություններ ունի Հայաստանը իր տարածաշրջանային հարևանների հետ, և որո՞նք են տարածաշրջանային հարաբերությունների բնույթը պայմանավորող արմատները, իսկ որտե՞ղ է Հայաստանն աշխարհում. Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո հանրային-քաղաքական դաշտում օրակարգային դարձած այս հարցերը, ի թիվս այլ հարցերի, ուսումնասիրել ենք մեր հետազոտության շրջանակում:

Ինչպես տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում քաղաքական տարբեր սուբյեկտների հետ հարաբերման տեսանկյունից Հայաստանը հանրային տարբեր շերտերի կողմից մեկնաբանվում է շահագործվածի, լուսանցք մղվածի, մեկուսացածի և ազդեցության հնարավորությունից զրկվածի բնութագրիչներով: Մեծ աշխարհում Հայաստանը հանրությանը պատկերվում է իր փոքրությամբ. այլաբանական իմաստով Հայաստանը «գնդակ» է, որին շարունակաբար հարվածում են այս ու այն կողմից, զրկում ինքնիշխանությունից և գործելու կարողությունից:

> *«Աշխարհի համեմատ Հայաստանը շատ փոքր դիրքում է: Նրա [աշխարհի] հետ կապերը հեղհեղուկ են, ոչ այդքան հստակ: Նաև տարածաշրջանային երկրների հետ ինքը փոքրիկ դիրք է գրավում, ով ոնց ուզում, ճնշում է»:*
>
> **54-71 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ**

Ներկա Հայաստանի աշխարհաքաղաքական լուսանցքային դրության շուրջ դատողություններին զուգահեռ տիրապետող են նաև երբեմնի «ծովից ծով Հայաստանի», Հայաստանի՝ մշակութային և քաղաքակրթական խաչմերուկի, աշխարհում առանձնահատուկ հարուստ մշակույթ ունեցողի առասպելականացված

հավաքական գիտելիքը, որ մի կողմից՝ սնում է ազգային սնափառությունը, մյուս կողմից՝ ներկայի բազմակի խնդիրների հետնախորքում տարամտորեն առաջ է բերում հանրային թերարժեքության բարդույթ, կորսված պատմականի հանդեպ անարդարության զգացում: Հայաստանի՝ երբեմնի հնագույն քաղաքակրթական օրրանի և խաչմերուկի, մյուս կողմից՝ տարբեր պատերազմների թատերաբեմի, կռվանի և զոհի ընկալումը, ըստ էության, առասպելականացված և պատմական դետերմինիզմով սահմանադրվող միևնույն հավաքական գիտելիքի դրսևորումն է:

> *«Սա երկրագունդն է, կենտրոնում Հայաստանն է: Իրականում էդպես էլ կա: Ամենակարևոր ճանապարհները Հայաստանով են անցնում՝ Եվրոպան Ասիայից բաժանող, հյուսիս-հարավ: Իրականում ես Հայաստանի դիրքը դիտարկում եմ որպես զարգացման ուժեղ կողմ: Շատ բարենպաստ է: Ու միշտ դեմ եմ եղել էն գաղափարին, որ դպրոցում պատմության դասատուներն ասում են՝ մեր դիրքը շատ վատն է, որովհետև մեծ տերությունների բախման կետում ենք: Մենք ուղղակի չենք գտել մեր ճիշտ դիրքավորումը: Ճիշտ դիրքավորվեք, թող ձեզնից կախված լինեն»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Չարենցավան, Կոտայքի մարզ**

> *«Իմը ավելի շատ ցանկություն է, որ Հայաստանը միշտ լինի աշխարհի կենտրոնում, աշխարհը՝ շրջապատված իրենով»:*
>
> **36-53 տարեկան տղամարդ, Երևան**

«Հայաստանի տեղն ո՞վ գիտի», «կույր է աշխարհը», «աշխարհը բարձրանում է, Հայաստանը՝ իջնում», «կարծես գլոբուսից դուրս լինենք» տարածված հանրային ձևակերպումները երևան են բերում այլ պետությունների համեմատ քաղաքական սուբյեկտությունից զուրկ Հայաստանի ըմբռնումը, որ մշտապես դավաճանված է և անօգնական: Այլ քաղաքական սուբյեկտների հետ հարաբերություններում Հայաստանը հաճախ ընկալվում է ոչ թե իբրև հարաբերությունների կողմ, այլ մշտական զոհ:



18-35 տարեկան տղամարդ,
Շինուհայր, Սյունիքի մարզ

18-35 տարեկան կին,
Վանաձոր, Լոռու մարզ

> *«Հայաստան և աշխարհ. աշխարհը չունի ականջներ, ունի վառ, գեղեցիկ հայացք՝ ուրիշ կողմ ուղղված: Հայաստանը օգնության կարիք ունի»:*
>
> **18-35 տարեկան կին, Մեղրաձոր, Կոտայքի մարզ**

Տարածաշրջանում Հայաստանին տեղայնացնելու հանրային փորձերը կարևոր ներիմաստներ ու շերտեր են երևան բերում:

Աշխարհագրորեն տարածաշրջանում լինելու, բայց դրա մասը չզգալու, Հայաստանը տարածաշրջանից դուրս դնելու, դրանից անջատելու և իբրև քաղաքական միավոր չդիտելու մտայնությունը տիրապետող է ո՛չ միայն հայաստանյան հանրության շրջանում. այս ըմբռնումը պատմական է և բնորոշ է տարածաշրջանային մյուս պետություններին և հասարակություններին ևս՝ զանազան պատմաքաղաքական պատճառների և հանգամանքների բերումով: Ուրեմն ինչպե՞ս ուսումնասիրել տարածաշրջանը և դրանում փոխհարաբերման եղանակներ գտնելու հարցը այս իրավիճակում:

Ինչպես գրում է Ժիրայր Լիպարիտեանն իր «Հայաստանի երրորդ հանրապետութիւն. Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւն» մեծածավալ հատորում, տարածաշրջանի երեք հանրապետությունները երբևէ իրենք իրենց չեն մտածել և չեն գործել իբրև տարածաշրջանի մաս. «*Լինի տնտեսական զարգացման, թե անվտանգության նկատառումներով՝ Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը Սովետական Միության մայրաքաղաք Մոսկվան փոխարինել են Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայով, ԱՄՆ-ով և Եվրոպական միությամբ՝ չնայած տարածաշրջանային համագործակցության համար ներկայացված խոշոր ծրագրերի վերաբերյալ տպավորիչ առաջարկություններին և հրովարտակներին*» (Լիպարիտեան, 2022: 260): Միաժամանակ պատմաբանը կարևոր շերտ է առաջ բերում. իրական տարածաշրջանային մտածողության բացակայությունը դեռևս չի նշանակում, թե երեք հանրապետությունների ապագաները փոխկապված չեն, այդ ապագաները փոխկապված են ինչպես տնտեսական, այնպես էլ անվտանգության առանցքներով: Սակայն այս պետությունների առճակատումը նվաճողների հետ գերիշխում է նրանց հավաքական հիշողության մեջ՝ անվտանգության մտահոգությունը դարձնելով գերակա հանրային-քաղաքական մտածողության մեջ (Լիպարիտեան, 2022):

Հարավային Կովկասը, որ շրջապատված է գերտերություն Ռուսաստանով և տարածաշրջանային երկու խոշոր պետություններով՝ Իրանով և Թուրքիայով, պատմականորեն տարբեր քաղաքական շահերի բախման խաչմերուկ և տրանսազգային ենթակառուցվածքների նշանակալի հանգույց է եղել[60]: Այս հանգամանքն այն դարձնում է գերտերությունների շահերի և ազդեցությունների գոտի, ինչպես նաև արթնացնում անմիջականորեն չսահմանակցող մեծ տերությունների հետաքրքրությունը[61]:

Անկախությունից ի վեր Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը անցել են երկար ճանապարհ և դա արել են միմյանցից տարամետ աշխարհաքաղաքական նախընտրություններով, միմյանց դեմ պատերազմներով, հակասություններով, մրցակցային հարաբերություններով:

Խորհրդային Միությունն այս երեք հանրապետություններին միավորել էր սոցիալիզմի և «ժողովուրդների եղբայրության» գաղափարաբանության ներքո՝ համակեցական որոշակի շրջանակում, որ քողարկում էր քաղաքական սուբյեկտների պատմական հարաբերությունների հակասական և խնդրահարույց էջերը (Խառատյան, Հակոբյան, 2019): Ղարաբաղյան կոնֆլիկտը, պատերազմները մոռացության տվեցին ժողովուրդների համակեցության տարիների փորձառությունը: Հարավային Կովկասի տարածաշրջանում հարևանների հետ բարդ հարաբերությունների, Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանների հետևախորքում Իրանի հետ բնականոն հարաբերություններ պահպանելը անկախության տարիներին Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներից է եղել, որ մեկնաբանվել է նաև Ղարաբաղյան կոնֆլիկտի նկատմամբ Իրանի չեզոք քաղաքականությամբ՝ ի հակադրություն Թուրքիայի, որ դիվանագիտական և քաղաքական առումներով Ադրբեջանի գործընկերն է (Լիպարիտեան, 2022):

Քաղաքագիտական տեսանկյունից պետության տնտեսական և քաղաքական զարգացումը կապվում է այն տարածաշրջանի

60. Հովհաննիսյան, Դ. (2017, դեկտեմբեր 20). *Հայ-վրացական հարաբերություններ. կայուն զարգացման արդիականությունը*. Հայնրիխ Բյոլ հիմնադրամ. https://bit.ly/3nSGb2j

61. Նույն տեղում

հետ, որում գտնվում է տվյալ պետությունը[62]: Այս համատեքստում հատկապես օրակարգային են դառնում փոխադարձ շահի և կապվածության հարցերը, որոնք իրենց հերթին է՛լ ավելի առարկայական են դարձնում անկախության և ինքնիշխանության հարցը: Այս առումով նկատում ենք, որ Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո թե՛ հանրային, թե՛ քաղաքական դիսկուրսի դաշտում տիրապետող են դարձել Հայաստանի ինքնիշխանության և անկախության չափի, արտաքին ազդեցությունների և կողմնորոշումների «գրագետ» ընտրության հարցերը՝ միաժամանակ շրջանակելով անվտանգության ապահովման կարողության առանցքը հարևան երկրների հետ բնականոն հարաբերությունների հաստատմամբ:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, տարածաշրջանում ստատուս քվոյի և ուժային հարաբերությունների փոխակերպումը դարձան տարածաշրջանը և տարածաշրջանում Հայաստանի տեղը վերամտածելու և վերանայելու նշանակալի առիթ: Թեև Ղարաբաղյան երկրորդ պատերազմը տարածաշրջանում հարաբերությունների ու դերերի վերամտածման առիթն է, սակայն վերամտածման բարդ գործընթացը տեղի ունի պատմականորեն ձևավորված և բեռնավորված համատեքստում, ուստի կպահանջի ինքնահայեցման երկար ու ճիգ տարիներ: Չնայած տարածաշրջանում և տարածաշրջանի հետ Հայաստանի հարաբերությունների քաղաքական ու հանրային վերաիմաստավորման փորձերին (տարածաշրջանում Հայաստանի և հարևան պետությունների հարաբերությունները հաճախ համեմատվում և զուգահեռվում են կենցաղում հարևանների հետ շփվելու կարողության հետ)՝ հարևան երկրների հետ հարաբերությունները մեծ մասամբ ընկալվում են իբրև անփոփոխ տրվածություն, որ ենթակա չեն քաղաքական ու պատմական համատեքստերի, գործընթացների փոխակերպումներին: Հարաբերությունների կարծրության մասին հանրային խոսակցություններն արտահայտվում են *«դարերից եկած է»*, *«միշտ է այդպես եղել»*, *«թուրքը մնում է թուրք»*, *«մենք Ցեղասպանություն ենք տեսել»*, *«նրանք Ցեղասպանություն են արել»* և նման այլ ձևակերպումներով:

---

62. Բուն TV. [officialboontv]. (2022, սեպտեմբեր 9). *Բուն զրույց. Արտաքին քաղաքականություն | Աննա Գևորգյան | Աննա Օհանյան*. YouTube. https://www.youtube.com/watch?v=icWoLTFEbVY



54-71 տարեկան կին,
Կապան, Սյունիքի մարզ

Սակայն հարաբերությունների այս կարծր ու չփոփոխվող բնույթի մեկնաբանման շղթան ընդհատվում է, օրինակ, Իրանի հետ հարաբերությունները պատմական համատեքստում տեղայնացնելու, փոխհարաբերությունների փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ որոշարկելու գործընթացում, որտեղ առանցքային ելման կետը կրկին Ղարաբաղյան երկրորդ պատերազմն է:

> *«Հայաստանի համար խաղաղությունը շատ դժվար է... Տեսեք՝ մենք էսօր ասում ենք՝ Իրանը [օգնի], ձեզ թվում է՝ Իրանը մեզ քիչ է կոտորե՞լ: Հիմա մենք էն վիճակում ենք, որ էլի գնացել ենք, էդ կոտորողի ձեռքն ենք համբուրում: Կոտորողի, որովհետև էլի լավը գոնե ինքն է. ճիշտ է, կոտորել է, բայց հիմա լավը դա է: Մենք պետք է լավ ուժեղ լինենք, ավագ եղբայր ունենանք»*:
>
> **18-35 տարեկան տղամարդ, Նալբանդյան, Արմավիրի մարզ**

Այսպես՝ մենք նկատում ենք, որ տարածաշրջանի, Հայաստանի և հարևան պետությունների հետ հարաբերությունների բնույթի, դրանց փոխակերպումների հանրային ընկալումները մեծապես պայմանավորված են պատմական համատեքստով և հիշողության քաղաքականություններով, Ղարաբաղյան երկրորդ պատերազմի թարմ հետքով և տրավմայով, տարեց մարդկանց շրջանում խորհրդային անցյալի կենսափորձով, ամենօրյա մեդիա մանիպուլյացիաներով ու քաղաքական տարբեր հետաքրքրություններ ունեցող ուժերի շահարկումներով:

«Ծովից ծով Հայաստանի» իդեոլոգեմը տարածված է ինչպես երիտասարդների, այնպես էլ տարեցների շրջանում: Սակայն կարևոր է նկատել, որ հանրության համար այն չունի իրականության մեջ գործադրվելու ներուժ, այլ առավելապես դարձել է մշակութային մանթրա, որ սովոր ենք կրկնելու դպրոցներում՝ պատմության դասերին, բարեկամական հավաքներին՝ կենացների տեսքով, թուրք և ադրբեջանցի քաղաքական գործիչների հետ՝ տաղտկալի բանավեճերի ժամանակ:

Տուն տան հայրենական
առանց թուրքերի

54-71 տարեկան տղամարդ,
Նալբանդյան, Արմավիրի մարզ

> *«Նկարել եմ ծովից ծով Հայաստան ու մտածում եմ, որ կգա ժամանակ, որ մեր սերունդները կհպարտանան նորից մեր հայրենիքը ձեռք բերելու համար, ու մեր սահմանները կսկսվեն Կասպից ծովից ու կավարտվեն մինչև Սև ծով»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Գյումրի, Շիրակ**

Տարածաշրջանում կամ աշխարհում Հայաստանի դերի և հարաբերությունների հանրային ըմբռնումները կապված են ոչ միայն անցյալի, այլև ապագայի հետ: Այլ պետությունների հետ հարաբերությունները և սեփական քաղաքական սուբյեկտության սահմանները պայմանավորվում են աշխարհաքաղաքական մակարդակում ապագայի անորոշությամբ ու վատատեսական սցենարներով՝ մասնավորապես շեշտադրելով Ռուսաստանի հարձակումը Ուկրաինայի վրա և դրա առաջ բերած անկայունությունները:

> *«Պետությունների միջև պայքար է: Տնտեսապես են կռվում՝ ում փողն ավելի բարձր կլինի: Միգուցե սպասենք, տեսնենք՝ իրենց [Ռուսաստան, Ուկրաինա] մոտ ո՞նց կխաղաղվի, ո՞վ կհաղթի, հետո երևի մի քիչ կպարզվի մեր վիճակը: Էս պահին ոչ մի բան [պարզ չէ]: Հլը որ Ռուսաստանը պատերազմի մեջ է, Եվրոպան, Ամերիկան Ռուսաստանի դեմ են»:*
>
> **36-53 տարեկան կին, Մալիշկա, Վայոց ձոր**

Կարևոր է նաև նշել, որ պատերազմի պարտության, լարվածության ու թշնամության սրված վիճակում մարդիկ երբեմն ցուցադրաբար՝ իբրև բողոքի գործողություն, չէին պատկերում Ադրբեջանը տարածաշրջանում՝ խոսքային մակարդակում նշելով, որ դա անում են նպատակային: Թղթի վրա Ադրբեջանին չպատկերելու, տարածաշրջանի տեսողական դաշտից Ադրբեջանին «հանելու» այս հատուկենտ գործողությունները նյութականացնում են պատերազմից հետո առաջացած հանրային զայրույթը, վախերը և տագնապները:

Հարևան պետությունների հետ քաղաքական ու տնտեսական հարաբերություններ ունենալուն զուգահեռ հանրությունը առանձնացնում է նաև մարդկային փոխհարաբերությունների շերտը: Եթե Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններում գերակա է

փոխադարձ շահի գաղափարը, և այս առումով տնտեսական հարաբերությունները կարգավորելի և շահավետ են թվում, ապա ժողովուրդների հարաբերությունների կարգավորումը, որ ձևակերպվում է իբրև բարեկամություն, հիմնականում հանդիպում է առավել սուր մերժման:

> *«Շահեր կան միայն. եթե շահերը համընկնում են, դուք բարեկամներ եք, իսկ եթե չէ, չէ: Եթե շահերը շատ են, ավելի շատ բարեկամներ ենք: Որովհետև բոլորս ռացիոնալ մարդիկ ենք ու չենք կարա տենց չլինենք, մեր կոմֆորտից դուրս գանք»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Երևան**

> *«Դու հարևան ես, ինչքա՞ն կարող ես թուր ու թվանքի միջավայրում գոյատևել: Դա թունավոր միջավայր է. կամ դու ես խեղդվելու, եթե թույլ եղար, կամ քեզ ուտելու են: Հետևաբար դու պետք է հասկանաս, որ դու թույլ ես ու, ուզես-չուզես, պետք է ինչ-որ ձևով լեզու գտնես, որովհետև դա են ենթադրում խաղի կանոնները. չես կարող անընդհատ փակվել, փակվելով չես կարող առաջ գնալ»:*
>
> **36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**

> *«Դե, հիմա, էս պատերազմից հետո չեմ պատկերացնում, որ ինչ-որ մեկը կարող է լսի ու ասի՝ հա՛, եկե՛ք սիրենք իրար»:*
>
> **18-35 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ**

Թեև Ղարաբաղյան երկրորդ պատերազմն է՛լ ավելի մեծ սրություն է տվել Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերություններին, այն նաև նոր թափ է հաղորդել Վրաստանի հետ փոխհարաբերությունների հանրային դիրքորոշումներին և քննարկումներին:

Վրաստանն իր աշխարհագրական դիրքի բերումով մշտապես միջնորդ է եղել Հայաստանի և Ադրբեջանի միջև ու չի թաքցրել արտաքին քաղաքականության իր արևմտյան կողմնորոշումը[63]:

63. Նույն տեղում



18-35 տարեկան տղամարդ,
Չարենցավան, Կոտայքի մարզ

Խորհրդային անցյալը՝ գաղութատիրական, իսկ ներկան «եվրոպական ընտանիքի» անբաժանելի մաս համարող Վրաստանի հետ Հայաստանի հարաբերությունները թեև ոչ բացահայտ, սակայն դեռևս խորհրդային անցյալից ժառանգված մշակութային և քաղաքական մրցակցության տրամաբանության շրջանակում են: Եթե ընդհանրացնենք, ապա հայ-վրացական հարաբերությունները երկուստեք մշտապես սահմանվել են որոշակի «վերապահումներով»: Մենք նկատում ենք, որ Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ընթացքում Վրաստանի դիրքորոշումների կամ գործողությունների մեդիա ներկայացումները և մեկնաբանությունները էապես ազդել են հանրային շերտերի ըմբռնումների վրա՝ առավել ցայտուն դարձնելով հայ-վրացական հարաբերությունների «անառողջ» բնույթը (Լիպարիտեան, 2022):

Ներկայում Վրաստանի հետ ունեցած հարաբերությունների հանրային ընկալումները և ձևակերպումները եզրագծվում են պատերազմի ժամանակ նրա չցուցաբերած աջակցության բարոյական նարատիվով: Միաժամանակ պատերազմի զոհի և պարտվածի տեսանկյունից աջակցության տրամադրումը ձևակերպվում է իբրև ինքնըստինքյան ենթադրելի՝ հիմնականում չանդրադառնալով պատերազմին նախորդած տարիներին Հայաստան-Վրաստան հարաբերությունների բնույթին, դրանք սահմանադրող գործոններին:

> *«Ասենք, Վրաստանի հետ ի՞նչ հարաբերություն պահես, եթե պատերազմի ժամանակ ճանապարհ էր փակել, չէր թողնում, որ Ռուսաստանից զենքը, զինամթերքը, թեկուզ շտապօգնության մեքենաները գային Հայաստան: Կամ հիմա մեր ծիրանների պահով նորից ճանապարհ փակեցին, ու ամբողջը փչացավ»:*

54-71 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

3.2 Հայաստանի դերը տարածաշրջանում

Տարածաշրջանի, մասնավորապես՝ Հարավային Կովկասի երկրների մասին խոսելիս պետք է շեշտել, որ չնայած դրանց վարած արտաքին և անվտանգային, ներքին և սոցիալ-տնտեսական քաղաքականությունների տարբերություններին՝ դրանք բարդ և խրթին կապերով միահյուսված են: Լինելով փոքր պետությունների տարածաշրջան[64]՝ Հարավային Կովկասի երկրները զգայուն են և մեծապես ազդվում են համաշխարհային իրադարձություններից, ազդեցիկ ու խոշոր պետությունների քաղաքականություններից, հեշտությամբ ենթարկվում են ցնցումների (Լիպարիտեան, 2022): Թեև հենց այս պարագայում է՛լ ավելի կենսական է թվում տարածաշրջանային համագործակցությունների անհրաժեշտությունը, մենք նկատում ենք, որ գործ ունենք տարածաշրջանային մտածողության բացակայության կամ այդպիսի մտածողության փխրունության հետ: Ըստ էության՝ տարածաշրջանին ավելի բնութագրական են առանձին պետությունների երկկողմանի հարաբերությունները, որոնք կարող են լինել նաև հիերարխիկ՝ ի հակադրություն պետությունների փոխհամագործակցային և ավելի լայն՝ տարածաշրջանային հարաբերությունների:

Թեև տարածաշրջանային վերլուծությունները և գնահատականները թողնված են քաղաքագետներին, տեղական ու միջազգային փորձագետներին, որոնք հատկապես Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո տիրապետող դիրք ունեն հայաստանյան մեդիայում, մեզ՝ իբրև սոցիոլոգների, կարևոր է թվում տարածաշրջանի հանրային ըմբռնումների բացահայտումը:

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ հանրային տարբեր շերտեր տարածաշրջանի շուրջ իրենց դատողություններում հենվում են շահի և ազդեցությունների կատեգորիաների վերլուծության, տարածաշրջանում մասնավորապես Ռուսաստանի դերակատարման և Հայաստանի քաղաքական սուբյեկտության չափի վրա: Ղարաբաղն ըմբռնվում է իբրև ռուսական շահի և ազդեցության գոտի,

64. Հովհաննիսյան, Ս. (2014, օգոստոս 23). Հարավային Կովկաս. տարամետ տարածաշրջան. *civilnet.am.* վերցվել է՝ https://bit.ly/3ldlwoE

իսկ Ռուսաստանին վերագրվում է թե՛ պատերազմը հրահրողի, թե՛ «անխուսափելի» ռազմավարական դաշնակցի դերը, որի հետ թակարդային հարաբերությունների վատթարացումը կարող է Հայաստանի համար կործանարար լինել: Դժվար չէ նկատել, որ սա ոչ միայն հանրային, այլև գերակա քաղաքական մտայնություն և դիսկուրս է Հայաստանում, որ երևան է բերում հանրայինի և քաղաքականի անմիջական կապը:

Այս տեսանկյունից ամբողջ Հարավային Կովկասը հանրային ընկալումներում խոշորապես ռուսական վերահսկողության տարածք է պատկերվում, որտեղ մեծ դերակատարում ունի նաև Թուրքիան: Այսպիսով՝ Հայաստանը պատերնալիստական և ենթակայական հարաբերությունների մեջ է Ռուսաստանի, իսկ Ադրբեջանը և Վրաստանը՝ Թուրքիայի հետ: Այս ենթակայական հարաբերություններից, սակայն, դուրս է Իրանը:

> *«Հարևան երկիրը Թուրքիան է, որի հետ չունենք հարաբերություն: Հարևան է Ղարաբաղը՝ չունենք ոչինչ, Վրաստանը մի օր լավ է, մի օր վատ է: Գերտերություն մնաց Իրանը, էն էլ Աստված գիտի՝ նրա խելքին երբ ինչ կփչի»:*

36-53 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Տարածաշրջանում ենթակա և քաղաքական սուբյեկտությունից զուրկ ընկալվող Հայաստանը, ըստ հանրային տարբեր շերտերի, ներգրավված չէ առհասարակ և մասնավորապես իրեն վերաբերող որոշումների կայացման գործընթացում, ստորակա դիրքում է տարածաշրջանային մյուս պետությունների հետ հարաբերություններում:

> *«Իրանի հետ նորմալ է, Վրաստանի հետ էլ կարելի է ասել՝ նորմալ է: Ադրբեջանն է մեր հիմնական խնդիրը: Ռուսաստանին գնահատում եմ լավ: Այսօր իր պաշտպանները չլինեին, ի՞նչ կլիներ Արցախի, Հայաստանի վիճակը: Բայց իմ կարծիքով սա Ռուսաստանի թեման է, Ռուսաստանը ոնց ասում է, մեր ղեկավարությունը տենց էլ շարժվում է»:*

54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ



18-35 տարեկան կին,
Երևան

> *«Տարածաշրջանում ո՞վ է Հայաստանի կարծիքը հաշվի առնում... Թելադրում են [Հայաստանին]»:*
>
> **36-53 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ**

Հաշվի առնելով կախյալության հանգամանքը՝ տարածաշրջանում Հայաստանի և Վրաստանի փոփոխական և անկայուն, իրավիճակային հարաբերությունների հիմքում դրվում են արտաքին քաղաքականության տարբեր ուղղությունները:

> *«Վրաստանի հետ շատ խառն են հարաբերությունները, քանի որ երկու երկրները շատ տարբեր հայացքներ ունեն. Վրաստանը՝ դեպի ՆԱՏՕ, իսկ Հայաստանը՝ դեպի ՀԱՊԿ, ԱՊՀ: Դրա համար իրենք միշտ կոնֆլիկտների մեջ են ընկնում, ու այնպես չէ, որ իրենց էս հարաբերությունները իրենցից են կախված. իրենց թելադրող ուժերից են կախված՝ կոպիտ ասած»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Չարենցավան, Կոտայքի մարզ**

Հենվելով մեր հետազոտության վրա՝ կարող ենք պնդել, որ հանրային լայն շերտերի շրջանում տիրապետող է Հայաստանի և հայերի՝ իբրև «զոհի», առանց դաշնակիցների և թշնամական միջավայրում գոյատևողների ըմբռնումը: Առանցքում էսենցիալիստական և պատմական դետերմինիզմի մտածողությունն է, որի ներքո Հայաստանն ըմբռնվում է իբրև *«գիշատիչ հարևանների»* կողմից մշտապես ճնշումների ենթարկվող պետություն: Տարածաշրջանային հարաբերություններում շարունակաբար «ճնշվածի» կամ «զոհի» վիճակում լինելը մարդիկ մեկնաբանում են Հայաստանի աշխարհագրական դիրքով, Ղարաբաղյան երկրորդ պատերազմի պարտությամբ և դրանից հետո սահմանային լարվածություններով, տարածքային կրճատումների հետևանքով հնարավոր շրջափակման մեջ հայտնվելու վախերով:

Աշխարհագրական դիրքի պատճառով է նաև, որ Հայաստանն ընկալվում է իբրև պատերազմների թատերաբեմ և գերտերությունների ձեռքում խաղալիք՝ թույլ, փոքր պետություն: Հակամարտությունների և «պատերազմների խաչմերուկում» գտնվող Հայաստանի դերի ընկալումը Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո շրջանակվում է «միջանցք տրամադրողի» քաղաքական նարա-

18-35 տարեկան կին,
Մեղրաձոր, Կոտայքի մարզ

տիվով: Այս մի իմաստով անելանելի ընկալվող համատեքստում, սակայն, տարածում ունի նաև ճնշվածի, պարփակվածի դրության հաղթահարման անհրաժեշտության հանրային դիսկուրսը, որ առավելապես կապվում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու, զարգացման ուղիները բազմազանելու անհրաժեշտության հետ:

> *«Մենք մնացել ենք խաչմերուկ, բայց մեզ չեն զարգացնում՝ հաշվի առնելով, որ հնարավոր ա՝ մեր տարածաշրջանում անընդհատ փոփոխություններ լինեն: Նույն խաչմերուկը տարածաշրջանում ենք: Բոլորս էլ գիտենք՝ Կովկասի հատման տեղում ենք: Բոլոր ճանապարհները նորից մեր մոտով են անցնում, մեզանով են անցնում, բայց էլի վախենում են՝ մեզ մոտ ինչ-որ առաջ գնացած զարգացում տեսնեն՝ մտածելով, որ կարող ա ինչ-որ բան հետագայում պատահի, և ամբողջ ներդրումը փոշիանա»:*

36-53 տարեկան տղամարդ, Թումանյան, Լոռու մարզ

Զոհականացման գերակա մտայնությունը էականորեն սահմանափակում է Հայաստանին՝ այլ քաղաքական սուբյեկտների հետ փոխհարաբերություններում իբրև պատասխանատու կողմի և ոչ թե հարատև զոհի տեղայնացնելու հնարավորությունը՝ շարունակաբար վերարտադրելով արտաքին ուժերից կախյալության, սեփական անզորության ընկալումը:

Արտաքին դերակատարներից կախյալության անելանելիության ընկալումը բյուրեղանում է Ռուսաստանի հետ հարաբերությունների հանրային վերլուծություններում: Նկատում ենք, որ առավել տարեց հանրային շերտը Ռուսաստանի հետ հարաբերությունները ձևակերպում է իբրև կեղծ դաշնակցային, անհավասար, կախյալ և անցանկալի, բայց դրանց վատթարացումը դիտում է վերահաս անվտանգային մարտահրավերներով հղի: Այս կերպ վերարտադրվում և լեգիտիմացվում է Ռուսաստանի՝ ուժի և ենթակայեցման քաղաքականությունը նաև հանրային մակարդակում: Այս առումով ակներև է, որ տարիներ շարունակ Ղարաբաղի և Հայաստանի անվտանգությունը Ռուսաստանի գերիշխմամբ



18-35 տարեկան տղամարդ,
Երևան

արդարացնելու հատկապես երկրորդ և երրորդ նախագահների քաղաքականություններն իրենց տեղն են գտել հանրային մտածողության մեջ: Երիտասարդների շրջանում Ռուսաստանի հանդեպ քննադատությունը շատ ավելի ուղիղ է, իսկ ռուսական ազդեցությունից դուրս գալու հարցը՝ հրատապ՝ իբրև Հայաստանի ինքնիշխանության և անկախության հնարավորություն: Տարածաշրջանում իբրև Ռուսաստանին հակակշիռ փաստարկվում է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումն իր հետևանքներով:

> *«Ռուսաստանն ամեն ինչ անում է՝ իր շահերից ելնելով: Ոչ մեկիս սիրուն աչքերի, ղարաբաղցու սիրուն աչքերի համար չէ: Իրան պետք էր իր խաղաղապահ ուժերը դնել Ղարաբաղում, սկսեց պատերազմը, էդքան անմեղ զոհեր [եղան]: Բայց մեր միակ հույսը էլի Ռուսաստանն ա՝ մեր սպիտակ թշնամին: Եթե հիմա մենք ուզենանք, ձեռք մեկնենք ուրիշ պետության, կընկնենք Ուկրաինայից վատ վիճակի մեջ»:*
>
> **54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ**

> *«Ինձ համար ամենավտանգավոր հարաբերությունները Ռուսաստանի հետ հարաբերություններն են: Դարեր շարունակ ինչքան որ մեր կողքին են եղել, եղել են մեզ կործանելու, մեզ ծախելու նպատակով: Ամենամտահոգիչը ռուսն է: Էս դեպքում ավելի լավ է թուրքի հետ, քան ռուսի»:*
>
> **18-35 տարեկան կին, Երևան**

Հանրային քննարկումներում տարածաշրջանում հարևան երկրների հետ հարաբերությունների կարգավորման հարցը աշխարհաքաղաքական ազդեցությունների մակարդակից զատ իմաստավորվում է նաև ներհայաստանյան քաղաքական դաշտի շերտում: Ներքաղաքական համախմբվածությունը և հանուն պետական շահի գործելը տարածաշրջանում հարևան պետությունների հետ հարաբերությունների կարգավորման նախադրյալներից մեկն է սահմանվում: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո «ներքին դավաճանների» և «հողերը ծախածների» փնտրտուքի առանցքի շուրջ տարամիտված ներքաղաքական դրությունը





18-35 տարեկան կին,
Երևան

հանգեցրել է խոր հանրային հոգնածության: Այս համատեքստում տարածաշրջանային հարևանների հետ լեզու գտնելու կարողությունը հանրությունը բխեցնում է ներքաղաքական հաշտության հասնելու հնարավորությունից: Այս փուլը հաղթահարելու շնորհիվ հնարավոր է անդրադառնալ երկրից դուրս, տարածաշրջանում այլ հարևան պետությունների հետ հարաբերություններին ու դրանց կարգավորմանը:

Այս տեսակետին հակառակ՝ գոյություն ունի «ցանկալի» տարածաշրջանի պատկերացումը, որտեղ Հայաստանն է՝ քրիստոնյա պետություններով շրջապատված: Ի դեպ, կրոնական պատկանելության հարցը երբեմն դառնում է տարածաշրջանային հարաբերությունների բնույթի ձևակերպման մեկնակետ, ըստ որի՝ քրիստոնյա և մուսուլման հասարակությունների միջև անվստահության առաջացումն ավելի հավանական է:

> *«Մուսուլմանական պետություններով շրջափակված պետություն ենք: Ներսից պետք է ուժեղանանք»:*
>
> **36-53 տարեկան տղամարդ, Թումանյան, Լոռու մարզ**

Տարածաշրջանային հարաբերությունների շուրջ քննարկումներում հաճախ է առաջ գալիս խորհրդային անցյալի համատեքստը, հատկապես Ադրբեջանի հետ համակեցությունը վերհիշելիս: Այդուհանդերձ, ինչպես խորհրդային տարիներից ժառանգած, այնպես էլ երբեմնի հաղթանակածի դիրքով շրջանակված վերհուշերում Խորհրդային Միության տարիները հոժարությամբ են դառնում հղման կետ՝ իբրև Ադրբեջանի նկատմամբ գերիշխող դիրք ունենալու Հայաստանի պատմական շրջափուլ, համակեցություն, որ հենված էր մեր մշակութային գերակայության վրա: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանի հետ խաղաղ համակեցության հանրային ըմբռնումները հիմնականում արմատացած են, սակայն արմատական-մերժողական տեսակետների կողքին կան նաև նման դիրքորոշումները քննադատող ձայներ՝ ադրբեջանական հասարակությանը ապրումակցելու, երկու հասարակությունների համար պատերազմի ողբերգական հետևանքները զուգահեռելու փորձեր:

Դեպքերը և Տարբերությունը



36-53 տարեկան տղամարդ,
Երևան

«Հիմա էնտեղ [Ադրբեջանում] էլ կան, չէ՞, զոհվածների ծնողներ... Բնականաբար էդ պատերազմը նրանց էլ չէր կարող ձեռք տալ»:

36-53 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

«Էն անգամ ժողովուրդը [Ադրբեջանում] ասում էր՝ ես ուզո՞ւմ եմ, որ իմ երեխան գնա կռվի, չէ՛, չեմ ուզում: Դուք ղեկավարությունը կպեք, մեզ հետ գործ չունեք: Հիմա թե՛ հայի, թե՛ վրացու, թե՛ ադրբեջանցու դեպքում ղեկավարությունն է անում [հրահրում], ժողովուրդը մեղավոր չէ»:

54-71 տարեկան կին, Երազգավորս, Շիրակի մարզ



18-35 տարեկան կին,
Վանաձոր, Լոռու մարզ

3.3 Հայ-թուրքական հարաբերություն-ների կարգավորման հանրային ընկալումները

Տարածաշրջանում հարևան երկրների հետ հարաբերություն-ների տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության են արժանի հայ-թուրքական հարաբերությունները և դրանց հանրային ընկալումները պատմական զարգացման և Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո սկսված կարգավորման նոր շրջափուլի համատեքստում:

Թեև Թուրքիան առաջին պետություններից էր, որ 1991 թ. ճանաչեց Հայաստանի անկախությունը, սակայն երկու երկրների միջև մինչ օրս դիվանագիտական հարաբերություններ հաստատված չեն[17]: Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու Թուրքիայի պայմաններից մեկը Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դադարեցումն ու 1921 թ. Կարսի պայմանագրով հայ-թուրքական սահմանի ճանաչումն էր[65]:

Հիշողության քաղաքականությունները կարող են մոռացության տալ նույնիսկ ոչ վաղ անցյալի պատմությունը: 2008 թ.ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ սկսվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նոր փուլ (առավել հայտնի է որպես «ֆուտբոլային դիվանագիտություն»), որի ընթացքում 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի և Թուրքիայի ԱԳ նախարարները ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները[66]:

2008-ից ձեռնարկված կարգավորման գործընթացը հաջող ավարտ չունեցավ ներքին և արտաքին տարբեր պատճառներով, որոնք, թերևս, քաղաքագետների և պատմաբանների վերլուծու-

---

65. Հակոբյան, թ. (2017, հուլիս 10). Հայաստան-Թուրքիա՝ հարյուրամյա դիվանագիտական հարաբերություններ. *civilnet.am*. https://cutt.ly/n85QOrt

66. ՀՀ արտաքին գործերի նախարարություն. Երկկողմ հարաբերություններ. Թուրքիա. *mfa.am*. https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr

թյան առարկան են: Այստեղ նշենք, որ այդ շրջանում Ցեղասպանության ճանաչման նախապայմաններից հրաժարվելու հարցը կրկին արդիացել էր հանրային-քաղաքական դիսկուրսում, հայ-դատականության քաղաքականություններից սնվող դավաճանության և «թուրքացման» դիսկուրսները ևս գերակա էին: 2014 թ. Սերժ Սարգսյանը ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում, որի ժամանակ, ըստ էության, հռչակեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ճախողումը՝ հայտարարելով, որ Թուրքիայի նախապայմանը «Լեռնային Ղարաբաղը՝ ազատ Արցախը, Ադրբեջանին հանձնելն է», որին մարդկանց (ո՞ր մարդկանց) արձագանքը պարզ է՝ «գրողի ծոցը վավերացնեք»[67]: Արդեն 2018 թ. մարտի 1-ին Սերժ Սարգսյանի հրամանագրով դադարեցվեց հայ-թուրքական արձանագրությունների կնքման ընթացակարգը[68]:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ընթացքում Թուրքիայի կողմից Ադրբեջանին աջակցությունն ու թուրքական զորքերի, զինվորական հրամանատարական կազմի ներգրավվածության մասին տեղեկությունը հանրային ատելության և բարկության նոր ալիք բերեցին:

Ադրբեջանն ու Թուրքիան, ադրբեջանցուն և թուրքին նույնացնելու տիրապետող քաղաքականությունները է՛լ ավելի մեծ թափ ստացան պատերազմի հետնախորքում՝ ամրապնդելով տարածաշրջանում միայնակ և անդաշնակից լինելու հանրային սենտիմենտը: Չնայած Ցեղասպանության տրավմային և Թուրքիայի կողմից այն չճանաչելուն՝ Ղարաբաղյան կոնֆլիկտը շարունակում է մնալ Թուրքիան ու Հայաստանը բաժանող, սահմանները փակ պահող հիմնական պատճառը:

> *«Չի կարելի ադրբեջանցուց առանձնացնել թուրքին: Նույն ձև ենք տեսնում. նույն դրոշի, նույն բնույթի տակ ենք տեսնում»:*
>
> **18-35 տարեկան կին, Մեղրաձոր, Կոտայքի մարզ**

---

67. Ասլանյան, Կ. (2014, սեպտեմբեր 24). Երևանը քննարկում է հայ-թուրքական արձանագրությունները խորհրդարանից ետ կանչելու հարցը. *azatutyun.am*. https://www.azatutyun.am/a/26604643.html

68. ՀՀ արտաքին գործերի նախարարություն. Երկկողմ հարաբերություններ. *mfa.am*. https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr:

Տարիների դադարից հետո հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման քաղաքական գործընթացը նոր հուն մտավ Ղարաբաղյան երկրորդ պատերազմից, մասնավորապես 2021 թ. հունիսին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո: ՀՀ 8-րդ գումարման Ազգային ժողովում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից նախագահի տեղակալ ընտրված Ռուբեն Ռուբինյանը այդ պաշտոնում ստանձնեց հայ-թուրքական բանակցությունների հատուկ ներկայացուցչի գործառույթը[69]: Հարաբերությունների կարգավորման գործընթացի այս նոր փուլը հանրային-քաղաքական քննարկումների և քննադատության ալիք բարձրացրեց: 2023 թ. փետրվարի 6-ին Թուրքիայի հարավ-արևելքում՝ Սիրիայի հետ սահմանին, ավերիչ երկրաշարժից հետո հումանիտար աջակցություն տրամադրելու նպատակով առաջին անգամ տևական ընդմիջումից հետո Հայաստանը Թուրքիային կապող ավտոճանապարհը կարճ ժամանակով բացվեց. Մարգարայի կամրջով Հայաստանը հումանիտար աջակցություն ուղարկեց աղետից տուժած Ադիյաման քաղաք, որտեղ աշխատում էր հայ փրկարարների խումբը: Մնում է սպասել, թե արդյոք քաղաքական, դիվանագիտական և հումանիտար այս քայլը կարո՞ղ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում, մասնավորապես սահմանների բացման հարցում շոշափելի նպաստ ունենալ:

Մեր հետազոտությունը երևան է բերում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման շուրջ հանրային զգուշավորություններ և տագնապներ, որոնք շրջանակված են տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտների «գրավման» վախով, որը երբեմն սնվում է առօրյա դավադրապաշտական տեսություններից: Միաժամանակ պատմական անցյալը, Թուրքիայի կողմից Ցեղասպանությունը չճանաչելը, «թուրքը մնում է թուրք» իդեոլոգեմիզացված հանրային մանթրան սահմանափակում են հասարակության հնարավորությունը՝ ժամանակատեղելու հայ-թուրքական հարաբերությունները պատմական ու քաղաքական ներկայում: Թուրքերի՝ իբրև հավաքականության հանդեպ հանրային դիրքորո-

69. «Ազատություն» ռադիոկայան. (2021, դեկտեմբեր 18). Թուրքիայի հետ երկխոսության գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչը կլինի Ռուբեն Ռուբինյանը. *azatutyun.am.* https://www.azatutyun.am/a/31615529.html

շումը երևան է բերում էսենցիալիստական մտակառուցվածքների և հարատև թշնամության գերակայության հիմնախնդիրը՝ *«երբե՛ք չի կարգավորվի», «սուտ է ու չի լինի», «Թուրքիայի հետ ի՞նչ հարաբերություններ կարգավորես, եթե մեր թշնամին է»:*

Այդուհանդերձ, տարածված է նաև հանրության՝ ներկան անցյալից տարանջատելու փորձը: Անցյալի նշանակալիությունը մատնանշելով՝ առանցքային է մեկնաբանվում դրա ազդեցության նվազեցման հրամայականը ներկա հարաբերությունների զարգացման և առաջընթացի գործում:

> *«Սահմանները բացեն, Հայաստան-Թուրքիա ազատ ելք ու մուտք, առևտուր [լինի]: Ասում ես՝ Ցեղասպանությունը չես ների, չէ՞, ասում ես, պահանջում ես՝ ճանաչի՛ր, բայց դա հիմիկվա էս բանի հետ չպետք է կապես: Պետք ա զարգանանք, սերունդը զարգանա, շրջափակման մեջ ենք: Եթե ասենք՝ մենք էդքան զոհ ունենք, իրանք էլ զոհ ունեն, ավելի շատ զոհ ունեն: Չպիտի իրար հետ համեմատեն»:*

54-71 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

Միաժամանակ Թուրքիայում հայկական համայնքի գոյությունը, Թուրքիայի ներսում երկու ժողովուրդների համակեցությունը թեև հազվադեպ, բայց քննարկման շոշափելի հարց է հանրային որոշ շերտերի համար, որ գալիս է նպաստելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավորության պատկերացմանը:

> *«Պատերազմի ընթացքում էնտեղ ապրողներին հարցնում էինք՝ լարվածություն կա՞, ասում էին՝ էն, ինչ կա, ղեկավարների մեջ է, ոչ թե հասարակ ժողովրդի: Ասում էին՝ մենք ընդհանրապես չենք զգում տարբերություն»:*

36-53 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Հարաբերությունների կարգավորման մերժողականությունը նվազում է, երբ կարգավորման հարցը շրջանակվում է ժողովրդի և պետության տնտեսական դրության բարելավմամբ, տնտեսական կապերի աշխուժացմամբ: Հանրության համար հաճախ ընդունելի

և նույնիսկ կարևոր է տարածաշրջանում և աշխարհում տնտեսապես հզոր երկրի հետ հարաբերությունների կարգավորումը:

> *«Լարսը կմոռանանք [ապաշրջափակման հետևանքով]... Պարտք կանեմ, վիզ կդնեմ, 5-10 հեկտար կարտոֆիլ կցանեմ: Աշունը 80-100 տոննա կքանդեմ, կբերեմ մեր տուն, կկապեմ, կդնեմ ֆուռի մեջ, կքշեմ, կհասնեմ Պարսկաստան, Նախիջևանով կմտնեմ Թուրքիա, կվաճառեմ, կգամ»*:
>
> **36-53 տարեկան տղամարդ, Լճաշեն, Գեղարքունիքի մարզ**

Այս համատեքստում հանրության համար էլ ավելի գերակա է դառնում իշխանությունների դիվանագիտական կարողությունների հարցը: Այս առումով հանրային վրդովմունքի առարկա են հատկապես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի ներկայացուցիչների անփորձությունն ու տարիքը՝ ի հակադրություն թուրք փորձառու դիվանագետների:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման տնտեսական ասպեկտը թեև առավել իրատեսական է հանրության համար, միաժամանակ ազգային վախերի ու մտահոգությունների հերթական շերտն է բացահայտում. սահմանի բացման հետևանքով Հայաստանի փխրուն տնտեսության ոչնչացումը դիտվում է իբրև հնարավոր սցենար: Միաժամանակ տնտեսական հարաբերությունների կարգավորումից չի բխեցվում հաշտությունը կամ հարևանական համակեցությունը. թուրքի հետ զգուշավորության մտայնությունը տիրապետող է:

Տարածաշրջանում հարևան երկրների հետ հարաբերությունների ողջ գունապնակը հաշվի առնելով՝ հանրային դիսկուրսը կառուցվում է իրապաշտականության գերակա տեսակետի շուրջ, որ, անկախ բարեկամական, դաշնակցային կամ ոչ այդքան համագործակցային հարաբերություններից, յուրաքանչյուր երկիր առաջնորդվում է սեփական շահով և այդ հարաբերություններից ունեցած օգուտով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հանրային որոշ խմբեր սկզբունքային են համարում Հայաստանի արտաքին քաղաքականության բազմազանեցումը: Հատկապես երիտասարդները, որոնք մտածում են, որ տարածաշրջանային փակ սահմաններն

անհեռանկարային են, կարևորում են Հայաստանի՝ տարածաշրջանային երկրների, այդ թվում՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Իհարկե, տարածված են նաև Ադրբեջանի և Թուրքիայի հետ ցանկացած բնույթի հարաբերություն մերժելու հանրային տրամադրությունները:

> *«Պետք է դիվանագիտական հարաբերություններ ստեղծել և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի հետ՝ համ պատերազմից խուսափելու, համ էլ ուղղակի խաղաղության մեջ ապրելու համար»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Չարենցավան, Կոտայքի մարզ**

Մարդկանց փորձից ու նաև տարիքից կախված՝ գոյություն ունի նաև այն հստակ դիրքորոշումը, որ տարածաշրջանում հարևանների հետ հարաբերություններ կառուցելը անխուսափելի է, իսկ դրա մերժումը՝ ոչ տրամաբանական: Պատմական անցյալը ներկայի վրա արտապատկերելը սահմանափակում է տարածաշրջանային հարաբերությունների կարգավորման ուղիներ փնտրելու և զարգանալու հնարավորությունները:

> *«Գերմանիան ստրատեգիական գործընկեր չի, Ամերիկայի հետ աշխարհագրական շփման գիծ չունենք, կետ չունենք: Դու, ուզես-չուզես, քո մոտակա հարևանների հետ պետք է լեզու գտնես, դե մեր հարևաններն էլ այնպես է ստացվել, որ իրենք են: Մեզ դիվանագետներ են պետք»:*
>
> **36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**



18-35 տարեկան տղամարդ,
Շինուհայր, Սյունիքի մարզ

3.4 Տարածաշրջանում հաղորդակցությունների ապաշրջափակումը և վերաբացումը

Ապագայում տարածաշրջանային հարևանների հետ հաղորդակցությունների ապաշրջափակման և վերաբացման հարցերը հանրությունը շրջանակում է օգուտի և վնասի կատեգորիաներով: Եթե Թուրքիայի և Ադրբեջանի շուրջ առավել ընդհանուր դատողությունների մակարդակում տիրապետող են թշնամության, զոհականության և ճակատագրապաշտության առանցքները, ապա սահմանների վերաբացման և հետևապես ժողովրդի սոցիալ-տնտեսական դրության բարելավման հեռանկարը իրական և շոշափելի է դարձնում հարևանության հնարավորությունը, դարձնում է այն գործնականում դրական և նյութական: Թեև հարևանների հետ տնտեսական հարաբերությունների կառուցումն ընդհանուր առմամբ հանրության համար ընդունելի է, բայց անհրաժեշտաբար չի ենթադրում պատմականորեն բեռնավորված հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների մոտալուտ հաշտեցում:

> *«Բարեկամացում միանշանակ չի լինելու, որովհետև էն սերունդը, որը տեսել է ներկայիս քաղաքական իրավիճակը, միանշանակ դեմ է լինելու: Դա շատ պարզ բան է: Բայց պետությունն էս պահին փորձում է Հայաստանը դեպի մի վիճակի տանել, որ էս ամեն ինչի մեջ մի միջանկյալ լուծում լինի: Այսինքն՝ եթե պետությունը փորձում է ճանապարհ բացել կամ հասնել դիվանագիտական հարաբերությունների, ժողովրդի կողմից դա միանշանակ դիտվելու է բացասական, համարվելու է բարեկամացման փորձ»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Շինուհայր, Սյունիքի մարզ**

Այսպիսով՝ ապաշրջափակման և սահմանները բացելու հարցը հանրային դիսկուրսում առավելապես պրագմատիկ ձևակերպում ունի. այն դիտվում է որպես վերահաս պատերազմ[ներ]ը կանխելու, դրանցից խուսափելու եղանակ: Տնտեսական շրջափակումից ազատագրումը, ըստ հանրային դիրքորոշումների, կվերադարձնի

Հայաստանին տարածաշրջանում կապող օղակի երբեմնի դերը՝ հանգեցնելով նաև անվտանգության բարելավմանը: Մի կողմից՝ նվազ զիջումների գնով տարածաշրջանում սահմանների վերաբացումը ձևակերպվում է որպես Հայաստանում կայունություն հաստատելու պայման, մյուս կողմից՝ զիջումները պատմաքաղաքական տարբեր իրադարձությունների համատեքստում դիտվում են իբրև Հայաստանի ներկա խեղճացած դրության հիմնական պատճառ:

> *«Թեպետ մի սանտիմետր հողն էլ շատ մեծ նշանակություն ունի, սահմանագծում են ուզում անցկացնել, մենք հստակ պատկերացնում ենք, որ դրա արդյունքում կորցնելու ենք ինչ-որ բան, բայց գոնե ձեռք ենք բերելու կայունություն, որի հիմքի վրա էլ կարող ենք ինչ-որ բաների հասնել»:*

18-35 տարեկան կին, Մեղրաձոր, Կոտայքի մարզ

Չնայած որոշ բացառությունների՝ ապաշրջափակման ու հասարակությունների հարաբերությունների հաստատման հարցերն ավելի հեշտպատկերացնելի են սահմանամերձ համայնքներում ապրող մարդկանց համար: Սա, իհարկե, չի նշանակում, թե նրանք չունեն անհանգստություններ և տագնապներ՝ ապաշրջափակումից բխող փոփոխություններով և անորոշություններով պայմանավորված: Սակայն սահմանամերձ համայնքներում հարևան ժողովուրդների հետ մարդկանց նախկին համակեցության փորձառությունը, փոխկապված կյանքի պատմությունները հանրություններին ավելի են մոտեցնում, իսկ երբեմնի հարաբերությունների վերականգնումը առավել իրական է դառնում: Ավելին՝ սահմանամերձ համայնքների բնակիչներն իրենց ամենօրյա կենսապայմանների և սոցիալ-տնտեսական անհավասարության ու անարդարության խորքից են ձևակերպում փակված սահմանների բացասական հետևանքները: Ապաշրջափակումը սատարող հանրային դիրքորոշումները մասնավորապես հիմնավորվում են առևտրաշրջանառության աճով, ինչը կարող է բարելավել Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը և նպաստել տարածաշրջանի՝ իրապես քաղաքական սուբյեկտ դառնալուն:

> *«Կոմունիկացիաները որ բացվեն, ամեն ինչ նորմալ կլինի: Թեկուզ առևտրային շարժը, տրանսպորտով շարժը, ուզի-չուզի, ժողովրդին կկապի իրար: Որպեսզի քո մեքենան չանցնի այս ճանապարհով, ու ինչ-որ մի բան պատահի, Հայաստանում չառգրավեն [մեքենան], ուզի-չուզի, մի պետությունը մյուսի հետ պետք է բարեկամանա, թեկուզ տակից, ոնց մենք ենք ասում, ու ամեն ինչ նորմալ կլինի, մենակ կոմունիկացիաները բացվեն, լավ կլինի»:*

36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

> *«Ճանապարհներ պետք է լինեն, որովհետև եթե մենք չբարիշենք, չհամաձայնենք, էս թշնամությունն անվերջ գնա, երեխեքին էլ կկոտորեն, մեր գերիներին էլ էնտեղ կվերացնեն»:*

54-71 տարեկան կին, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ

Միաժամանակ հանրության շրջանում տարածված է նաև հայաստանյան և ղարաբաղյան քաղաքական և ռազմական կլանների մշակած և այլևայլ միջոցներով հասարակության շրջանում ամրապնդած մտայնությունը, համաձայն որի՝ Հայաստանը շրջափակման մեջ չէ, և երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման համար բավարար են Վրաստանի և Իրանի հետ բաց սահմանները: Այսպիսով՝ տարիներ շարունակ Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանների վերաբացմանը հայաստանյան և ղարաբաղյան քաղաքական ու ռազմական վերնախավերը հակադրել են թուրքի նկատմամբ վախը: Թուրքի նկատմամբ վախով է նաև լեգիտիմացվել Ռուսաստանի՝ իբրև Հայաստանի միակ հնարավոր պաշտպանի դերը: Միաժամանակ սահմանների վերաբացումը հանրության այս շերտի կողմից շրջանակվում է իբրև Ադրբեջանի «ցանկություն» կամ պարտադրանք՝ լայն իմաստով ուժի գործադրում պարտվածի վրա:

> *«Մենք շրջափակված չենք, մենք ունենք Իրանի հետ սահման, մենք ունենք Վրաստանի հետ սահման, կարող ենք դա օգտագործել, դա ավելի անվտանգ է ու կոլապսի չի տանում: Դրա համար պետք է լինեն փակ ճանապարհներ Թուրքիայի և*

Ադրբեջանի հետ, պետք է լինեն բաց ճանապարհներ Վրաստանի, Իրանի հետ, ավելի զարգանա այդ ուղղությամբ, որովհետև եթե մենք չունենք առաջարկելու բան, մենք կոլապսի ենք գնում»:

18-35 տարեկան տղամարդ, Գյումրի, Շիրակի մարզ

Սահմանների բացման առնչությամբ հանրային մտահոգությունների մեկ այլ շերտ է սոցիալական արդարության խնդիրը. մարդիկ մտահոգ են, որ ապաշրջափակումը ոչ թե կբարելավի հասարակ ժողովրդի, բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական դրությունը, այլ կհանգեցնի օլիգարխների և բիզնեսմենների առաջխաղացմանը, հարստացմանը, նրանց ձեռքում խոշոր կապիտալի կուտակման ընդարձակ հնարավորություններ կստեղծի:

Հանրային այս բոլոր մտահոգությունները Ղարաբաղյան երկրորդ պատերազմի տրավմայի, սպառնացող պատերազմ[ներ]ի ու էսկալացիաների վտանգի, ուժ և սպառնալիքներ գործադրող Ադրբեջանի քաղաքականությունների հետևանքն են նաև. քաղաքական մեծ գործընթացները տեղի ունեն հանրային անհանգստություններին ու վախերին զուգահեռ՝ ընդհանուր առմամբ թուլացած ու փխրուն վստահության հենարանների հետնախորքում:

«Քանի դեռ մեր սահմաններում չակերտավոր խաղաղությունը չկա, այսինքն՝ մարդկանց մեջ դեռ վախ կա, որ ամեն րոպե նորից կսկսվի [պատերազմ]... Մարդկանց մեջ այդ խաղաղությունը պետք է լինի, որ հանգստանան, բայց ժամանակ առ ժամանակ կրակոցներ կամ ինչ-որ դեպքեր են լինում, և մարդկանց մեջ փոթորկում է [պատերազմի] վախը... Եթե հիմա չկա խաղաղություն, բաց սահմանները ո՞նց կարող են ապահովել: Մենք հնարավորություն ենք տալիս մեր հակառակորդին, որ ավելի հեշտությամբ ներխուժի մեր սահմանները»:

36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Վստահությունն ընդհանուր առմամբ խոցելի է ինչպես ներքաղաքական մակարդակում, այնպես էլ տարածաշրջանային հարևանների առնչությամբ: Ղարաբաղյան երկրորդ պատերազմը

թարմացրել է տարածաշրջանում Ադրբեջանի և Թուրքիայի հանդեպ անվստահությունը և սրել անվտանգային հարցերը: Սակայն զուգահեռաբար ավելի օրհասական է դարձել նաև տարածաշրջանում հարաբերությունների կարգավորման հարցը՝ որպես տնտեսական զարգացման նախապայման:

> *«Բարդ խնդիր է: Անվտանգության երաշխիք ենք ուզում, ես հասկանում եմ, որ երկաթգծի բացելը բոլորին անհանգստացնում է, այնպես չէ, որ ինձ չի անհանգստացնում, այդ անվտանգության երաշխիքը բոլորն էլ ուզում են, բայց նաև դրա մեջ ինչ-որ դրական բան էլ պետք է տեսնենք, ինչ-որ տնտեսական կապերի ակտիվացում վերջապես: Այդ երկաթգիծը գա-գնա, ինչ-որ աշխատատեղեր են, ապրանքի փոխանակություն և այլն, ինչ-որ դրական բան կա սրա մեջ, եթե կարողանանք անվտանգության հարցը ճիշտ կազմակերպել»:*

36-53 տարեկան, կին, Իջևան, Տավուշի մարզ

3.5 Ապագան պատերազմից հետո

Պատերազմները, դրանց հետևանքները և առկախված սպառնալիքները խարխլում են քաղաքական ու սոցիալական կայունության և անվտանգության հիմքերը, որոնց շնորհիվ մեզ որոշակի սոցիալական շրջանակի մաս ենք զգում՝ որպես մեր գոյության, բարգավաճման և կանխատեսելի ապագայի նախապայման (Սոտիևա, 2021): Ավելին՝ տարածաշրջանում հակամարտության ընդհանուր ֆոնը նպաստում է անկանխատեսելիությունն իբրև անկայունություն ըմբռնելու, այլ ոչ թե խաղաղ ապագա կառուցելու կարողություն (Սոտիևեա, 2021): Ներկայի անկայունությունների և անորոշությունների հետնախորքում ապագայի մասին մտածելն ու այն երևակայելը դառնում են բարդ քաղաքական և սոցիալական գործողություն: Կանխատեսելի ապագայի՝ որպես սոցիալական փոփոխությունների հիմքում ընկած դինամիկ ուժի (Mische, 2009) ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հասկանալու, թե ինչպես են այսօր տեղի ունեցող գլոբալ սոցիալ-քաղաքական կառուցվածքների փոփոխությունները պայմանավորված ապագան երևակայելու կարողությամբ:

Հատկապես Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո կանխատեսելի ներկային ու ապագային առնչվող հարցերը հանրային մտահոգությունների տիրույթում են: Թեև ապագայի վերաբերյալ հանրության արձագանքը դրական իղձն է՝ «*ապագան լավ է լինելու*» ձևակերպմամբ, սակայն հարցի խորքային քննությունը ցույց է տալիս, որ «լավ ասենք, որ լավ լինի» մտայնությունը հեշտորեն իր տեղն է զիջում ներկայից բխող մտահոգություններին, որոնք պայմանավորում են դրական ապագայի հանդեպ թերահավատությունը՝ գերակա դարձնելով վերահաս պատերազմից հանրային վախը, անվտանգության և ապահովության շուրջ տագնապները:

Հանրային տարբեր շերտերի ընկալմամբ ապագան որոշարկող նախապայման են խաղաղությունը և ապահով սահմանները, ինչպես նաև «ուժեղ բանակը», որտեղ ոչ թե երիտասարդ ժամկետային զինծառայողներն են, այլ պրոֆեսիոնալ պայմանագրայինները:

Խաղաղության և ապագայի փոխկապվածությունը տղամարդկանց պարագայում շրջանակվում է ընտանիքում լինելու և կայուն

աշխատանքի հետ: Մինչդեռ առկախված պատերազմ[ներ]ի վտանգը, ռազմական գործողություններին մասնակցության փորձառությունը կամ այդպիսի հեռանկարը տղամարդկանց օտարում են հանրային կյանքից, առօրյայից, սոցիալական ակտիվությունից:

> *«Սուբյեկտիվ մի բան եմ ուզում. խաղաղություն լինի, ես կարողանամ իմ ընտանիքի գլխին կանգնեմ, պատերազմի չգնամ, ու իմ ընտանիքը հոգեբանական... [բարդ վիճակում չհայտնվի]»:*
>
> **36-53 տարեկան տղամարդ, Երևան**

Թեև խաղաղությունը, որ ապագան մտածելու նախապայման է, այդքան ցանկալի է, դրա հնարավորությունը հաճախ է կասկածի տակ առնվում, ինչպես տեսանք վերլուծության՝ խաղաղության դրությանն առնչվող հատվածում:

Ապագան մտածելն է՛լ ավելի է դժվարանում, երբ քննարկման առանցքում են հայտնվում սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք հիմնարար կշիռ ունեն ներկա հանրային մտահոգությունների ընդգրկույթում, սահմանում են հանրային-քաղաքական կյանքի այլ բնագավառների և ասպեկտների շուրջ դատողություններ անելու շրջանակը: Այս առումով ապագան սահմանադրող հասարակության սոցիալ-տնտեսական դրությունը գերակա է դառնում անվտանգային հարցերի կամ մտահոգությունների նկատմամբ:

> *«Չունենք, լավի սպասելիք չունենք: Եթե օր օրի գազը թանկանում է, հոսանքը թանկանում է, վառելիքը թանկանում է, ալյուրը, ձեթը, շաքարավազը, մյուս պարագաները թանկանում են, ժողովուրդը անաշխատանք է, աշխատողին էլ քիչ են վճարում, կրճատում են [աշխատանքից]... ո՞նց լավ կլինի [ապագան], դուք լավ բան պատկերացնո՞ւմ եք»:*
>
> **54-71 տարեկան տղամարդ, Արագած, Արագածոտնի մարզ**

Անորոշ ապագան ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ գործողությունների պլանավորման անիրատեսականու-

թյունն է: Եթե այդ անիրատեսականությունը նախկինում բնորոշ էր հիմնականում սահմանամերձ համայնքներում և Ղարաբաղում ապրող հանրություններին (Աբրահամյան, Խալաթյան, Մանուսյան, 2022), ապա այժմ անհանգստացնում է նաև «անվտանգ կենտրոնին»՝ մայրաքաղաքին և դրան մոտ համայնքներին:

> *«Էսօրվա օրով ենք ապրում ամեն մեկս: Ոչ ոք իր ապագայի մասին պատկերացում չունի: Ապրում ենք էսօրվա օրով, ոչ մի բան չենք պլանավորում»:*
>
> **36-53 տարեկան կին, Ապարան, Արագածոտնի մարզ**

Խաղաղ ապագայի անհայտությունը կապվում է ոչ միայն ներկայի խնդիրների, այլև անցյալի հետ շարունակական հաշվեհարդարներ տեսնող գերակա քաղաքական դիսկուրսների հետ: Ներքաղաքական բևեռացված դրությունը, որ քննարկել ենք գրքի առաջին հատվածում, հանրային ընկալումներում մեծապես կապվում է նաև ապագայի անորոշության հետ:

> *«Ոչ ոք ապագայից չի խոսում, բոլորը կռվում են անցյալից, ասում են՝ դո՛ւ ես դավաճան եղել, ու մենակ էդ կռիվն է: Ոչ մեկը ոչ մի քայլ չի անում դեպի ապագա, որ ինչ-որ բան փոխի, ուղղակի իրենք անընդհատ վիճում են, թե ով է դավաճան եղել, ու ժողովրդին խառնում են իրար»:*
>
> **18-35 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ**

Միաժամանակ, եթե Հայաստանի՝ իբրև պետության ապագան ըմբռնվում է անորոշության և անկայունության նրբերանգներով, ապա համայնքային մակարդակում ապագան առավել շոշափելի, երբեմն՝ հուսադրող է թվում: Սրան նպաստում են առանձին համայնքներում վերջին տարիների բարեփոխումների փորձառությունը՝ ենթակառուցվածների բարելավումը, հանրային ինստիտուտների որոշակի կայացումը և հասանելիության մեծացումը, երիտասարդների՝ համայնքային կյանքում ներգրավվելու եղանակների բազմազանությունը և այլն:

> *«Համայնքի ապագան ավելի լավ ենք տեսնում, քան մեր պետության: Կոնկրետ մեր համայնքում էնպիսի երիտասարդություն [կա], նենց հզոր գաղափարով մարդկանց եմ ես ճանաչում, որ իրանց վրա ավելի շատ եմ վստահ, քան մեր ղեկավարության կամ ընդհանրապես էն մարդկանց վրա, որոնք կառավարում են էս երկիրը»:*
>
> **18-35 տարեկան տղամարդ, Շինուհայր, Սյունիքի մարզ**

Թեև հանրային տարբեր խմբեր առավել հեշտությամբ են ձևակերպում իրենց համայնքների ապագան, պատերազմից հետո սահմանամերձ դարձած համայնքների բնակիչները բախվել են նախկինում իրենց կենսափորձին ոչ բնորոշ խնդիրների՝ սրված անվտանգային և սոցիալ-տնտեսական բնույթի:

Արտաքին գործոնների՝ պատերազմի սպառնալիքի, անվտանգային հարցերի և քաղաքական անկայունության չեզոքացման պայմաններում մարդիկ երբեմն կարողանում են, զարգացման հնարավորություններն ու բարեփոխումները որպես հենման կետեր ընդունելով, պատկերացնել համայնքային և անհատական մակարդակում սոցիալ-տնտեսական կայունություն հաստատելու հնարավորությունը:

Թեև առանձին համայնքի ապագան տեղի բնակիչների համար առավել շոշափելի է, այն անպայմանորեն փոխկապված է Հայաստանի ապագայի հետ. ընդհանուր առմամբ կայունությունը և ապագայի կառուցման քաղաքական տեսլականը դրականորեն կազդեն նաև համայնքների կյանքի վրա: Միաժամանակ, եթե համայնքային մակարդակում մարդիկ անդրադառնում են փոփոխության սուբյեկտ լինելու սեփական հնարավորությանը, իսկ պետությունն այս համատեքստում օժանդակ պայմաններ ստեղծողն է, ապա Հայաստանի այս կամ այն ապագայի կառուցման հարցը հանրային ըմբռնման մեջ մեծապես կախված է արտաքին հանգամանքներից, ուժերից, պետություններից:

> *«[Կարևոր է] համայնքի ու ժողովրդի լավ լինելը... Մենք հենց սկզբից էլ ասեցինք՝ մեր ճանապարհները լավ սարքեն, մեզ մի քիչ հետևեն, մենք չենք ուզում, որ մեզ փող տան, գնանք պառ-*

կենք, ապրենք: Ոչ մեկը փող չի ուզում ոչ մեկից: Ուղղակի մեր ունեցած մթերքի մթերմանը որ օգնեն, մեր ճանապարհները սարքեն, տենց թեթև բաներով որ մեզ օգնեն, մենք լիարժեք գոհ կլինենք»:

54-71 տարեկան տղամարդ, Պառավաքար, Տավուշի մարզ

Այսպիսով՝ համայնքային սոցիալական կապիտալը և կապերը, որ արտահայտվում են նախ և առաջ միմյանց նկատմամբ վստահությամբ և որոշակի ներհամայնքային համերաշխությամբ, հնարավոր են դարձնում համայնքի ապագան և դրանում գործուն մասնակցություն ունենալու հանրության պատկերացումը: Ի հակադրություն դրան՝ Հայաստանի քաղաքական սուբյեկտության շուրջ տիրապետող հանրային թերահավատությունը, ինչպես նաև բազմաբարդ ժամանակներում սոցիալական, քաղաքական, տարածաշրջանային փոփոխություններ բերելու իշխանությունների և նրանց կարողությունների նկատմամբ անվստահությունը Հայաստանի ապագայի առումով առաջ են բերում տագնապներ և վախեր:

Ինչպես քննարկել ենք վերլուծության նախորդ բաժիններում, ներքաղաքական լարվածության թոթափումն ու քաղաքական տարբեր ուժեր և շահեր ներկայացնող կողմերի՝ հանուն Հայաստանի համախմբումը պատկերվում են որպես խաղաղ ապագա ունենալու ցանկալի ու անհրաժեշտ նախապայման: Թե՛ սահմանամերձ համայնքներում, թե՛ Երևանին մոտ գտնվող համայնքներում կա հանրային ընկալում, որ ապագային և անվտանգային հարցերին առնչվող խնդիրները պայմանավորված են ներքաղաքական անհամատեղելի հետաքրքրությունների բախումներով, որոնց հետևանքով ստորադասվում է հանրային և պետական շահը, լուսանցք են մղվում հատկապես սահմանամերձ համայնքներում ապրող մարդկանց դրությունը, փորձառությունը և համայնքային խնդիրները: Հանրության շրջանում տարածված մտայնություն է Հայաստանի կայուն ապագայի փոխկապակցումը ներքաղաքական բևեռվածության հաղթահարմանը:

«Հայաստանը ապագա չունի: Կործանման եզրին է Հայաստանը: Եթե էսօր ամեն մեկս կանգնած մի կողմի վրա ձգենք,

> *Հայաստանը կկորցնենք: Հիմա Երևանում էդ վիճակն է. ամենքը մի կողմի վրա ձգում են. մեկն ասում է՝ առանց Նիկոլ Հայաստան, Նիկոլ, գնա՛: Մինչև Նիկոլն էլ էր էդ [վիճակը], նա էլ [Նիկոլը] է նույնը, դու էլ գաս՝ էլի նույնը կլինի»:*
>
> **54-71 տարեկան տղամարդ, Պառավաքար, Տավուշի մարզ**

Ինչպես այլ խնդիրների (օրինակ՝ Հայաստանի և հասարակական վիճակի) քննարկման պարագայում, ապագան ևս մեծ մասամբ պայմանավորվում է «հայկական մենթալիտետով» (*«եթե մենթալիտետի փոփոխություն չեղավ, լինելու է այն, ինչ ունենք»*), դրանից բխող էսենցիալիստական բնութագրիչներով, ինչպես նաև կրթության և գիտության բարելավման մասին տարածված դատողություններով:

> *«Հայաստանի զարգացման միակ ճանապարհը մարդկային կապիտալի, գիտության, ռազմական արդյունաբերության վրա ներդրում անելն է: Դա ուղղակի բարի կամքի ցանկություն չի, օբյեկտիվ իրականություն է: Մենք ուրիշ ռեսուրսներ չունենք՝ նավթ, գազ, բնական պաշարներ, ինչը մեր զարգացումը թույլ կտար: Մեր միակ ուղին ճեղքելով առաջ գնալն ա, մեր ուղեղները զարգացնելը, օգտագործելը, կիրառելը ու զարգացում ապահովելը»:*
>
> **36-53 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**

Անորոշ ապագային առերեսվելու մեկ այլ ռազմավարություն էլ դրա մասին չմտորելն է և առօրյա կյանքի տարվածությամբ՝ ապագայի հետ կապված մտավախությունները շրջանցելը:

Վերլուծության նախորդ բաժիններում մենք տեսանք, որ սոցիալ-տնտեսական խնդիրները, անվտանգության և վերահաս պատերազմի շուրջ հանրային մտահոգությունները, բանակում ծառայելու վախը հաճախ անմիջականորեն կապվում են արտագաղթի՝ իբրև այդ խնդիրներին առերեսվելու, դրանք «լուծելու» ռազմավարության հետ: Առհասարակ արտագաղթն իբրև քաղաքական սոցիալական լուռ բողոքի դրսևորում բավական տարածված է մեզանում անկա-

խության տարիներից սկսած: Միաժամանակ հեղափոխությունն իբրև շրջադարձային քաղաքական իրադարձություն, թվում է, ներուժ ուներ ներգաղթը դարձնելու ակտիվ քաղաքական աջակցության գործողություն: Հեղափոխությունից հետո մեդիայում բազմաթիվ էին հայրենադարձ ընտանիքների մասին պատմությունները: Հայաստան վերադառնալու պատճառների շարքում մարդիկ թվարկում էին նոր թափ ստացող տնտեսության զարգացմանը նպաստելը, երեխաների համար ապագայի լավ միջավայր ապահովելը և այլն[70]: Այդուհանդերձ, պատերազմը կրկին գործի դրեց արտագաղթի՝ իբրև ներկայի և ապագայի անորոշությունները հաղթահարելու ռազմավարության հանրային փորձառությունը՝ միաժամանակ «փակելով» հայրենանվեր մղումներով Հայաստան վերադառնալու ոգևորիչ թվացող նարատիվը:

> *«Հայաստանի ապագան որ լավ լինի, մեր ջահել տղաները չեն գնա դուրս՝ Ռուսաստան՝ արտերկիր, աշխատանքի ու չվերադառնան: Իմ երկու տղան էլ դրսում են, Հայաստանի անունը չեն էլ ուզում տալ: Այստեղ աշխատանք էլ չկա, երեխաները գան, պատերի տակ պարապ ման գան, ուրիշ բաների [քայլերի] դիմեն»:*

54-71 տարեկան կին, Երազգավորս, Շիրակի մարզ

> *«Մեր երկիրը պետք է լավ երկիր դառնա, ծաղկի, զարգանա, բարգավաճի թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես, որ մարդը վստահ լինի: Պահը գալիս է, ասում ենք՝ մեր երկրից լավ տեղ չկա: Թող շատ ավելի լավը լինի, որ մարդիկ դուրս գնալու մասին չմտածեն»:*

54-71 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Կարևոր է նկատել, որ Հայաստանում մնալու կամ Հայաստանը լքելու հարցերը հիմնականում բարձրաձայնում են կա՛մ տղամարդիկ, կա՛մ կանայք՝ տղամարդկանց անունից կամ տղամարդկանց

70. Կաղզվանցյան, Ս. (2018, հոկտեմբեր 30). Հայրենադարձված գյումրեցի. հեղափոխությունը մեզ հետ բերեց. *azatutyun.am.* https://www.azatutyun.am/a/29573272.html

տեսանկյունից՝ գերակա տեղ տալով ներկայում և ապագայում տղամարդկանց խնդիրներին և նրանց բարօրությանը:

Պատերազմից հետո հանրային պատկերացումները ապագայի վերաբերյալ «*մշուշոտ և անորոշ*» են, իսկ «*Հայաստանի գոյությունը՝ վտանգված*»: Կորցնելով քաղաքական փոփոխության սուբյեկտ լինելու զգացումը ինչպես հասարակական, այնպես էլ պետության մակարդակներում՝ մարդիկ ապագայի այս կամ այն հեռանկարը հակված են կապելու արտաքին ուժերի՝ աշխարհաքաղաքական իմաստով մեծ դերակատարների կամքի և ցանկության հետ՝ նվազ տեղ հատկացնելով Հայաստանին՝ իբրև սեփական ապագան որոշարկող սուբյեկտի: Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա հանրային ընկալումներում անորոշության հերթական շերտն է ավելացրել տարածաշրջանային հարաբերությունների, հատկապես Հայաստանի ապագայի պատկերացման գործընթացում:

Նկատում ենք նաև Հայաստանի քաղաքական ապագան Ղարաբաղի ապագայով պայմանավորելու հանրային մտայնությունը, որ բխում է 1988 թվականի Ղարաբաղյան շարժումից և հետագայում անկախ Հայաստանի ազգային և պետական ինքնությունները Ղարաբաղի և առաջին պատերազմի հաղթանակի առանցքի շուրջը կառուցելու քաղաքականություններից: Միաժամանակ փոխկախվածության այս հանրային-քաղաքական ըմբռնման մեջ քիչ տեղ է հատկացվում Հայաստանին. Ղարաբաղի ապագայի «պատասխանատուի» դերում Ռուսաստանն է: Ղարաբաղի «*ռուսահայկականացումը*» համարվում է անվտանգության ապահովման նախապայման՝ երբեմն արտահայտվելով «*Հայաստանի փրկությունը Ռուսաստանն է*» ձևակերպմամբ:

> «*Փրկությունը մեկն է. ռուսի դրոշը խփի՛ր, պետական լեզու ընդունի՛ր ռուսերենը, փողը փոխի՛ր ու մտի՛ր իր կազմի մեջ ու վերջ: Այդ ժամանակ մենք գոնե կլինենք պաշտպանված: Եթե չէ, ամբողջ կյանքում մենք լինելու ենք պատերազմող երկիր, զոհեր ենք տալու, ու մեր սգավոր մայրերի թիվը շատանալու է: Վե՛րջ*»:

36-53 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Հանրության տարբեր շերտեր տեղայնացնում են Հայաստանի հանրային-քաղաքական ապագան աշխարհում ռազմական ընդհարումների ծավալների, աշխարհաքաղաքական անորոշության ու խաղաղության բացակայության համատեքստում: Այս տեսանկյունից լուսանցք են մղվում ապագան մտածելու և այն ձևավորելու հասարակական ուժի և կարողության հնարավորությունները: Միաժամանակ նկատում ենք հանրային խուճապահար տրամադրություններ՝ պայմանավորված Հայաստանի *«կործանման»* վտանգի զգացումով: Այդ վտանգը շրջանակում է մի հանրային ըմբռնում, որ Հայաստանն անելանելիորեն կախյալ դրության մեջ է *«մեծ ու հզոր պետություններից»*, իսկ նժարի մյուս կողմում առհասարակ Հայաստանի՝ իբրև պետության գոյության դադարումն է:

1. Հայաստանը և աշխարհը



18-35 տարեկան կին,
Երևան

Ամփոփման փոխարեն.

անդրադառնալով
փոփոխության սուբյեկտին

Այստեղ գուցե տեղին կլիներ, որ ամփոփեինք մեր ծավալուն ուսումնասիրությունը և առավել դյուրամարս կերպով շարադրեինք հետազոտական բացահայտումները, սակայն հետաքրքրասեր ընթերցողին առաջարկում ենք կանգ առնել գրքի տարբեր բաժիններում կարմիր թելի նման անցնող մի հարցի վրա, որ կարող ենք ձևակերպել իբրև հետպատերազմյան համատեքստում փոփոխության սուբյեկտի կամ գործորդի փնտրտուք:

Հանրային մտահոգությունների և խնդիրների բարձրաձայնումից և դրանց արձանագրումից զատ կարևոր է քննել, թե ինչպես է հանրությունը տեղայնացնում խնդիրների հաղթահարմանն ուղղված սեփական կարողությունը: Տեղին է [ինքն]անդրադառնալ հասարակության սուբյեկտությանը. կա՞ արդյոք ըմբռնում, որ հասարակությունն իբրև հավաքական միավոր կարող է ազդել իրերի ներկա դրության վրա, լինել փոփոխության սուբյեկտ:

Նախ և առաջ նկատում ենք, որ հանրության շրջանում ընդհանուր առմամբ գերակա է թերահավատությունը ինչպես սեփական, այնպես էլ իշխանությունների ներուժի նկատմամբ՝ հասցեագրելու և հաղթահարելու հայաստանյան խնդիրները:

> *«Գյուղացուն ու աղքատին ո՞վ ա լսում, կարա՞ս ասես, գյուղացուն ու աղքատին, այսինքն՝ բանվորին և հողագործին, ո՞վ ա լսում՝ ոչ մեկը: Մենք կարող ա մեր շրջապատի մեջ նստենք, ասենք, խոսենք, բայց մեր ձայնը՝ գյուղացու ձայնը... Սովետի ժամանակով էլ, մեկ ա, չեն լսել: Ինչքան էլ ուզում ես, բարձր խոսի»:*
>
> **54-71 տարեկան տղամարդ, Արագած, Արագածոտնի մարզ**

Ի հակադրություն 2018 թ. հեղափոխությանը, որի շնորհիվ հասարակությունը վերափորձառել էր սոցիալ-քաղաքական փոփոխության սուբյեկտ լինելը՝ մենք նկատում ենք, որ Ղարաբաղյան երկրորդ պատերազմի պարտությունը, այդ պարտության առասպելականացումը, ինչպես նաև 2020 թ. նոյեմբերի 9-ի հրադադարի հայտարարությանը հետևած շարունակական սահմանային լարումները, հանրային ապատիան էապես նվազեցրել են հանրության՝ փոփոխության և որոշում կայացնող սուբյեկտի զգացումը՝ կրկին առաջ բերելով «փոքր մարդու» նարատիվը:

Առհասարակ առկախված և իրական պատերազմների մեջ ապրող հասարակություններում, որոնց բնորոշ է նաև բազմաչափ աղքատությունը, դրա նշանակալի, բայց անտեսված տարրերից է նաև մարդկանց՝ սեփական ձայնի անկարևորության զգացումը, այն, որ քաղաքացին չի կարող ազդել հասարակական և քաղաքական գործընթացների վրա, որոնք ուղիղ և անմիջական ազդեցություն ունեն իր կյանքի վրա (Աբրահամյան, Խալաթյան, Մանուսյան, 2022):

Անզորության զգացումը ուղղակիորեն կապվում է քաղաքականությունից օտարման հետ: Սոցիալապես անապահով պայմաններում ապրող և «օրվա հացի» մասին մտածող մարդիկ հաճախ ունեն սեփական ձայնի անկարևորության զգացում: Այստեղ կարող ենք խոսել նաև սոցիալական հոգնածության և չմասնակցող հանրության մասին, որի համար սոցիալական վարքը նեղացել է՝ հանգեցվելով սեփական հոգսերին և դրանց միջոցով հանրային-քաղաքական կյանքում չներգրավվելու ռացիոնալացմանը (Մանուսյան, 2016):

Այդուհանդերձ, նկատում ենք, որ հանրության շրջանում կա որոշակի ինքնաանդրադարձ և քննադատության փորձ՝ հասկանալու փոքրության, անկարևորության և անկարողության սենտիմենտների առաջացման արմատները և պատճառները: Ինքնանդրադարձի փորձերը, սակայն, մարդկանց հաճախ նետում են էսենցիալիզմի գիրկը՝ ձևակերպելով խնդիրն իբրև կենսաբանական, գենից ու մենթալիտետից եկող անփոփոխ մի բան:

> *«Եթե պատմությունը նայում ենք... Էն ժամանակ էլ, չէ՞, ռուսներն եկան պատերազմի վերջին փուլի ժամանակ, մեզ փրկեցին: Ու ոնց որ ժառանգական՝ մեր գեներում լինի, որ մեզ անպայման ինչ-որ մեկը պետք ա օգնի, մենք մենակ ոչնչի չենք կարող հասնել»:*

18-35 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Ազգային մենթալիտետի» վերաբերյալ սոցիալական խոսակցությունները նոր չէ, որ մեր առօրեականության նշանակալի մասն են: Սովորաբար որևէ հանրային բան իմաստավորելու հա-

մար կոնցեպտն ակնթարթորեն պատրաստ է կիրառման. ««Ազգային մենթալիտետի» կենցաղային տեսություններն այստեղ հատուկ տեղ են գրավում՝ ավելորդ դարձնելով բնույթով անհատական կամ հասարակական պատճառներ մտածելը» (Մանուսյան, 2016)։ Այստեղ, իհարկե, կավելացնենք նաև քաղաքական պատճառներ մտածելու հարցը, որի հետ սերտորեն կապվում է պատասխանատվության կոնցեպտը։ Վերջինս երևան է գալիս նաև մեր հետազոտության շրջանակում։

Պատասխանատվության կոնցեպտն ունի տարբեր՝ փիլիսոփայական, պատմական, մշակութային ու քաղաքական շերտեր։ Անհատական պատասխանատվությունը ժամանակակից աշխարհում քննարկվում է բարեկեցության և աղքատության հարցերի հետ փոխառնչության մեջ։ Լիբերալ և նեոլիբերալ քաղաքականությունները ձևակերպում են անհատի՝ ինքն իր համար պատասխանատու լինելու գաղափարաբանությունը՝ լուսանցք մղելով քաղաքական համակարգերի պատասխանատվությունը, համայնքային կամ հանրային շահի զգացումը։ Թեև անհատական պատասխանատվությունը կարևոր է սուբյեկտության կամ գործորդության հարցերը քննելիս, սակայն դրա գերակայությունը հավաքական կամ համակարգային պատասխանատվության նկատմամբ խարխլում է սոցիալական կապերը և փոխվստահության հիմքերը։ Հարցն այն չէ, որ անհատական պատասխանատվությունն իմաստազուրկ է, բայց պատասխանատվության այն տեսակը, որին մեզ քաջալերում են և շատ իմաստներով նաև հարկադրում, համակարգային խնդիրները անհատների և անհատական ջանքի վրա դնել է նշանակում։ Ավելին՝ երբեմն պետության դերն այնքան է նվազեցվում, որ առաջ է գալիս մեղավորության հարցը. եթե մեկը պատասխանատու է իր վիճակի, իր կենսապայմանների, իր երջանկության համար, ապա նա մեղավոր է իր իսկ աղքատության համար, կասեն ժամանակակից նեոլիբերալները։

Անհատական պատասխանատվության մանթրան, որ այդքան հաճախ էր հնչում նաև մեր հետազոտության քննարկումների ժամանակ, սահմանափակում է հետպատերազմյան անկայուն և անորոշ համատեքստում հավաքական գործողության հնարավորությունը։ Այն իրականում նվազեցնում է նաև ընդհանուր փոփոխությանը միտված անհատական գործողության ներուժը. *«յուրա-*

քանչյուրն իր տեղում իր գործը պիտի անի» ձևակերպումը փոփոխությանը միտված հավաքական գործողությունից ձեռնպահ մնալու նորմատիվությունն է արձանագրում, ինչպես նաև խնդիրներին հարմարվելու, լռելու, դրանք չբարձրաձայնելու սոցիալական վարքը:

Պատերազմը խորացրել է «փոքրության» մասին մարդկանց պատկերացումները: Սրված անզորության, անկարողության, երբեմն նաև լսված չլինելու ապրումներն արտահայտվում են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակներում: Ոչ միայն քաղաքացիներն են հիմնականում ըմբռնվում իբրև քաղաքականապես անզոր, այլև իշխանությունները և Հայաստանը՝ որպես պետություն, որպես քաղաքական սուբյեկտ:

Միաժամանակ նկատում ենք, որ երկրի և հասարակության սոցիալ-տնտեսական դրության բարելավումը, ներքին խաղաղության և համերաշխության, սոցիալական արդարության և տարածաշրջանում խաղաղության հաստատումը, որ հանրային տարբեր շերտերի հիմնարար ցանկությունների տիրույթում են, էապես փոխառնչված են քաղաքական «փոքրության» հաղթահարման հնարավորության հետ:

Ընդհանուր առմամբ հանրային լայն շերտերի շրջանում խաղաղությունը ձևակերպվում է իբրև բարդ բան *(«խաղաղությունը զոռ բան ա»)*, որ հասանելի չէ բոլոր ժողովուրդներին և պետություններին: Լայն իմաստով կա այս տարածաշրջանում լինելու և «նման հարևաններով» շրջապատված լինելու անարդարության, երբեմն էլ՝ վիրավորանքի և զայրույթի զգացումը, որոնք սրված են Ղարաբաղյան երկրորդ պատերազմի պարտության քաղաքական համատեքստում: Պատերազմից գրեթե երեք տարի անց հանրության շրջանում տիրապետող են պատերազմի վախը և դրա հավանականությունն ամեն կերպ բացառելու իղձը: Այդ ցանկությունը նյութականանում է, մի կողմից, պատերազմի պատրաստվելու, բանակը հզորացնելու, զենք ու զինամթերք առնելու եռանդուն դիսկուրսում, մյուս կողմից՝ պատերազմից ամեն կերպ խուսափելու, հարևանների հետ դիվանագիտական ջանքերով խաղաղություն հաստատելու քննարկումներում:

Գրականություն

Աբրահամյան, Ծ., Խալաթյան, Մ., Մանուսյան, Ա. (խմբ.). (2022). *Պատերազմը, ապագայի անորոշությունը և խաղաղ համակեցությունը*. «Սոցիոսկոպ» ՀԿ. Երևան:

Անդրեասյան, Ժ. (2019). Սոցիալական համերաշխության օրակարգը. *Հայաստան 2018. Իրողություններ և հեռանկարներ: Ինքնություն* 3(1). «Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն»:

Բուրդիո, Պ. (2019). *Հասարակական կարծիք գոյություն չունի*. (ֆրանսերենից թրգմ.՝ Նազենի Ղարիբյանի). «Սոցիոսկոպ» ՀԿ:

Թադևոսյան, Ա. (2018). *Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի» դիտարկման հիման վրա*. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

Ժամակոչյան, Ա. (2016). Հայաստանը «ազգային միասնության» թակարդում. *Փոփոխության որոնումներ*. «Սոցիոսկոպ» ՀԿ. Երևան:

Ժամակոչյան, Ա., Մարգարյան, Ն. (2021). Արիմիությունների գործունակության հարցը Գյումրու «Սասստեքսի» բանվորուհիների բողոքի օրինակով. *Տնտեսական հրատապ հարցեր. հետազոտությունների ժողովածու*. «Սև Բիբար», «Քաղաքական դիսկուրս», «Սոցիոսկոպ» ՀԿ:

Իգլթոն, թ. (2020). Ներածություն. *Գաղափարաբանություն*. (անգլերենից թրգմ.՝ Սոնա Մանուսյանի). «Սոցիոսկոպ» ՀԿ:

Լիպարիտեան, Ժ. (2022). *Հայաստանի երրորդ հանրապետութիւն, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն. Նիւթեր պատմութեան համար*. Անտարես:

Խալաթյան, Մ., Ժամակոչյան, Ա. (խմբ.). (2019, հունիս 18). *Իրավունքի սահման(ում)ները սահմանին մոտ*.socioscope.am. վերցվել է՝ https://socioscope.am/archives/1673:

Խալաթյան, Մ., Մանուսյան, Ա. (խմբ.). (2021). *Հետահայաց. ձայներ պատերազմի և խաղաղության մասին*. «Սոցիոսկոպ» ՀԿ. Երևան:

Խալաթյան, Մ., Մանուսյան, Ա., Մարգարյան, Ն. (2023, փետրվար 13). *Պատերազմը, խաղաղությունը և ապագան մեդիայում. քննադատական դիսկուրս վերլուծության փորձ*. socioscope.am. վերցվել է՝ https://socioscope.am/archives/3655:

Խաչատուրյան, Վ. (2020). Ազատության ճանապարհը. *Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական բարեփոխումները*. Անտարես:

Խաչատրյան, Ծ. (2021). Համայնքների խոշորացում. կենտրոնացո՞ւմ, թե՞ ապակենտրոնացում. *Տնտեսական հրատապ հարցեր. հետազոտությունների ժողովածու*. «Սև Բիբար», «Քաղաքական դիսկուրս», «Սոցիոսկոպ» ՀԿ:

Խառատյան, Լ., Հակոբյան, Ա. (խմբ.). (2019). *Դրվագներ Հայաստանի խորհրդային անցյալից. հայ-ադրբեջանական համակեցության հետքերով*. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

Հարվի, Դ. (2017). Կուտակում ունեզրկման միջոցով (անգլերենից թրգմ.՝ Գայանե Մելքոմ-Մելքոմյանի). *Քաղաքատնտեսություն*. «Ֆոկուս» արվեստի ՀԿ:

ՀՈԿԿ-Հայաստան. (2023). *Համայնքային բազմաչափ աղքատությունը Հայաստանում*. Երևան:

Մանուկյան, Ա. (2020). Բարեփոխումների իրավական և քաղաքական հիմքերը. *Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական բարեփոխումները*. Անտարես:

Մանուկյան, Ն. (2020, փետրվար 10). *Որքա՞ն գրագետ է Հայաստանը*. evnreport.com. վերցվել է՝ https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/how-literate-is-armenia-2/:

Մանուսյան, Ս. (2016). Բողոքը և դրա ճնշումը միկրո մակարդակում. *Փոփոխության որոնումներ*. «Սոցիոսկոպ» ՀԿ. Երևան:

Մարգարյան, Ն. (2022). *Ինչո՞ւ է մարդու իրավունքների օրակարգն այդքան գրավիչ աջական խմբերի համար.* socioscope.am. վերցվել է՝ https://socioscope.am/archives/3308:

Սոտիևա, Լ. (2021). *Հավաքական հոգեբանական վերքեր. կոլեկտիվ տրավման և ղարաբաղյան հակամարտությունը.* Independent Peace Associates.

Arendt, H. (1972). Lying in Politics. *Crisis in the Republic.* A Harvest Book. Harcourt Brace and Co.

Bourdieu, P. (2000). *Pascalian Meditations.* Stanford, Stanford University Press.

Calhoun, C. (2009). Social Science for Public Knowledge. *Academics as Public Intellectuals.* London, Palgrave.

Emirbayer, M., Mische, A. (1998). *What is Agency?.* American Journal of Sociology 103(4), 962-1023.

Fraser, N. (2019). *The Old is Dying and the New Cannot Be Born.* Verso.

Giddens, A. (1979). *Central Problems in Social Theory.* London. Macmillan.

Hamm, P., King, L. P., & Stuckler, D. (2012*). Mass Privatization, State Capacity, and Economic Growth in Post-Communist Countries.* American Sociological Review, 77(2), 295–324.

Hanushek, E. A., Woessmann, L. (2015). *Universal Basic Skills: What Countries Stand to Gain*. OECD Publishing, Paris.

Makhotina, E. (2018,. January 15). *Nostalgia, Pride and Shame: The Many Faces of Stalin in Contemporary Russia.* In: Cultures of History Forum. DOI: 10.25626/79.

Marangos, J. (2013). *The Shock Therapy Process of Transition.* In: Consistency and Viability of Islamic Economic Systems and the Transition Process. Palgrave Macmillan, New York.

Mische, A. (2009). Projects and Possibilities: Researching Futures in Action. *Sociological Forum*, Vol. 24, No. 3.

Mouffe, Ch. (2005). *On the Political: Thinking in Action*. Routledge. London, New York.

Piketty, T., Goldhammer, A. (2014). *Capital in the Twenty-First Century.* The Belknap Press of Harvard University Press.

Piketty, T. (2022). *Brief History of Equality*. The Belknap Press of Harvard University Press.

Sanchini, V., Pongiglione, F., Sala, R. (2019). On the Notion of Political Agency. *Phenomenology and Mind (16)*, 10-15.

Scheidel, W. (2017). *The Great Leveler: Violence and the History of Inequality from the Stone Age to the Twenty-First Century.* Princeton University Press. ISBN 978-0691165028.

Stiglitz, J. E. (2019). *The End of Neoliberalism and the Rebirth of History*. Project-syndicate.org.

Ծանոթագրություններ

1 Փորձագիտական հարցազրույցներն անանուն են: Որոշ մասնագետների՝ Հայաստանում չլինելու բերումով հարցազրույցներն արել ենք առցանց: Փորձագետներից վեցը կանայք էին, ութը՝ տղամարդիկ:

2 Վայոց ձորի Ջերմուկ քաղաքում ամառային հանգստի շրջանից հետո նախատեսված ֆոկուսխմբային քննարկումն իրականացնել չկարողացանք արդեն Ադրբեջանի՝ 2022 թ. սեպտեմբերի 13-14-ին հարձակման պատճառով: Հետազոտական ֆորմալությունը պահելու տեսանկյունից, իհարկե, հնարավոր էր հետագայում անցկացնել ֆոկուսխմբային քննարկումը: Սակայն փոխակերպված համատեքստում մեր հետազոտության պատշաճությունը հարցադրելով՝ նախընտրեցինք հրաժարվել Ջերմուկում քննարկումն անելու գաղափարից:

3 2022 թ. մայիսի 9-ին մի խումբ մարդիկ նախաձեռնեցին և շրջանառեցին «Խաղաղություն առանց բայց-երի» մանիֆեստը: Ավելի քան 60 մարդ ստորագրեց մանիֆեստը, որը մեծ թափով տարածվեց համացանցում՝ արժանանալով ինչպես դրական արձագանքների, այնպես էլ քննադատության և հարձակման, որոնց առանցքում պնդումն էր, թե մանիֆեստի համահեղինակները և այն ստորագրողները ստորադասում են Ղարաբաղի բնակչության անվտանգությունը խաղաղությանը: Մանիֆեստը տե՛ս՝ https://epress.am/en/2022/05/09/peace-with-no-but-s.html:

4 Բյուջեի 2023 թ. խորհրդարանական քննարկումների ժամանակ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը հայտարարեց, որ 2023 թ. պաշտպանության ոլորտի ծախսերը կազմելու են 506 միլիարդ դրամ, ինչը 35 տոկոսով գերազանցում է 2022 թ. ճշտված բյուջեով սահմանված ծախսային ցուցանիշները: Թեև սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը ևս աճելու են 2023 թ., սակայն այդ աճն ընդամենը 10 տոկոս է 2022 թ. համեմատ: Տե՛ս «Ազատություն» ռադիոկայան. (2022, հոկտեմբեր 31). Երբևէ եղած ամենամեծ բյուջեն. 2023-ին այն կկազմի ավելի քան 6.4 միլիարդ դոլար. *azatutyun.am*. վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/32108840.html:

5 Հետազոտությունն իրականացվել է 2021 թ-ին Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի ութ համայնքներում՝ 1) Իջևան, 2) Տավուշի գյուղական համայնքներ, 3) Տավուշի քաղաքային համայնքներ (բացառությամբ Իջևանի), 4) Շիրակի գյուղական համայնքներ, 5) Գյումրի, 6) Լոռու գյուղական համայնքներ, 7) Սպիտակ և 8) Վանաձոր: Նախկինում իրականացված հետազոտությունների մեծ մասն աղքատությունը չափել է եկամտով: Սակայն բազմաչափ աղքատության ինդեքսի այս հետազոտության միջոցով ՀՌԿԿ-Հայաստանը հաշվի է առել աղքատության մի շարք այլ դրսևորումների չափումներ նույնպես, ներառյալ բնակարանային պայմաններ, առողջություն և կրթություն, հիմնական կարիքներ, ինչպես նաև աշխատանքը: Տե՛ս ՀՌԿԿ Հայաստան. (2023). *Համայնքային բազմաչափ աղքատությունը Հայաստանում*. Երևան. վերցվել է՝ https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/MPI-Report-CRRC-Armenia-Jan13-ARM.pdf:

6 Երբ մարդը գիտի կարդալ և գրել, բայց, այնուամենայնիվ, խնդիրներ է ունենում ընթերցանության ընկալման, գրավոր տեղեկության ներկայացման կամ պարզ հաշվարկի հետ, մենք խոսում ենք ֆունկցիոնալ անգրագիտության մասին: Այս իմաստով «ֆունկցիոնալ անգրագիտություն» հասկացությունն արտահայտում է տարրական գրագիտության և հաշվարկման հմտությունների կիրառման հարցում սուբյեկտի գործելու դժվարությունը: Այս տեսակի մարդիկ հաճախ դժվարանում են ընթեռնելի տեքստեր գրելու, ցուցանակները հասկանալու, տեղեկություն արտադրելու, կազմակերպելու և համակարգելու (օրինակ՝ ուսումնական պլան պատրաստելու), ձևաթղթեր լրացնելու, միտք արտահայտող սահուն տեքստ կարդալու և այլնի հետ: Սա նշանակում է, որ անձինք չգիտեն, թե ինչպես օգտագործել գրագիտության և հաշվարկման գործիքները, որոնք արդեն ունեն:

7 Հունվարի 19-ին Ազատ գյուղի կացարանում այրված զինվորների ծնողները, որոնք չեն հավատում հրդեհի մասին շրջանառվող պաշտոնական վարկածին, փետրվարի 20-ի վաղ առավոտյան հավաքվել էին Կառավարության շենքի դիմաց՝ պահանջելով հանդիպում վարչապետի և պաշտպանության նախարարի

հետ: Ծնողները բազում հարցեր էին բարձրացնում, ոմանք էլ ասում. «Իրանք էս 15 երեխու արյունը չեն մարսելու: Էսօր իրանք իրանց երեխեքին գրկել, հանգիստ քնել են: Մենք մեր երեխեքի համար ամբողջ օրը պայքարի մեջ ենք, մեր տեղը չենք գտնում: Մենք 18 տարի էդ երեխեքի հետ ենք եղել: Իրանք մեզ ի՞նչ տվին՝ մոխրացած մարմիններ: Ես մեր բոլոր հայ մայրերին կոչ եմ անում՝ բոլորդ մեկ եղեք ու չթողեք, որ ձեր երեխեքը գնան ծառայելու: Դուք թող մեր օրը չհայտնվեք, ափսոս են մեր երեխեքը»: Տե՛ս www. epress.am. (2023, փետրվար 20). *Երեխաներին բանակ չուղարկեք. այրված զինվորների ծնողները հետաքննություն են արել*. վերցվել է՝ https://epress.am/2023/02/20/parents-of-the-soldiers_-fire-in-vardenis.html:

8 Եթե նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգում երկրի համար կարևոր որոշումներն ընդունվում են հիմնականում նախագահի կողմից, ով ընտրությունների միջոցով բնակչության մեծամասնություն ներկայացնողն է, ապա խորհրդարանական կառավարման համակարգում կարևորագույն որոշումներ ընդունելու ժամանակ խորհրդարանում առկա բոլոր քաղաքական ուժերին մասնակցության հնարավորություն է տրվում: Այսինքն, ըստ էության, նվազագույն քվե ստացած և երկրի բնակչության փոքր հատվածը ներկայացնող քաղաքական ուժերը նույնպես հնարավորություն են ունենում մասնակցելու երկրի համար կարևորագույն որոշումներ ընդունելու գործընթացին: Տե՛ս Parliament.am. (2015). *Սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ*. վերցվել է՝ https://bit.ly/3JxVmGA:

9 Համեմատելով 2017 թ. հերթական, 2018 թ. և 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունները՝ տեսնում ենք, որ 2017 թ. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցել է 9 քաղաքական ուժ՝ 4 դաշինք և 5 կուսակցություն, որից 4 քաղաքական ուժ ձևավորեց յոթերորդ գումարման Ազգային ժողովը: 2018 թ. տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցել է 11 քաղաքական ուժ՝ 2 դաշինք և 9 կուսակցություն, որից էլ ընտրված 3 քաղաքական ուժ ձևավորել է յոթերորդ գումարման Ազգային ժողովը: Իսկ 2021 թ. կայացած արտահերթ խորհրդարա-

նական ընտրություններին մասնակցել է 26 քաղաքական միավոր՝ 4 դաշինք և 22 կուսակցություն, սակայն ութերորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի թիվը մնացել է նույնը՝ 3: Տվյալները վերցվել են www.elections.am կայքից:

10 2022 թ. սեպտեմբերի 22-ին Մայր աթոռ սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել խորհրդակցություն Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի և Հայաստանի ու ԼՂՀ նախկին նախագահներ Լևոն Տեր Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Արկադի Ղուկասյանի և Բակո Սահակյանի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկրի վիճակը, վտանգները և ելքեր փնտրելու անհրաժեշտությունը, նախագահները որոշել են շարունակել քննարկումները: Տե՛ս Լուրեր. (2022). *Հարցազրույց Լևոն Տեր-Պետրոսյանի հետ*. վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=kTeWytVBdVI:

11 «Սուտը քաղաքականության մեջ» 1971 թ. էսսեում Հաննա Արենդտը գրում էր, որ փաստերի հյուսվածքն այնքան նուրբ է, որ այն կարող է քանդվել ցանկացած պահի որևէ առանձին ստի կամ կազմակերպված խմբերի՝ իշխանություն ունեցողների նպատակաուղղված ստերի պատճառով: Այս խմբերը կարող են իրականությունը շղարշել ստի շերտերով, և անընդհատ անհրաժեշտ է կրկնել փաստերը (Arendt, 1972):

12 1997 թ. հոկտեմբերի 1-ի այդ ժամանակի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի նամակը ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին բացահայտում է Ղարաբաղյան կոնֆլիկտի, պատերազմի ու խաղաղության, բանակի, առհասարակ պատմության բարոյականացման՝ անկախության տարիներից սերող քաղաքականությունը, որի ակունքներում կանգնած էր ժամանակի ռազմական վերնախավը:

Այս նամակում պատերազմական հաղթանակը ձևակերպվում է իբրև հազարամյա պատմության միակ ձեռքբերում, իսկ պատերազմի նկատմամբ ատելության սերմանումը ժողովրդական լայն զանգվածների շրջանում, ըստ Սարգսյանի, «հղի է համընդհանուր կործանման վտանգով, բանակի քայքայմամբ»: Սար-

գսյանը շարունակում է. «Մեծագույն թյուրիմացություն է այս պատերազմը «ղարաբաղյան» անվանելը: Սա Ամենայն Հայոց Պատերազմ է: Անկասկած վերջինը: Անկասկած ամենահաջողը մեր պատմության մեջ»:

Ժամանակն, իհարկե, ցույց տվեց, որ «ամենայն հայոց պատերազմ» անվանված Ղարաբաղյան առաջին պատերազմը բնավ վերջինը չէր, ոչ էլ ամենահաջողն էր, եթե առհասարակ հնարավոր է այդ կատեգորիայով դատել պատերազմը: Իր այս նամակում Սարգսյանը երևան է բերում հետագայում գերակա դարձած հայ քաղաքական միտքը, որ ամբողջությամբ միտված էր արդարացնելու և հիմնավորելու փակ սահմաններով ու հաղորդակցություններով տարածաշրջանային գոյատևումը, չէ՞ որ, ինչպես Սարգսյանն է պնդում, «մի ամբողջ սերնդի կյանք ու պատմություն է՝ պսակված տասնյակ հազարավոր զոհերի արյամբ ու հիշողությամբ, հարյուր հազարավոր մարդկանց ճակատագիր ու կյանքի նպատակ», ուրեմն ի՞նչ բարոյական իրավունքով որևէ քաղաքական կամ հանրային գործիչ, մի ամբողջ հասարակություն կհամարձակվի կասկածի տակ դնել պատերազմի նպատակահարմարությունը: Հայ քաղաքական ու ռազմական տիրապետող միտքն ամփոփող այս նամակը գրվել է մի ժամանակ, երբ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը փորձում էր փոխզիջումային տրամաբանությամբ հանգուցալուծել Ղարաբաղյան կոնֆլիկտը, որ կանվանվեր «պարտվողական քաղաքականություն» ռազմական վերնախավի կողմից: Այս նամակին հաջորդեց Տեր-Պետրոսյանի ընդգրկուն «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» ընդգրկուն հոդվածը, որից մեկ տարի անց էլ նա հրաժարական տվեց:

Հետաքրքրական է նաև, որ Վազգեն Սարգսյանի այս նամակը հայաստանյան մեդիան սկսեց ակտիվորեն շրջանառել 2008 թ. նախագահական ընտրություններից առաջ՝ կարծես թե հասարակությանը Տեր-Պետրոսյանի «պարտվողական քաղաքականությունը» հիշեցնելու նպատակադրությամբ: Տե՛ս www. aravot.am. (2008, փետրվար 9). *Վազգեն Սարգսյանի նամակը Լևոն Տեր-Պետրոսյանին*. վերցվել է https://www.aravot.am/2008/02/09/329965/:

13 «Խաղաղություն ամեն գնով» ձևակերպման հեղինակը Թեոդոր Ռուզվելտն է, սակայն այն առավելապես զուգորդվում է հաշտեցման կամ զիջման քաղաքականության հետ, հատկապես՝ Բրիտանիայի վարչապետ Նևիլ Չեմբերլենի և նացիստական Գերմանիայի հանդեպ իր դիվանագիտական մոտեցման համար: Ժամանակ կար, երբ այն օգտագործվում էր դրական լույսի ներքո, բայց դարձավ քննադատության առարկա Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Բրիտանիայի և Ֆրանսիայի՝ Գերմանիային կանգնեցնելու ձախողված փորձից հետո: Այժմ ձևակերպումը հղում է երկչոտ և անհեռատես քաղաքականությանը ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում:

14 Ռուս սոցիոլոգ Գրիգորի Յուդինը, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայի վրա հարձակումից օրեր առաջ կանխատեսել էր լայնամասշտաբ պատերազմի հավանականությունը, ռուս-ուկրաինական պատերազմի տարելիցի առիթով տված հարցազրույցում ասում է, որ պատերազմն այսուհետ ընդմիշտ է. «Այն չունի որևէ նպատակ, որին հասնելուց հետո կարելի էր դադարեցնել [պատերազմը]: Այն շարունակվում է պարզապես, որովհետև [Պուտինի պատկերացմամբ] նրանք թշնամիներ են և ցանկանում են սպանել մեզ, իսկ մենք՝ նրանց: Պուտինի համար սա գոյացական բախում է հակառակորդի հետ, որը մտադիր է ոչնչացնել իրեն: Չպետք է պատրանքներ ունենալ. քանի դեռ Պուտինը Կրեմլում է, պատերազմը չի ավարտվի»: Տե՛ս www.meduza.io. (2023, 24 февраля). «Имперская формула принята официально: Россия нигде не заканчивается». վերցվել է՝ https://meduza.io/feature/2023/02/24/imperskaya-formula-prinyata-ofitsialno-rossiya-nigde-ne-zakanchivaetsya?utm_source=twitter&utm_medium=main.

15 Սերգո Երիցյանի այն հարցին, թե ինչ է արել կառավարությունը աղքատությունը հաղթահարելու և սոցիալական պետություն կառուցելու համար, 1997 թ. սեպտեմբերի 26-ի ասուլիսի ժամանակ Լևոն Տեր-Պետրոսյանը պատասխանում է. «Եկե՛ք պարզ, ոնց որ հարևանը հարևանի հետ, կամ ընկերն ընկերոջ հետ, նստենք խոսենք, հասկանանք մեր վիճակը: Ի՞նչ ենք մենք ուզում: Եթե դուք կարծում եք, որ այս պայմաններում՝ Ղարաբաղի

հարցի չլուծվածության և առաջին հերթին՝ շրջափակումների առկայության պայմաններում, Հայաստանը կարող է դառնալ նորմալ երկիր, Հայաստանի ժողովուրդը կարող է ապրել այնպես, ինչպես Եվրոպայի ժողովուրդներն են ապրում, դա նշանակում է՝ դուք Խորենացի չեք կարդացել: Չի լինելու, «Սերգո ջան, դու լավ չես ապրելու, քանի դեռ Ղարաբաղի հարցը կա»: Տե՛ս Աթանեսյան, Վ. (2022, հուլիս 9). Իսկ Արցախը Հայաստան է. *aliqmedia.am.* վերցվել է՝ https://www.aliqmedia.am/2022/07/09/71857/:

16 Նեղիմաստով տարածաշրջան ասելով՝ մենք՝ իբրև հետազոտողներ, նկատի ունենք Հարավային Կովկասը՝ էթնիկական, լեզվաբանական, կրոնական և աշխարհագրական բազմազանությամբ, ինչպես նաև պատմականորեն բռնի կոնֆլիկտներով, պատերազմներով և հանրային-քաղաքական տրավմաներով հարուստ քաղաքական սուբյեկտը, որ միավորում է Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին: Չնայած պատմականորեն բարդ և կոնֆլիկտային հարաբերություններին՝ երեք պետությունները սկզբում Ռուսական կայսրության, այնուհետև՝ Խորհրդային Միության մաս լինելու համատեղ պատմություն ունեն: Սակայն լայն իմաստով տարածաշրջան ասելով՝ մենք նկատի ունենք նաև հարավում և արևմուտքում Հայաստանին սահմանակից Իրանին և Թուրքիային, որոնց հետ հարաբերությունները ևս ունեն պատմական առանձնահատկություններ և բարդություններ:

Հետազոտության ժամանակ մենք չենք ուղղորդել մարդկանց մեր պատկերացումներով, խնդրել ենք նկարագրել և պատկերել տարածաշրջանն այնպես, ինչպես իրենք են պատկերացնում:

Չենք կարող չնշել, որ Հարավային Կովկասը, իբրև ձևակերպում և աշխարհաքաղաքական տարածաշրջան, ռուսական գաղութատիրության և ծավալապաշտական քաղաքականության նախագիծ է, որ սկիզբ է առել դեռևս 18-րդ դարում: Հատկապես հայաստանյան հանրային-քաղաքական և պատմական մտածողության մեջ մուսուլման նվաճողներից՝ Պարսկաստանից և Օսմանյան կայսրությունից «ազատագրման» դիսկուրսը խորապես կապված է Ռուսական կայսրության, Ռուսաստանի ազդեցության ինդոկտրինացիայի և հիշողության քաղաքականությունների հետ:

17 Չնայած Հայաստանի և Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը և ցամաքային սահմանների՝ տարիներ շարունակ փակ լինելուն՝ 1980-ականներից կանոնավոր կերպով իրականացվել են Երևան-Ստամբուլ-Երևան թռիչքները «Հայկական ավիաուղիներ» ընկերության կողմից: Ցամաքային սահմանով 1992 թ. սեպտեմբերին Թուրքիայից Հայաստան է բերվել 58 հազար տոննա հացահատիկ: Սրան զուգահեռ՝ 1992-1993 թթ. հայ և թուրք դիվանագետները աշխատում էին հայ-թուրքական հարաբերությունները կարգավորող արձանագրության վրա, սակայն արձանագրությունը կիսատ մնաց այն բանից հետո, երբ 1993 թ. հայկական ուժերը ներխուժեցին Քելբաջար, որին ի պատասխան Թուրքիան փակեց Հայաստանի հետ երկու սահմանները, չեղարկվեցին նաև չվերթերը: Տե՛ս Հովհաննիսյան, Հ. (2022, փետրվար 4). *Թուրքիա-Հայաստան չվերթների պատմությունը. ե՞րբ է եղել առաջին թռիչքը*. civilnet.am. վերցվել է՝ https://cutt.ly/X85Qfpf, Հակոբյան, թ. (2017, հուլիս, 10). *Հայաստան-Թուրքիա՝ հարյուրամյա դիվանագիտական հարաբերություններ*. civilnet. am. վերցվել է՝ https://cutt.ly/n85QOrt: